

Ժաննա Հակոբյան

ՉՍՊԻԱՑՈՂ
ՀՈԳԻՆԵՐԻ ՑԱԿԸ

Վեպ



ԵՐԵՎԱՆ  «ՎՄՎ-ՊՐԻՆՏ»
2016

ՀՏԴ 821. 19-31Հակոբյան
ԳՄԴ 84(5Հ)-44
Հ 177

**Գիրքը նվիրված է հայոց բանակի ստեղծման,
Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի անկախության
ստեղծման 25- ամյակին**

Հակոբյան Ժաննա
Հ 177 ՉՍՊԻԱՑՈՂ ՀՈԳԻՆԵՐԻ ՑԱՎԸ: Վեպ/ Ժ. Հակոբյան.-
Եր.: ՎՄՎ-ՊՐԻՆՏ, 2016.- 128 էջ:

Վեպը Արցախյան պատերազմում հաղթանակած անկախ Հայաստանի ծանր տարիների մասին է: Գրքում գործող հերոսների մի մասը զինվորական հարուստ կենսագրություն ունեցող ազատամարտիկներ են, ովքեր կռվել են հերոս հրամանատարների՝ Մոնթե Մելքոնյանի, Լեոնիդ Ազգալոյանի, Վլադիմիր Բալայանի գլխավորությամբ: Ընթերցողը ցավով ականատեսն է դառնում պատերազմի հետևանքով խեղված ճակատագրերի: Հայրենանվեր այդ մարտիկները պատերազմից հետո չեն հանդուրժում տնտեսական-սոցիալական այն ծանր պայմանները, որոնց մեջ հայտնվել էր հայ ժողովուրդը՝ բռնելով նաև գաղթի ճանապարհը:

Վեպում հանդես եկող կերպարների մյուս մասը արվեստագետներ են կամ սովորական մարդիկ, ովքեր պատերազմի արհավիրքները զգացել են թիկունքում՝ դիմակայելով սովին, ցրտին, խավարին: Եվ բոլորն ապրում էին այն սևեռուն գաղափարով, որ հայ ժողովրդի մղած կռիվն արդար է: Բացառապես իրական փաստերի հիման վրա ստեղծված գեղարվեստական այս գիրքը լավագույն օրինակ կարող է ծառայել իրենց հայրերի ու պապերի գործը շարունակող այն երիտասարդների համար, ուն համար թանկ է ինչպես Հայաստանի, այնպես էլ Արցախի անկախության գաղափարը:

ՀՏԴ 821. 19-31Հակոբյան
ԳՄԴ 84(5Հ)-44

ISBN 978-9939-60-349-0

© Հակոբյան Ժ., 2016

Աշխարհում ոչինչ այնպես չի կարող զգաստացնել մարդուն, ինչպես մահը, որը մշտապես նրա ուղեկիցն է: Շրջանցել մահին ոչ ոք չի կարող: Մուշեղը մտածեց՝ գուցե հանդիպումը մահվան հետ դա անիմանալի, բայց ոչ սարսափելի դարպասների մուտքն է, ուր մարդ ոտք է դնում: Չէ՞ որ ռազմի դաշտում ինքն անվերջ տեսել է նրա դեմքը: Սակայն պատերազմի ժամանակ կռվողների համար սովորական երևույթ է մահվան աչքերին նայելը: Այնինչ խաղաղ օրերում մահը դառնում է ատելի, երբ խլում է երիտասարդների կյանքը:

Մուշեղը մռայլ ու հարբած թաղումից տուն վերադարձավ: Ավտովթարից մահացել էին իր մտերիմ ընկերոջ երկու որդիները: Մի տարի առաջ էլ նրանցից կրտսերը ավտովթարի էր ենթարկվել, սակայն ընդամենը ջարդվել էին կողերը, և մեքենան էր վնասվել: Հայրն ինչքան փորձեց արգելել, որ մեքենան այլևս չվարեր, չստացվեց: Նույն կերպ էլ չհաջողվեց եղբայրներին բուժման ուղարկել: Եվ նրանք կարծես գիտակցաբար հայտնվեցին մահվան երախտում: Մահացածների հայացքներն այնքան խաղաղ էին, կարծես թե գոհ էին և՛ ապրած կյանքից, և՛ իրենց արված գործերից: Եթե միայն այդպե՛ս ապրեր մարդը՝ խաղաղ, ինքնավստահ ու երջանիկ: Մուշեղը մի պահ մտածեց, որ նույնը հնարավոր էր իր հետ պատահեր, քանի որ հարբած վիճակում հաճախ էր մեքենա վարում՝ ամենևին չզգալով մեքենայի արագությունը: Թերևս առանց մեքենա վարելու էլ, նա հաճախ անկառավարելի էր դառնում: Մի՞թե ցավ չի պատճառել թե՛ Անայիսին, թե՛ եղբորը՝ Մամիկոնին: Իսկ եթե իր բռնությունների պատճառով նրանցից որևէ մեկին մահվան դուռ հասցներ, այն ժամանակ իրեն պիտի հուսադեր՞ր, որ դագաղի ու թաղման ծախսերը ինքն է հոգացել: Ինչ խոսք, որ նա սխալ էր ապրում: Անայիսին չէր

համարձակվում զանգեւ: Խուսափում էր գծովելուց: Այնինչ եղբոր հետ սովորականի պես շփվում էր: Մամիկոնը միշտ էլ ներողամիտ է գտնվել իր հանդեպ, թեկուզ իր պատճառով կիսով չափ հաշմանդամ էր դարձել: Ախր ինքը եթե ամեն օր գոնե կես շիշ ալկոհոլային խմիչք չօգտագործեր, չի ստացվի: Գլխուղեղում հավիտյան դրոշմված պատերազմի արհավիրքների մասին հուշերն իրեն հանգիստ չէին տալիս: Ամենօրյա ծանր երազները հոգեմաշ էին արել մարմինը: Ոչ ոք իր կամայականությունները չէր տանում, այդ թվում նաև իրենից բաժանված կինը, որից երկու զավակ ունի: Նա հիմա բոլորովին մեռնակ է ապրում: Նրանց հետ դժվարանում էր շփվել, մեռության մեջ էլ իր տեղը չէր գտնում: Ինքն իրենից ոչինչ չէր հասկանում: Գուցե՞ Անայիսի կարիքն ավելի էր զգում, քան իր հարազատներից որևէ մեկինը, բայց նրան էլ քշեց իր կյանքից: Այնինչ Անայիսն ուրիշների համեմատ հանդուրժող էր: Մուշեղն ասում էր գիշերները նրա համար, որովհետև քնելուց սարսափելի երազներ էր տեսնում: Մերթընդներթ նույնիսկ մտածում էր, թե ավելի լավ կլիներ իր ռազմի ընկերների հետ ընդմիշտ հեռանար կյանքից: Թե չէ խաղաղ պայմաններում ինքը հոգեկան խաղաղություն չէր գտնում: Սթափ վիճակում անասելի դժվար էր այդ հիշողություններից փախչելը, հետևաբար, դժվար էր նաև գոյատևելը: Ներքուստ զգում էր, որ չափազանց շատ է փոխվել: Նա այլևս նախկինը չի լինի: Մուշեղը չէր հաշտվում աշխարհի հետ, իր հետ: Ինչ էլ որ անում էր, միևնույն էր, իրեն հոգեպես բավարարված չէր զգում: Չարությունը, որ նրան պետք էր թշնամու դեմ կռվելիս, շարունակում էր ապրել իր մեջ: Սակայն այն ժամանակ իրավիճակն ուրիշ էր: Չրաման էին տալիս անպայման ոչնչացնել հակառակորդին, ինչ զնով լիներ: Ձինվորն իր կյանքը պիտի ազատեր: Սպանությունն այս պարագայում սեփական գոյության համար պայքարն էր: Նրա աչքը ինքնըստինքյան սովորում էր արյուն հեղելուն, դիակներին, ահարկու տեսարաններին: Ձինվորը ոչ միայն տեսնում է մահվան դեմքը, այլև ամեն ակնթարթ՝ խաղուն նրա հետ: Պատերազմելիս բոլորն են վայրենի դառնում: Այստեղ մարդկային օրենքները չեն գործում: Եվ ով անցել է պատերազմի դժոխքի միջով, շարունակում է լինել այնպիսին, ինչպես պատերազմի ժամանակ էր: Այսպի-

սով, անցյալը նրանից չէր բաժանվում, քանի որ անվերջ հիշում էր այն ցնցող տեսարանները, որոնք տեսել էր սեփական աչքերով: Հաճախ հիշողության մեջ բռնկվում են անցյալում վերապրած սարսափելի, տհաճ սցենարներ: Ուղղաթիռի կամ ինքնաթիռի ծայները հիվանդագին է ընդունում, որովհետև թվում է, թե թշնամու ռմբակոծիչներն են մոտենում: Պատերազմի դաշտը սեպի պես խրվել էր նրա ուղեղում: Մուշեղն արդեն որերորդ անգամ հիշեց թշնամու կատարած բարբարոսություններից մեկը: Այնպես պատահեց, երբ թուրքերը գրավեցին Մարտակերտի շրջանի գյուղերից մի քանիսը: Հասկանալի էր, որ ավերեցին, հրդեհեցին ոչ միայն նրանց տներն ու գոմերը, այլև դաժանաբար հաշվեհարդար տեսան այն բնակիչների հետ, ովքեր չհասցրին փախչել: Անշուշտ, հայ զիվորներին քաջ հրամանատարների ղեկավարությամբ հաջողվեց ետ վերցնել կրկին հայկական գյուղերը: Նա հիշեց այդ հրամանատարներից ԼԴՀ «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանակիր Վլադիմիր Բալայանին, ով դասվում է այն հերոսների շարքը, ինչպիսիք են Լեոնիդ Ազգալոյանը, Աշոտ Դուլյանը (Բոկորը), Դուշման Վարդանը, ովքեր երազում էին ազատագրել նաև Արևմտյան Հայաստանի հողերը: Ժողովուրդը Վլադիմիրին անվանեց «մեր նորօրյա Անդրանիկ»: Երբ թշնամիները մտել էին Մարաղա (այն ենթարկվել էր կոտորածի), Վլադիմիրն իր ջոկատով՝ առանց կորուստների, ազատագրեց գյուղը: Նրա ջոկատը «շտապ օգնության» ջոկատ էր: Եթե իր ժամանակին Գևորգ Մարգալետունին թշնամուն հաղթում էր իր 20 հոգուց բաղկացած քաջերով, նույնն անում էր Վլադիմիրը՝ իր 30 հոգանոց ջոկատով: Մարտակերտի լեգենդ դարձած Վլադիմիրը գոհվեց 1992-ի հունիսի 9-ին Չայլուի պաշտպանական դիրքերում՝ արկի պայթուցից: «Ազատագրական բանակի» գլխավոր հրամանատարը՝ Լեոնիդ Ազգալոյանը, որը Վլադիմիրի ընկերներից էր, նույնպես հերոսի մահով ընկավ Վլադիմիրի մահից 15 օր անց:

Մուշեղը կռվում էր նրանց ջոկատներում և հայկական գյուղերը կրկին գրավելուց հետո իր ռազմի ընկերների հետ օրերից մի օր ականատես եղան սահմնվեցուցիչ մի տեսարանի: Դեպքը Մարաղայում էր: Կիսավեր տան շենին ճերմակ մազերով տղամարդն իրենց

ներս տարավ: Ննջասենյակում անկողնու վրայից քաշեց շորը, որի տակ անգլուխ երեսնիվայր փռած էին խոշտանգված երկու դիակներ՝ իր կնոջ և աղջկա: Թշնամիները սկզբում բռնաբարել էին նրանց, տանջել, հետո՝ սպանել՝ կտրելով գլուխները: «Այս ամենից հետո ես ինչպե՞ս ապրեմ», - ասել էր իր քանդված տան միակ կենդանի մնացած տղամարդը: Մուշեղի ընկերը նրա վրիժառության ծարավը հագեցնելու համար վաթսուցին մոտ տղամարդուն մեկնել էր մի տոպրակ, որտեղ սպանված թուրքերի տասնյակ ականջներ ու քթեր էին: Պատերազմի ընթացքում բազմաթիվ դաժան դրվագների էր ինքն ականատես եղել, բայց այդ դեպքը հիշողությունից ջնջել չէր լինում: Մուշեղը ծանր մտքերով տարված՝ քնով անցավ: Այս անգամ երազի մեջ թվաց, թե բնակարանը լիքն էին օձերով ու ինքը ոչ մի կերպ չէր կարող ազատվել նրանցից: Եվ այն պահին, երբ աջ ու ձախ կողմերից իրեն մոտեցան երկու հսկայական օձ ու փաթաթվեցին պարանոցին՝ խեղդելու, քրտինքի մեջ կորած նա հանկարծ արթնացավ ու տեղաշարուն՝ մթության մեջ սարսռաց վախից: Շոշափելով կողքի կողապահարանը՝ նա ձեռքը տարավ ծխախոտի տուփին: Ախր այդ նույն օձերն իրեն մի անգամ փրկել են մահից, ինչո՞ւ երազում փորձեցին սարսափ առաջացնել իր շուրջը: Թերևս տվյալ դեպքում դժվար էր որևէ բացատրություն գտնելը: Հիշեց, թե ինչպես կռվի տարիներին, երբ մեկ-մեկ իրենց զորամասի ավտոմեքենան վարելիս նկատել էր, որ ջրի բաքը ծակվել էր ու կաթիլ-կաթիլ ջուր էր հոսում: Երբ կանգնեցնելով մեքենան, փորձեց ստուգել այն, տեսավ, որ այդ ծակված տեղից մի խոշոր օձ էր կպել ու ջուր էր խմում: Նա ոչինչ չարեց ոչ միայն այդ ժամանակ, այլև առհասարակ ջրի բաքը չփոխեց: Սակայն օրերից մի օր էլ, երբ հրամանատարի հանձնարությունը կատարել և ցանկանում էր զորամաս վերադառնալ նույն ավտոմեքենայով, չկարողացավ վախից շարժիչը միացնել: Օձերը փակել էին իր ճանապարհը: Նրանց թիվն այնքան մեծ էր, որ ուղղակի անհմաստ էր տեղից շարժվելը: Մուշեղը ստիպված էր սպասել: Միայն ճամփան ազատվելուց հետո նա ուշացած տեղ հասավ: Պարզվեց, որ թուրքերը անսպասելի հարձակման էին անցել իրենց զորամասի վրա և ծանր մարտերի արդյունքում ահագին զոհեր էին ունեցել: Այսինքն՝

օձերը կանխազգացել էին այդ և փրկել էին իր կյանքը, գուցե զգալով, որ Մուշեղն էլ կզոհվեր: Նրա մատուցած ծառայությունը գնահատվել էր: Այնինչ հիմա երբ զայրույթով մտածում էր մահվան մասին, օձերը նրան երազում հայտնվում էին: Մուշեղը նաև քանիեորոդ անգամ մտածեց, որ պետք է մեկն իրեն համոզեր բուժվելու: Ու այդ մեկը անկասկած Անայիսն էր:

Կեսգիշեր էր, երբ դուռը կամաց ծեծեցին: Մուշեղը մի պահ սթափվեց մտքերից: Նա արագ բացեց դուռը: Կողքի հարևանն էր՝ Միքայելը: Նա նույնպես պատերազմի մասնակիցներից էր: Օմարի լեռնանցքում ցրտահարվել էին ոտքերը: Այժմ հաշմանդամ էր, ապրում էր որդու և կնոջ հետ:

-Կներե՛ս, որ քունդ խանգարեցի: Ստածեցի, գուցե մի հատիկ ծխախոտ կունենաս:

-Քնած չէի, ներս արի՛, կզրուցենք,- առաջարկեց Մուշեղը:

-Մենա՞կ ես, թե՞...

-Առաջ անցի՛ր, եթե հրավիրում եմ:

Միքայելը հենակներով զգուշությամբ ներս մտավ: Սենյակում խավար էր: Մուշեղը վառեց լամպը, և հարևանը կարողացավ տեղավորվել մոտիկ բազկաթոռին: Տանտերը նրան մեկնեց ծխախոտի տուփը մոխրամանի հետ, այնուհետև քայլերն ուղղեց խոհանոցի կողմը: Այնտեղից վերադարձավ օղու շիշը ձեռքին: Երկրորդ անգամ բացակայեց՝ թթու կաղամբ և վարունգ բերելու: Իսկ բաժակները սենյակի պահարանում էին

-Քեզ Աստված ինձ մոտ ուղարկեց, որ չխելագարվեմ,- անկեղծորեն խոստովանեց Մուշեղը՝ ծխախոտը վառելով:

Հարևանը հասկացավ, որ նա ծայրաստիճան գրգռված վիճակում էր: Մուշեղն ինչ-որ մեկի հետ հաղորդակցվել էր ուզում: Նա անխոս լցրեց բաժակները՝ սեղանը մոտեցնելով Միքայելին:

-Պատերազմի մղձավանջային պատկերներն ինձ հանգիստ չեն տալիս: Չգիտեմ՝ ինչպես ազատվել այդ ամենից: Իսկ ավելի հաճախ ցանկություն է առաջանում ինձ մոտ, նորից հայտնվել կռվի դաշտում, որպեսզի մինչև վերջ վրեժս լուծեմ նահատակված ընկերներիս համար: Միայն դու կարող ես հասկանալ իմ հոգեկան վիճակը,- և բա-

ժակը մոտեցնելով դիմացինի բաժակին՝ օղին միանգամից կուլ տվեց:

Միքայելը նույնպես մինչև վերջ դատարկեց բաժակը:

-Ախր ինքդ էլ լավ ես հասկանում, որ աշխարհում ոչ մի պատերազմ առանց զոհերի չի լինում: Հնարավոր է, որ մենք էլ ողջ չլինեինք: Մի՞թե մոռացել ես, որ ամեն ակնթարթ մեզանից յուրաքանչ-յուրը մահվան երախում էր հայտնվում:

-Ոչինչ չեմ մոռացել, բայց ավելի լավ կլիներ մենք էլ չլինեինք, սակայն վերջին թուրքը ոչնչացված լիներ:

-Իսկ մեր ազատագրված տարածքներ՞րը: Թե՞ պիտի մինչև Բաքու հասնեինք:

-Իհարկե, պիտի հասնեինք, որ նրանք հետո նորից գլուխ չբարձրացնեն: Ուզում եմ, որ մեր որդիները խաղաղ ապրեն,- Մուշեղը նորից լցրեց բաժակները:

-Նրանք երբեք էլ հանգիստ չեն ապրի, որովհետև ճակատագրի դաժան բերումով թուրքերը մեր մշտական հարևաններն են: Հետևաբար, կռիվներն անխուսափելի են:

Մուշեղը կողապահարանից հանեց լուսանկարչական ալբոմը և թերթեց այն: Նա նորից կարոտով նայեց իրենց մարտական ջոկատի ընկերների լուսանկարներին, ու աչքերից արցունքներ հոսեցին: Հետո մոտենալով Միքայելին՝ արդեն քանիեորդ անգամ մեկ առ մեկ հիշեց նրանցից յուրաքանչյուրին:

-Տեսնու՞մ ես Օնիկին: Նա արծիվ տղաներից էր: Դու միայն իմանայիր, թե ինչքա՜ն հերոսություններ է արել: Վերջում գերի ընկավ: Թուրքերը նրա երիկամների մեջ բենզին էին սրսկել ու տանջամահ արել: Սարգիսն էլ գերի ընկավ: Նրա ականջները թուրքերը կտրեցին, բայց մերոնց հաջողվեց ազատել նրան: Վահանը զոհվեց ականի պայթյունից: Արմենը անհայտ կորածների մեջ է:

-Մուշեղ, ես խոնարհվում եմ նրանց հիշատակի առաջ, բայց մենք պետք է շարունակենք ապրել: Ըստ իս, հայն աշխարհի ամենատոկուն, ամենաքաջարի ազգերից է: Մենք միշտ կապրենք:

-Բայց մեր ժողովրդի կյանքն աստիճանաբար պիտի բարելավվի, թե չէ ու՞մ եմ պետք հազարավոր զոհերը:

-Պատերազմներին հաջորդում է ժանր մի շրջան, որ միասին պիտի հաղթահարենք:

-Բայց Արցախում էին մարտեր մղվում, այնինչ Հայաստանում այնպիսի խավար է, ասես թուրքերն են մեր էլեկտրական հոսանքն անջատել: Մեր իշխանություններն ամեն ինչ կապում են պատերազմի հետ, այնինչ իրականում այդպես չէ: Արցախում մարդիկ ռմբակոծությունների պատճառով նկուղներում էին մնում, իսկ մեր բնակարաններն առանց ռմբակոծությունների խոնավ նկուղների են վերածվել: Մարդիկ հեռանում են Հայաստանից: Եթե շատերը հեռանան, ու՞մ պիտի թողնենք մեր երկիրը:

-Գուցե պետք չէ հուսահատվել: Եթե պայքարել ենք արտաքին թշնամու դեմ, ինչու՞ չպայքարենք ներքին թշնամիների դեմ,- նա վերցնելով իր կիթառը՝ կոշտ մատները մի պահ սահեցրեց լարերի վրայով ու կամաց ձայնով երգեց Գ. Սարյանի «Մարտիկի երգը», որը հետո հեղինակը վերանվանեց «Կարոտ»:

Թռչեի մտքով տուն
Ուր իմ մայրն է արթուն
Սպասում իր որդուն,
Անհանգիստ ու անքուն:
Տեսնեի այն առուն,
Որ ամեն մի գարուն
Ջրերով զարդարուն
Կարկաչում է սարերում:
Թեքվեի աղբյուրին,
Կարոտած պաղ ջրին,
Նրա զով համբույրին
Ու թովիչ մատուռին:

Հետո Մուշեղը մի կողմ դրեց կիթառը ու ծխեց: Անսպասելի թախիծ թառեց նրանց հայացքներում: Երգը վերստին հիշեցրեց արցախյան պատերազմը ու նրա նահատակներին: Չէ՞ որ այդ երգը պատերազմի տարիներին խրամատներում հնչեցված ամենասիրված երգերից էր:

-Ես գնամ, իսկ դու պառկի՛ր ու հանգստացի՛ր,- առաջարկեց Միքայելը:

-Իսկ վերջին բաժակը չխմե՞մք:

-Խմենք մեր ազգի դիմացկունության համար: Յուսանք, որ ամեն ինչ լավ կլինի,- Միքայելը չկարողացավ մերժել Մուշեղին: Վերջին բաժակ օդին դատարկելով՝ նա հենակները վերցրեց ու բարի գիշեր մաղթելով հյուրընկալ տանտիրոջը՝ հեռացավ:

Մուշեղը հանգցնելով լամպը՝ շորերով փռվեց տեղաշորին: Միքայելի հետ ունեցած զրույցից կարծես փոքրիշատե խաղաղվել էր այն ծովի պես, որին ժամանակավորապես լքում է խելագար մրրիկն ու ծովային քամիները:

Մուշեղը շատ վշտացավ, երբ իմացավ, որ Եգորը գտնվում էր հոգեբուժարանում: Պատերազմի ընթացքում նա վիրավորվել էր գլխից, պառկել դաշտային հոսպիտալում, բայց բեկորներից մեկն այդպես էլ չէին հանել: Բժիշկները վախեցել էին, որ այն հանելուց ուղեղը կարող էր վնասվել: Նա հաճախ բողոքում էր ու տառապում գլխացավերից: Հավանաբար նրա վիճակը կտրուկ վատացել էր, որ հարազատները ստիպված էին տեղափոխել հիվանդանոց: Մուշեղն առանց ժամանակ կորցնելու անհանգիստ հասավ ընկերոջ մոտ: Եգորը հիվանդասենյակում չէր: Բուժքույրը հայտնեց, որ նա զբոսնում է հիվանդանոցի այգում: Ձեռքի պայուսակը թողնելով նրա կողապահարանին՝ Մուշեղը միանգամից դուրս եկավ շենքից՝ միջանցքներում անիմաստ թափառող մարդկանց անհաղորդ ու խեղճ հայացքների ուղեկցությամբ: Ու քանի որ այգում զբոսնողների թիվն այդքան էլ շատ չէր, նա հեռվից նկատեց ընկերոջը, որը նստած էր ծառի տակ ընկած նստարանին: Տեսնելով նրան՝ Եգորը տխուր ժպտաց: Մուշեղը պինդ փաթաթվեց ընկերոջը՝ մի քանի վայրկյան գլուխը հենած պահելով նրա ուսին:

-Դու ինձ խղճում ես, չէ՞: Չէի՞ր սպասում, որ վերջս այստեղ պիտի լինի,- դառնացած հարցրեց ռազմի ընկերը:- Միայն իմացի՛ր, որ ավելի լավ է խելառ լինել, քան նորմալ մարդ:

Սուշեղը հանկարծ հիշեց, թե ինչպես էր Եգորը ցավից արյունոտ գլուխը թափահարում: Նա վիրավորվել էր իրենց մոտ ընկած ակա-
նի պայթյունից: Հենց ինքը նրան գրկած մի կերպ հասցրեց բուժկետ՝
սանիտարական պատգարակին դնելով:

-Դու քեզ հետ զենք չե՞ս բերել:

-Ինչի՞դ է պետք զենքը,- հանկարծակիի եկավ Սուշեղը:

-Կուզենայի վերջ տալ իմ կյանքին: Ու՞մ է պետք հիվանդ տղա-
մարդը:

-Եգոր՛ր, մտածու՞մ ես, թե ինչ ես խոսում:

-Ցնորվածները չեն մտածում:

-Ես քեզ չեմ հավատում: Հիշի՛ր, դու միշտ բոլորից ուժեղ էիր:

-Դա առաջ էր... Պատերազմն ավերեց ամեն ինչ: Հավատա՛,
կյանքն ավելի դաժան է, քան ցանկացած լաբորատոր փորձարկում:
Դու հասկանու՞մ ես, իմ ուղեղում անվերջ աղմուկ է, զնդացրային
աղմուկ: Ինձ թվում է, հիվանդանոցի միջանցքներում թուրքեր են թա-
փառում, բայց ես նրանց չեմ կարողանում սպանել:

Սուշեղը հուզմունքից զրպանից հանեց ծխախոտը և մի հատիկ
վառեց: Ընկերոջ խոսքերից տակնուվրա էր եղել հոգին, նորից իր մեջ
գլուխ էր բարձրացրել վրեժխնդրությունը, արյան ծարավը:

-Այդպիսի բան չկա: Դու շփոթվել ես իրականության և անցյալի
պատկերների մեջ:

-Իմ ուղեղում ջնջվել է այդ սահմանը: Իմ աչքերի առաջ միմիայն
նրանք են թրև գալիս: Փորձում են սպանել ինձ, բայց չեն կարող: Ես
նույնիսկ վազում եմ նրանց հետևից, սակայն չեմ հասնում: Դա ինձ
ավելի է կատաղեցնում: Հիշու՞մ ես, թե ինչպես էինք սպանում թուր-
քերին: Իսկ ինչու՞ էինք սպանում, ոչնչացնում, կպատասխանե՞ս:

Սուշեղը ցավով նկատեց, թե ինչպես էր ընկերը մի շնչում անվերջ
ընդգծում «սպանել» բառը և այնպիսի հաճույքով էր արտասանում,
ասես նրա համար այն աշխարհում ամենասիրած արտահատուկ-
յունն էր:

-Մեզ մոտ ինքնապաշտպանական ինստինկտն էր առաջ մղվում:
Եթե հակառակորդին չոչնչացնեի՞նք, նա մեզ կսպաներ:

-Դրա համար ասում էինք, «մենք պաշտպանվում ենք», «ազատագրում ենք մեր հայրենիքը», «ինքնապաշտպանական բանակ»:

Եզորը քննադատեց: Նա խոսում էր միապաղաղ, կամաց, ձեռքերի մատները շարժելով, հայացքը փախցնելով: Մուշեղի համար ծանր էր տեսնել ընկերոջ անառողջ շարժումներն ու ձղաձիգ պահվածքը: Հոգու խորքում նա մտածեց, որ ինքն անքան էլ չէր տարբերվում նրանից և որ ռազմական ուղին անցած մարդկանց ճակատագրերը շատ նման են իրար:

-Այո՛, այդպես էր... Թշնամին մարդ չէ և նրա հանդեպ չպետք է գուք շարժել: Մենք պարտավոր էինք վրեժխնդիր լինել մեր հայրերի, ընկերների, եղբայրների, սիրած կանանց, մայրերի, մեր ժողովրդի համար:

Եզորն անընդհատ խոսում էր անցյալ ժամանակով: Մուշեղի այն հարցին, թե ինչու էր անվերջ անցյալով խոսում, ընկերը պատասխանեց.

-Իմ մեջ ամեն ինչ անցյալում է:

Մուշեղը դառնությամբ հասկացավ, որ լիովին կիսում է նրա մտքերը: Այդ պատճառով չփորձեց զուր ջանքեր գործադրել ընկերոջը հակառակն ապացուցելու համար: Ինքն էլ նրա պես իդեալականացնում էր անվերադարձ կորսված անցյալը, կորցրած տեղն ու ժամանակը: Տառապանքներից ստացած վերքերի էությունը կայանում է նրանում, որ այն կարծես կանգնեցնում է իր բոլոր զոհերի ժամանակը: Նրա հաղթահարումը՝ դա ժամանակի վազքի նորացումն է: Պատերազմը լցրել էր իրենց գիտակցության բոլոր բաց տեղերը, ձևավորելով իրենց ճաշակն ու հետաքրքրությունները:

-Բայց պատերազմում մենք մոռանում էինք մեր անցյալը, որ հեշտ լինել կռվելը: Ներկան մեզ համար դառնում էր արյան վրեժ: Ամեն ակնթաթ կարծես պահմտոցի էինք խաղում մահվան հետ,- զայրույթից արյունով լցվեցին Մուշեղի աչքերը:

-Վերջապես դու համաձայնվեցիր ինձ հետ: Ինչու՞ չես շեշտում, որ պատերազմը մեր ուղեղից մի հարվածով ջնջեց մեր երազանքները: Հիմա ցանկություն չունեն որևէ բանի մասին մտածելու: Ես ատում եմ

պատերազմը, թշնամուն և ինձ,- եգորը դանդաղ վեր կացավ տեղից՝ մոտենալու համար այգուն հոսող ջրի ծորակին:

Մուշեղը նկատեց, որ ընկերոջ նստատեղում ինչ-որ տետր կար: Նա ձեռքը մեկնեց՝ վերցնելով այն, հետաքրքրասիրությամբ արագ թերթելով էջերը: Պատերազմական տարիների օրագիրն էր: Իսկույն հիշեց, որ եգորը մերթընդմերթ գրառումներ էր անում այդ օրերի մասին: Օրագրի թերթերը մաշված էին, խուճացած, արյան չորացած հետքերով: Մուշեղն անգամ նրանից խոնավ խրամատների ու իրենց կողքին հաճախակի հայտնվող առնետների հոտը զգաց: Մի քանի վայրկյան անց օրագրի տերը մոտեցավ իրեն:

-Ների՛ր, որ առանց քեզ ասելու բացեցի տետրդ,- ներողամտորեն ժպտաց նա:

-Վերցրու այն, քեզ եմ նվիրում: Օրագիրը խանգարում է ինձ կարգին կազդուրվել:

-Ես այն ընթերցելուց հետո սրբությամբ կպահեմ,- Մուշեղը տետրը ջերմորեն իր կրծքին սեղմեց:

-Շատ չտարվես հուշերով, որ դու էլ իմ օրը չընկնես:

-Մի՛ մտածիր, մենք վաղուց անբուժելի հիվանդներ ենք:

Մուշեղը խխուր բաժանվեց ընկերոջից՝ խոստանալով մի քանի օրից նորից այցելել: Դուրս գալով հիվանդանոցից՝ նա մի տաք սի վարձեց: Ամբողջ ճանապարհին մտածում էր շուտ հասնել տուն, որպեսզի հանգիստ կարդար ռազմի ընկերոջ օրագիրը: Հանգիստ բացելով բարը՝ այնտեղից օղի հանեց, լցրեց բաժակը ու նստելով բազկաթոռին՝ շնչասպառ ձեռքն առավ օրագիրն ու սկսեց կարդալ: Օրագիրը գրված էր ընդհատումներով:

23 ապրիլի 1992 թիվ

Թուրքերը որտեղով անցել են, ապականել են: Եվ մեր տղաները երբեմն միամիտ անցնում են այդ տեղերով: Միայն պետք է տեսնել, թե ինչպես են ականները պայթելուց նրանք դառնում մսի սովորական կտորներ: Թուրքերի դեմ նորից գրոհեցինք: Նույն տեղում թշնամու դիակներ կային, մի մասը կապտած ու սևացած դեմքերով:

25 ապրիլի 1992 թիվ

Այսօր երկու տանկ ենք կորցրել ականներով լցված դաշտում: Սակայն մենք իսկական դժոխք սարքեցինք հակառակորդի գլխին: Մենք մեզ հիանալի էինք զգում: Թեկուզ պիտի խոստովանեմ, որ մեր շուրջը թռչող մարդկային մարմնի մասերից հնարավոր չէր հաճույք ստանալ: Գակատամարտից հետո, գիշերը որոշեցի ննջել: Մտքերս ինձ հանգիստ չէին թողնում: Ես կյանքում այդքան արյուն չէի տեսել: Ընկերս՝ Գառնոն էլ զոհվեց: Նա ամուսնացել էր պատերազմ մեկնելուց առաջ: Ես չեմ ամուսնանա, մինչև չվերջանա պատերազմը:

1 մայիսի 1992 թիվ

Ես կորցրել եմ ժամացույցս: Դժվար է անցնում ժամանակը: Ռազմի մտերիմ ընկերս՝ Մուշեղը, վիրավորվեց ոտքից ու թևից, նրան հոսպիտալ տեղափոխեցին: Նրա պես հրաշալի տղաներ են կռվում իմ կողքին: Մենք թշնամուն ետ մղեցինք 7-8 կիլոմետր հեռու: Վաղը նոր օր կսկսվի:

9 մայիսի 1992 թիվ

Այսօր ազգովին տոնում ենք Շուշիի հաղթանակը: Շուշին 70 տարի անց ազատվեց գերութունից: Մենք ճոխ խնջույք արեցինք, հարբեցինք ու թվաց, թե պատերազմն ավարտվել է: Բայց դեռ ամեն ինչ իր ավարտին չենք հասցրել: Մի բան լավ եմ հասկանում, որ հայերն իրավունք ունեն ապրելու այս երկրի վրա: Արցախը միշտ մերն է եղել ու կլինի ընդմիշտ: Նրա համար ենք արյուն թափում և արհամարհում մահը:

16 մայիսի 1992 թիվ

Կարոտել եմ մորս ու քրոջս: Կուզեմայի նաև ուրիշների պես սիրածս աղջկա հետ մի օր թև-թևի տված մտնել կինոդահլիճ: Երանի՜

երկրորդ կյանքն ունենայի և կարողանայի հանգիստ, առանց սարսափի ապրել: Մենք նահանջեցինք: Այնպիսի տպավորություն էր, որ հակառակորդը վիթխարի ուժեր ունի: Ես վախեցած եմ: Այնպես չեմ ուզում մեռնել:

27 մայիսի 1992 թիվ

Վախս հաղթահարելու համար ստիպված էի ընկերներին խորհրդով թուրքի կտրած գլուխ ուսապարկիս մեջ դնել: Այսօր ամբողջ օրը կրակ ենք բացել թշնամու դեմ, բայց թանձր ամպերի ու ծխի պատճառով չիմացանք, թե ինչքան թուրք սպանվեց: Ես ինձ շատ հոգնած եմ զգում, տղաները՝ նույնպես:

19 հունիսի 1992 թիվ

Խրամատներում մենք հաճախ սողում ենք չորեքթաթ: Մենք լարված իրար նայելով որոշում ենք ուղղությունը, թե որ կողմից է թշնամին մոտենում: Լուսատու հրթիռներ են բարձրանում: Լսվում է գնդացիների ձայները: Շատ մոտիկից մի նռնակ է պայթում: Տղաներից մեկը վիավորվում է երկու տեղից՝ գլխից և ուսից: Նրա արյունը սաստիկ հորդում է: Ես իմ ընկերոջ՝ Մինասի հետ նրան մի կերպ կապկպեցինք: Բայց ապարդյուն: Հանկարծ նկատեցի, որ նրա մի ականջը չկա: Արդյոք նախկինում էր վիրավորվել է, թե՞ թուրքերի մոտ գերի էր ընկել, հայտնի չէր: Նա նոր էր եկել մեր ջոկատը: Նրա կյանքի մասին մանրամասներ չգիտեիք: Գիտեիք, որ անունը Համլետ էր: Բայց այդ նույն Համոն մեր աչքերի առաջ մի քանի ժամ անց մեռավ: Վերջին պահին նա ծանր վիրավոր վազրի պես մռնչում էր: Իմ ականջներում դեռ երկար կինչի նրա ձայնը

13 հուլիսի 1992 թիվ

Մենք դարան ենք մտել անտառում: Լավ զինված ենք ու սպասում ենք: Մեզ հաջողվեց տասը թուրք սպանել գնդացրային կրակով:

Բայց ես այսօր քաղցած մնացի: Երեկվանից սիրտս խառնում է: Մենք ուտելու բան չունեինք: Տղաները շուն մորթեցին ու կերանք:

21 օգոստոսի 1992 թիվ

Իմ ընկեր Մանուկն այսօր մեռավ ձեռքերիս վրա: Նա հասցրեց մահից առաջ ինձ նվիրել պարանոցի արծաթյա խաչով շղթամ: Իմ մահից առաջ էլ այն կնվիրեմ ուրիշին: Բայց այդ խաչն ինձ դեռ կօգնի ավելի պինդ լինելու: Շուրջս արյուն է, հառաչանքներ, մահ:

15 սեպտեմբերի 1992 թիվ

Թշնամին հանկարծակի հարձակման անցավ: Մենք ստիպված էինք մահաջել: Տղաներից մի մասին կորցրինք և չհասցրինք հողին հանձնել: Այդպես քիչ է պատահում: Ինձ համար սարսափելի է մտածել այն մասին, որ ես կմեռնեմ ու իմ գերեզմանի տեղը ոչ ոք չի իմանա:

26 սեպտեմբերի 1992 թիվ

Գարունը անցավ, նաև՝ ամառը: Այժմ աշուն է, բայց մենք անզգա ենք դարձել տարվա հաճելի եղանակների հանդեպ: Մեր կյանքն ամենուր անցնում է խրամատների ու մարտերի մեջ: Մեր օրերը մաշվում են մահվան ու սարսափելի տվայտանքների մեջ: Այնպես կուզենայի փախչել մարտերից, մահից, սպասումից:

Մուշեղը տարված ընկերոջ օրագրով՝ երեսնիվայր փովեց բազմոցին: Նա դառնությամբ զգաց, որ զգացմունքները կորցրել էին իրենց ուժը՝ տեղի տալով պատերազմի տարիներից իր էության մեջ բուն դրած և խաղաղ պայմաններում աճող տագնապին: Նա ճիգեր գործադրեց հաղթահարելու ինքն իրեն, մի կերպ ստվերի տակ թողնելու իր հոգեաշխարհում ծանր ավազի պես տարածական տեսք ստացած այն ճգնաժամը, որը սպառնում էր ոչնչացնել իրեն:

Տիգրանուհին, դարան մտած կատվի պես, բրոյա մոխրագույն շալով փաթաթված, խավարում քաղցած կուչ էր եկել սառը խոհանոցի թախտի մի անկյունում: Նա տխուր մտածեց այն մասին, թե երբ վերջապես իրենց թաղամասին ևս էլեկտրական հոսանք կմիացնեն: Թեև որոշ մթերքներ ուներ, բայց պատրաստի ճաշ չուներ: Այնքան քիչ ժամանակով էին հոսանք տալիս, որ շփոթված չէր իմանում, թե այդ ընթացքում ի՞նչ անել՝ լվացք, հարդուկ, թե՞ ճաշ եփել: Յուր ընդունելիս էլ սպիրտայրոցի վրա էր սուրճ կամ թեյ պատրաստում՝ որպես ուտելիք նրանց առջև դնելով երշիկ, պանիր, թթու վարունգ կամ պոմիդոր: Ու ժամերով, օրերով, շաբաթներով, ամիսերով, տարիներով բոլորի հետ միասին խարխափում էր խավարի մեջ: Եթե նախկինում մոմի լույսի ներքո արվեստագետներով ռոմանտիկ երեկոներ էին անցկացնում, ապա այժմ, մութն ընկնելուն պես, վառվող մոմերի հոտից նյարդայնանում, ալերգիա էր ստանում: Հատկապես ծանր էր մենակ մնալ երեկոներին, քանի որ թվում էր, թե մարդկային կերպարանքից վերածվել ես կատարյալ խլուրդի տեսքի: Նման իրավիճակում երազել կարող էին միայն հոգեկան հիվանդները: Մարդկային երազանքները սովորաբար երփներանգ գույներ են ունենում, այնինչ հասարակության մեջ այժմ ամեն բան դիտվում էր սև և սպիտակ գույների ներքո: Եթե այդ պայմաններում մարդ մտածում էր սոսկ հանապազօրյա հացի մասին, ապա ինչով էր տարբերվում նրա կյանքն առհասարակ անասնականից: Երկրի սոցիալական, տնտեսական ու քաղաքական անտանելի վիճակն էլ ասես բավական չէին, բնությունն էլ մի կողմից էր մարդկանց իր դաժան վերաբերմունքը ցույց տալիս: Չափազանց խստաշունչ ձմեռ էր: Վերջին տասը տարիների հատվածում Հայաստանում այդչափ ձյուն չէր տեղացել: Թերևս հեշտ կլիմեր հաղթահարել եղանակի պատճառով առաջացած այդ դժվարությունը, եթե վառելիքի խնդիր չլիներ: Սակայն արդեն երկու տարի էր, ինչ հանրապետության տարածքում (բացառությամբ սահմանամերձ շրջանների) բնակչությունն ամբողջ օրվա ընթացքում օգտվում էր էլեկտրաէներգիայից ընդամենը երկու ժամ տևողությամբ: Մարդիկ

տաքանալու նպատակով ստիպված օգտվում էին ոչ միայն մերձակա անտառներից, այլև թաքուն հատում էին քաղաքի ծառերը: Ստեղծված թշվառ իրավիճակը պետական այրերը կապում էին Արցախում թշնամու դեմ մղվող պատերազմական գործողությունների հետ: Այն է՝ վառելիքի դիմաց ռազմամթերք էին գնում: Թեկուզ դարեր շարունակ իշխանավորները միշտ էլ ժողովրդին հրամցրել են այն ամենը, ինչ ցանկացել են: Մանավանդ ճգնաժամային տարիներին ավելի դյուրին է լինում տարածել սուտը՝ օգտվելու համար երկրում ստեղծված ծանր վիճակից: Քանդվեցին խոշոր գործարանները, փակվեցին պետական հիմնարկ-ձեռնարկությունները: Կարծես իրականում բռնոր փողոցներով մահվան սարսափելի ուրվականն էր թափառում՝ անցնելով հազարավոր տանիքների վրայով: Այդ սարսափը չկարողացան հանդուրժել շատ մարդիկ, ովքեր ստիպված եղան լքել իրենց հայրենի օրրանները: Անտարակույս, մնացյալներից եթե մի մասն իսկապես նյութական միջոցներ չունեն երկրից փախչելու համար, մյուսները պարզապես չհեռացան հայրենասիրական զգացումներից դրդված, մտածելով, որ, ի վերջո, հայ ժողովրդի մղած կռիվն արդար է: Թերևս աշխարհի ցանկացած երկրում այդպիսինն էր ժողովրդի վիճակը պատերազմից հետո՝ նույն քաղցն ու արտագաղթը:

Թշնամուց ազատագրելով Արցախի գրավյալ տարածքները և Շուշին՝ մեր ազատամարտիկները վերստին հաստատեցին, որ մենք ազգովի ապրելու իրավունք ունենք: Չէ՞ որ Արցախը հանդիսանալով Հայաստանի անբաժանելի մասը՝ եղել է նրա հյուսիս-արևելյան անառիկ դարպասը, որտեղից չեն կարողացել հայկական լեռնաշխարհի ներխուժել կովկասյան զանազան վայրի ցեղեր: Դարեր ի վեր նրանք ստիպված էին մարտնչել պարսիկների, արաբների, թուրք-սելջուկների, թուրք-մոնղոլների հրոսակախմբերի դեմ: Արցախը նախկինում հանդիսացել է Հայաստանի այն միակ երկրամասը, որը կիսաանկախ կառավարվել է տեղական իշխանների (մելիքների) կողմից: Եվ պատմական պայքարի ամենավառ դրսևորումներից մեկն էլ Շուշիի ազատագրման փառապանծ հաղթանակն էր: Տիգրանուհին որպես նկարչուհի այս ամենին մոտենում էր այն հստակ համոզմամբ, որ յուրաքանչյուր հայ մարդ անպայման իր սրտացավ

վերաբերմունքը պիտի ունենա հայրենիքի հանդեպ: Այդ մութ պայմաններում, անգամ մոմի լույսի ներքո, ինքը շարունակել է աշխատել՝ ստեղծելով հայրենասիրական բնույթի մի շարք կտավներ, որոնցում պատկերված է, թե ինչպես է շողում օտար զավթիչների դեմ մղվող հերոսամարտում հայ զինվորի դյուցազնական սուրը, նաև չէր մոռացել հաղթական դրոշի տակ նկարել «Պազանչեցոց եկեղեցին»՝ քաղաքը գրաված հայ զինվորների հաղթական կեցվածքով: Պատերազմի վերաբերյալ ինքը պատկերացում էր կազմել կարդացած լուրերի, տեսաֆիլմերի, կռվի դաշտից վերադարձած մարդկանց, այսինքն՝ ականատեսների միջոցով: Այդ ականատեսներից մեկն էլ իր եղբայրն էր՝ Մխիթարը, որը մարտադաշտերում վիրավորվել էր երկու անգամ՝ ստանալով կոնտուզիա: Ինքնըստինքյան հիշեց այն օրը, երբ նա Շուշիի հաղթանակից հետո մի քանի օրով՝ ձեռքից վիրավոր տուն վերադարձավ: Սկզբում մեկնեց Սեղրի՝ տեսնելու ծնողներին, այնուհետև՝ ետդարձի ճանապարհին հանդիպեց իր հետ: Այդ օրը կյանքի հիշարժան օրերից էր: Ընկերներով ու մտերիմ մարդկանցով հավաքվել էին՝ մշելու իր ծննդյան տարեդարձը: Տիգրանուհին դժվար թե մոռանար այդ օրը: Սեղանակիցներն անվերջ հիշում էին ազատամարտիկներին, նահատակներին, ինչպես նաև մեր երկրի սահմանները հսկող ռազմիկներին: Բնականաբար, հայրենաշունչ նման մթնոլորտում ավելի շատ հպարտությամբ խմեցին եղբոր կենացը: Նույնիսկ մոռացել էր, որ հյուրերն իր համար էին եկել: Հավանաբար մեծարանքի շռայլ խոսքերից, նաև անչափ ուրախություներից Մխիթարը խիստ հարբեց: Եվ այն պահին, երբ ինքն ուզեց ճանապարհել մտերիմ ընկերոջը, որը մտադիր էր ամուսնանալ իր հետ, եղբայրը հասնելով միջանցք, առանց որևէ բառ արտասանելու, հարձակվեց նրա վրա՝ բռունցքով հարվածելով դեմքին: Ընկերոջ քթից միանգամից արյուն հոսեց: Բնականաբար, նա պատասխան հարված չհասցրեց լոկ այն պատճառով, որ դիմացինը վիրակապով էր: Իր վրդովմունքի համար մի հարված էլ ինքը ստացավ՝ տապալվելով հատակին: Այս անգամ արյունոտվեցին իր ձեռքերն ու ծնկները: Նման տխուր միջադեպից հետո մարդիկ շփոթահար ցրվեցին: Հաջորդ օրը սակայն Մխիթարը ներողություն խնդրեց, խոստովա-

նելով, որ ուղեղը մթազնվել է մի ակնթաթ և ինքն էլ չհասկացավ, թե իր հետ ինչ կատարվեց: Տիգրանուհին հասկացավ, որ եղբայրը հիվանդ է: Ակնհայտ է, որ մարդու ուղեղը թեև մնացած օրգաններից ավելի լավ է պաշտպանված, սակայն այն կարող է տուժել հարվածներից և կտրուկ շարժումներից: Յուրաքանչյուր վնասվածք իր մեջ կրում է վտանգ: Մանավանդ մարտի դաշտերում շատերն են հայտնվում այդ հարվածի տակ: Եվ թիկունքում գտնվող մարդկանց նրանք միանգամից չեն կարող իրենց հիվանդության մասին որևէ կասկած առաջացնել, մինչև ինչ-որ պահ չստեղծվի՝ այն բացահայտելու համար: Չէ՞ որ կոնտուզիան օրգանիզմի ընդհանուր կամ մասնակի վնասվածքն է առանց արտաքին երևույթի: Նմանատիպ վնասվածք ունեցողները հիմնականում տառապում են անքնությամբ: Էլ չենք խոսում այն մասին, որ խմիչքի չարաշահումը ծայրաստիճան գրգռում է նրանց ուղեղի աշխատանքը: Այդ պատճառով Մխիթարը ոչ մի կերպ չկարողացավ բացատրել իր արարքը: Ավելին. նույնիսկ քրոջը խոստովանեց, որ տանը, ծնողների ներկայությամբ ինչ-որ բանից նյարդայնացած, շրջել է ուտելիքներով լի ճաշասեղանը: Այնինչ ծնողները Տիգրանուհուն ոչինչ չէին ասել: Անտարակույս, Մխիթարը հանդիպեց իր ընկերոջը՝ հայցելով նրա ներողամտությունը: Ինքը՝ Տիգրանուհին էլ տեսավ այդ ամենը: Ընկերոջ աչքերի տակ ուժեղ հարվածից նկատելի կապտուկներ էին առաջացել, ու նա ստիպված էր սև գույնի ակնոցներ դնել: Ընդունակ չլինելով կուլ տալ նման վիրավորանքը, բնականաբար, նաև անգլիական ձևով՝ լուռ հեռացավ Տիգրանուհուց: Չէր մոռացել նաև իրենց միջև կայացած վերջին ճեպագրույցը: Սակայն նկարչուհին ամենից շատ նեղսրտել էր նրա վերաբերմունքից, երբ ընկերը գրույցի վերջում դաժանորեն հայտարարել էր, որ ինքը նման եղբայր ունենալու դեպքում, պատրաստ կլիներ այդ արարքի համար կախել նրան:

-Ուրեմն՝ ձևակա՞ն բնույթ էին կրում քո գովեստները հայրենիքի պաշտպանյալների հանդեպ: Ասենք, դու նրանց ցավը չես հասկանա, քանի որ ինքդ ռազմի դաշտում չես եղել: Կարծում ես, եղբորս համար հե՞շտ էր տեսնել, թե ոնց էին մարտական ընկերները թշնամու ծուղակը չընկնելու համար տանկիստի հետ գլորվում ձորը: Ինքն

այս անգամ պարզապես հրաշքով փրկվեց, բայց չազատվեց իր տեսած սարսափներից, մանավանդ երբ իրենց ջոկատում կռվող տասնութամյա մի զինվոր մնաց տանկի թրթուռների տակ՝ դառնալով ընդամենը արյունոտ մսագունդ: Թե՞ քո կարծիքով, պետք է գնդակահարել բոլոր այն զինորդներին, ովքեր հիվանդացել են ռազմի դաշտերում: Ու՞ր մնաց մարդկային գթությունդ: Ես ամաչում եմ, որ քեզ հետ երբևիցե ընկերություն եմ արել,- ու Տիգրանուհին մինչև հոգու խորքը վիրավորված՝ ընդմիշտ հեռացել էր նրանից:

Գուցե այդ ակնթարթն էլ Տիգրանուհու համար ճակատագրական եղավ այն բանի համար, որ բացահայտվեց ընկերոջ իսկական դեմքը: Նա շարունակեց մտածել, որ եթե առօրյա կյանքում յուրաքանչյուր մարդ ունի իր ճակատագիրն ու աշխարհայացքը ապա, անկասկած, ազգանվեր մարդը գնահատվում է տվյալ պարագայում միմիայն պատերազմին ունեցած իր մասնակցությամբ: Տիգրանուհին մթության մեջ դառնությամբ դեռ երկար պիտի մտորեր, եթե փողոցից երեխաների ուրախ գոռուկ-գոչյուններ չլսվեր: Այդ նշանակում էր, որ ժամանակավոր էլեկտրաէներգիա են տվել բնակիչներին: Տիգրանուհին ևս խոր շունչ քաշելով՝ վեր թռավ տեղից, մտածելով, որ հնարավորություն կունենա ճաշ պատրաստելու: Ինքը դեռ քաղցին մի կերպ կարող է դիմանալ, իսկ մա՞յրը և եղբոր զավակներ՞ը... Նրանք արդեն մի շաբաթից ավել է, ինչ իր մոտ էին տեղափոխվել: Մայրը երեխաների հետ ժամանել էր Ռուսաստանից: Քանի որ թռներին հեռվից-հեռու շատ էր կարոտում, որոշել էր իր հետ Սեդրի տեղափոխել ու այնտեղ խնամել մինչև ամառ: Սակայն ծյան պատճառով վտանգավոր էին դարձել ճանապարհները, ու նրանք ստիպված էին սպասել քմահաճ եղանակի փոքրիշատե փափկելուն: Եվ այն ժամանակ, երբ Տիգրանուհին մենակ խոհանոցում էր, մայրը երեխաների հետ գտնվում էր սենյակում: Դժբախտաբար, իրենց լույսերը այդպես էլ չվառավեցին: Հավանաբար ինչ-որ տեղ վթար է եղել: Մայրը՝ տիկին Մարոն, անհանգիստ հայտնվեց աղջկա մոտ:

-Ի՞նչ պիտի անենք: Նայեցի լուսամուտից ու տեսա, թե ինչպես ձեր շենքում, այնպես էլ մի քանիսում նույնպես լույսեր չեն վառվում: Երևի այսօր պիտի հաշտվենք կատարյալ մթության հետ:

-Այո՛, մայրի՛կ ջան, ընթրիքին պանիր, երշիկ ու ծիրանի ջեմ կլինի: Երեխաները կկշտանա՞ն:

-Լավ կլիներ տաք թեյ էլ խմեն: Ամբողջ օրվա ընթացքում մրսել են, թեկուզ տաք են հագնված:

-Այդ դեպքում ինքդ մթերքները հանիր, իսկ ես հարևանից թեյնիկով եռացրած ջուր կբերեմ, նաև կիմանամ, թե երբ կմիացնեն մեր լույսերը,- Տիգրանուհին, դեն նետելով բրդյա շալը, էլեկտրական սալիկի վրայից վերցրեց թեյնիկը և ուզեց արագ դուրս գալ խոհանոցից, երբ մայրը ետևից կանչեց.

- Տիգրանուհի, խնդրիր նրանց թույլ տալ, որ երեխաները գոնե տասը-տասնհինգ րոպե տաքանամ փայտե վառարանի մոտ: Վախեցնում են, որ կարող են հիվանդանալ:

-Մի՛ վախեցիր, մայրի՛կ ջան, նրանք ևս մի փոքրիկ աղջիկ ունեն: Կարծում եմ՝ չեն մերժի:

Իսկապես մի քանի րոպե անց նա և՛ տաք թեյի և՛ վառարանի մոտ տաքանալու հարցերը լուծեց: Եվ թեթևակի ընթրելուց հետո հաճույքով տաքացան վառարանի մոտ համարյա կես ժամ: Երեխաները տուն վերադառնալով՝ ավելի աշխուժորեն խաղացին իրենց խաղալիքներով: Տիգրանուհին նկատել էր, որ նրանք շուտ էլ հարմարվեցին խավարի հետ: Քանի որ հեռուստացույց հնարավոր չէր միացնել, երեկոները չձանձրանալու նպատակով երեխաները փոքրիկ համերգ էին կազմակերպում: Նրանք քույր և եղբայր էին: Քույրը՝ Անին, վեց տարեկան էր, եղբայրը՝ Մասիսը, հինգ: Քնելուց առաջ էլ ամեն երեկո Տիգրանուհին խնամքով անպայման ջուր էր տաքացնում, լցնում ջերմակների մեջ ու դնում նրանց անկողիներում: Օրվա ընթացքում, սակայն, հարևանից տեղեկացած ամենավատ լուրն այն էր, որ շատ ծանր էլեկտրավթարի պատճառով նրանք մինչև Ամանորը ընդհանրապես հոսանք չեն ունենա: Այդ մասին նա հայտնեց մորը:

-Ի՞նչ պիտի անենք վաղվանից: Ստացվում է, մենք բոլորովին չենք կարող ճաշ պատրաստել,- տիկին Մարոն տազմապով նայեց աղջկան:

-Ես վաղը շուկայից նավթի վառարան կգնեմ, նաև՝ նավթ: Մենք հնարավորություն կունենանք թե՛ տաքանալու, թե՛ կերակուր պատրաստելու:

-Աղջիկս, մենք քեզ ահագին նեղություն տվեցինք: Ստիպված ես համբերել, մինչև հայրդ հրահանգ չտա մեզ, թե ե՞րբ կարող ենք ճանապարհ ընկնել:

- Այդ մասին ավելորդ է խոսելը:

Իրականում Տիգրանուհու նյութական վիճակն օրեցօր ծանրանում էր: Նա ոչ միայն չէր աշխատում, այլև ապրում էր վարձով՝ վաճառված նկարներից ստացված գումարների հաշվին: Նա տնտեսում էր ամեն ինչ, որպեսզի կարողանար հասցնել գոյատևել առանց պարտքերի: Ու եթե նախկինում օրվա ընթացքում նախաճաշից բացի ընդամենը մեկ անգամ էր ճաշում, ապա հիմա երեք անգամ կերակրում էր հարազատներին: Այսինքն՝ չնախատեսված ծախսերն աստիճանաբար նյութական այնպիսի ճեղվածք առաջացրին, որ նա ստիպված էր ծախսել նաև բնակավարձի վճարներից: Հաջորդ օրը շուկայից ոչ միայն գնեց նավթի վառարան, այլև մի շարք անհրաժեշտ մթերքներ և երկու ծանր պայուսակներով տուն վերադարձավ: Հարազատների վիճակը զգալիորեն բարելավվեց, թեև անորակ պարսկական վառարանը անտեղի մրուր էր առաջացնում՝ սևացնելով բոլորի դեմքերը: Մանավանդ երեխաները, որ այժմ վառարանի մոտ էին խաղում, նմանվում էին փոքրիկ հանքափորների: Տիգրանուհին նույնիսկ նկարել էր նրանց՝ վառարանի մոտ կուչ եկած: Այդ օրերի ընթացքում երեխաները մի քանի անգամ շփվեցին հարևանների հետ: Բայց նրանց մոտ հաճախ հյուրընկալվում էր Տիգրանուհու արվեստագետ ընկերը՝ Սիփանը, որը միշտ երեխաների համար քաղցրավենիք էր բերում: Նա երեսունհինգամյա մի հմայիչ երիտասարդ էր՝ բարձրահասակ, ցորնագույն մազերով, խոշոր, երկնագույն աչքերով: Դասավանդում էր թատերական ինստիտուտում, նաև որպես խմբագրի տեղակալ էր աշխատում «Արվեստ» ամսագրում: Մեկ ամիս առաջ առնչվելով Տիգրանուհու նկարչական արվեստին, այլևս չկարողացավ մոռանալ նկարչուհուն ու որոշեց ընկերություն անել նրա հետ: Տիգրանուհին, որ նրանից տարիքով փոքր էր երեք տարով, երկար շագանակագույն մազերին ներդաշնակ ուներ շագանակագույն աչքեր, նուրբ իրան: Արտաքնապես նրանք իրար համընկնում էին: Կարևոր էր նաև այն, որ ունեին կյանքի ու արվեստի գնահատ-

ման ընդհանուր հայացքներ ու միմյանց հասկանում էին գրեթե կես խոսքից: Տիկին Մարոն նույնպես հավանեց Սիփանին, որն իր հետաքրքիր ու բովանդակալից գրույցներով կրճատում էր խավարի տևողությունը: Մի օր էլ երեխաները հերթական համերգը ներկայացրին Սիփանի ներկայությամբ: Արվեստաբանն այդ օրը ոչ միայն զարմացավ նրանց շնորհքով, այլև երգացանկում ընդգրկված ֆիդայական երգերով:

-Որտեղի՞ց են իմանում այդ երգերը,- հարցրեց Սիփանը՝ նայելով Տիգրանուհուն և տիկին Մարոյին:

-Ես եմ նրանց սովորեցրել: Ինքս Ղարսից եմ: Ծնողներս 1915 թվականի եղեռնից հետո տեղափոխվել են ԱՄՆ: Ես այնտեղ եմ մեծացել ու կրթություն ստացել, բայց հետագայում ամուսնացել ու բնակություն եմ հաստատել Հայաստանում: Հպարտ եմ, որ ապրում եմ հայրենիքում: Իմ կարծիքով, հայեցի մտածողության համար չափազանց կարևոր է սեփական երկրում ապրելու զգացողությունը: Չեմ ուզում երբևիցե հավատալ, որ բնակվելով Ռուսաստանում՝ թոռնիկներս կմոռանան իմ սովորեցրած երգերը,- ու տիկին Մարոն վերհիշեց ցեղասպանության հետ կապված մի քանի դրվագներ: Նա այնպիսի ատելությամբ էր պատմում թուրքերի վայրագ գործողությունների մասին, որ երեխաները վախեցած հայացքով՝ քարացել էին սենյակի մի անկյունում:

-Մի՞թե նույն դաժան գործողությունները չկրկնվեցին նաև Սունգալիթում, Կիրովաբադում, Բաքվում... Աշխարհի բոլոր պետությունները պարտավոր են դատապարտել Թուրքիային,- մռայլվեց Սիփանը, նաև հասկանալով, որ տիկին Մարոն իր վճռորոշ դերն է ունեցել թոռնիկների անվանակոչության խնդրում: Չէ՞ որ եթե Մասիսը խորհրդանշում է մեր ժողովրդի դարավոր գոյությունը, ապա այժմ ավերված Անին հիշեցնում է մեզ մեր անանցանելի ցավի մասին:

-Դրա ժամանակն էլ կգա,- Տիգրանուհու աչքին այդ խոսակցությունից կարծես քառապատկվեց սենյակի խավարը և մոմերի լույսն ավելի աղոտ դարձավ:

-Տատիկ, ես ջուր եմ ուզում,- ասաց տղա թոռնիկը:

-Ես՝ նույնպես,- ավելացրեց քույրը:

Տիկին Մարոն ուզեց բարձրանալ տեղից, սակայն Տիգրանուհին չթողեց:

-Ես կբերեմ, մայրի՛կ ջան: Իսկ գուցե բոլորիս համար նաև սու՞րճ պատրաստեմ:

Նա մի հատիկ վառվող մոմ վերցնելով՝ շարժվեց դեպի խոհանոցի կողմը: Երեխաների համար ջուր բերելուց հետո նա սպիրտայրոցի վրա սուրճը պատրաստեց, իսկ թեյնիկը դրեց նավթի վառարանին՝ տաքանալու համար: Սիփանը նկատեց, որ երեխաները ջրի բաժակները միանգամից դատարկեցին: Հասկացավ, որ մեծերի զրույցից նկատելի վախ էր առաջացել երկուսի մոտ: Ու չսխալվեց: Տիգրանուհին դեռ խոհանոցում էր, երբ փոքրիկ Մասիսը հարցական նայեց Սիփանին.

-Դուք մտածում եք, որ թուրքերը բոլորիս էլ կսպանե՞ն, նաև՝ մե՞զ...

-Ո՛հ, բալի՛կս,- խաղաղ ծայնով պատասխանեց Սիփանը:- Արի՛ ինձ մոտ և երբեք մի՛ վախեցիր: Մենք Արցախում արդեն հաղթել ենք,- նա ժպտալով իր գիրկն առավ երկուսին էլ ու նրանց ծանր մտքերից ցրելու համար առաջարկեց միասին ուրախ երգ երգել: Փոքրիկները համաձայնվեցին:

Երբ Տիգրանուհին հայտնվեց, զարմանքով նայեց մորը.

-Որո՞չե՛լ են համերգը շարունակե՞լ:

-Մի՞թե չգիտես, որ երգելը հոգեկան լարվածությունը վանելու ամենալավ ձևն է:

Երբ երգն ավարտվեց, Սիփանը դիմեց տիկին Մարոյին.

-Քանի որ դուք ծխախոտի ծուխը տանել չեք կարողանում, ես սուրճս խոհանոցում կխմեմ:

-Այդ դեպքում ես քեզ կմիանամ,- ասաց Տիգրանուհին՝ սեղանից կրկին վերցնելով սկուտեղը:- Մայրի՛կ ջան, դու ստիպված պիտի երեխաների հետ մի քիչ զբաղվես, մինչև թեյը կտաքանա:

Խոհանոցում սաստիկ ցուրտ էր, այդ պատճառով Տիգրանուհին նորից փաթաթվեց իր բրոյա շալի մեջ՝ նստելով ընկերոջ դիմաց: Սիփանն ի տարբերություն նրան՝ ցրտադիմացկուն էր: Մի հատիկ մոմ էր վառվում սեղանին՝ բաժանելով նրանց իրարից, իսկ դրսում առատ ձյուն էր տեղում:

-Ես քեզ համար լավ նորություններ ունեմ,- Սիփանի աչքերն անսովոր փայլեցին:

-Ինչու՞ միանգամից չասացիր:

-Ուզում էի, որ ինձ հետ առանձնանայիր,- նա ջանքեր չէր խնայում, որպեսզի նրան շատերը ճանաչեն ոչ միայն Հայաստանում, այլև երկրի սահմաններից դուրս

-Իմ կուրսեցի ընկերներից մեկը, որն այժմ բնակվում է Փարիզում, երեկ զանգեց ինձ, և ես առիթն օգտագործեցի խնդրելու, որ քեզ հրավիրի արվեստների մայրաքաղաք որևէ ցուցահանդեսի մասնակցելու համար և բոլոր տվյալներդ առանց քո թույլտվության նրան հաղորդեցի:

Տիգրանուհին ուրախությունից վեր թռավ տեղից և փաթաթվելով Սիփանին՝ ջերմորեն համբուրեց: Սիփանը սիրած կնոջ հպումից զգաց, որ մրսելուց սառել էին նրա ձեռքերն ու քիթը:

-Գուցե սենյակու՞մ շարունակենք մեր զրույցը: Տեսնում եմ, թե ինչքան ես սառել:

-Ոչինչ, կդիմանամ:

Սիփանը Տիգրանուհու ձեռքերը վերցնելով ավերի մեջ՝ մոտեցրեց շուրթերին և իր տաք շնչառությամբ փորձեց տաքացնել:

-Դու գիտե՞ս, որ քո դեմքը մոմի լույսի տակ ինձ հիշեցնում է մի ծանոթ սրբապատկեր, որ տեսել եմ շատ հայտնի նկարիչներից մեկի մոտ,- Սիփանի հյութեղ շուրթերը մեկ-մեկ կպան աղջկա մատներին, և նա ասես մոռացավ թե՛ ցուրտը, թե՛ խավարը, թե՛ իրեն մտատանջող խոհերը:

-Փորձում ես հաճոյախոսե՞լ ինձ:

-Երբեք: Ես կարողանում եմ գնահատել ու ճանաչել մարդկանց: Դա իմ առավելությունն է:

-Այդ դեպքում էլ ինչպիսի՞ առավելություններ ունես: Գուցե թվարկե՞ս դրանք,- մթության մեջ բազմանշանակ ժպտաց Տիգրանուհին:

-Գաղտնապահ եմ, համբերատար, ընկերասեր, բոլորովին եսասեր չեմ, խանդոտ չեմ... Շարունակե՞մ, թե՞ թվարկածս էլ հերիք է:

-Կարիք չկա: Միայն չհասկացա, թե ինչպես կարելի է չխանդել: Ես, օրինակ, շատ խանդոտ եմ: Չէ՞ որ սերը ուղիղ կապ ունի խանդի հետ: Իհարկե, խոսքս խելացնոր խանդի մասին չէ:

-Եթե վստահես դիմացիմին, չես խանդի,- Սիփանն ամեն կերպ փորձեց համոզիչ դարձնել իր միտքը: Նա, այնուամենայնիվ, հասկացավ, թե ինչից Տիգրանուհին միանգամից խրտնեց:

-Իսկ ո՞րն է քո մյուս նորությունը,- թեման փոխեց Տիգրանուհին:

-Ամանորի տոներից հետո մի խումբ նկարիչներ մտադիր են ցուցահանդես կազմակերպել Սիբիրում: Կապ են հաստատել տեղի հայկական համայնքի հետ՝ ստանալով նրանց համաձայնությունը: Անշուշտ, նկարների վաճառքից ինչ-որ տոկոսներ որպես օգնություն կհատկացվեն համայնքին: Ինձ հրավիրում են նրանց նկարչական արվեստը պատշաճ մակարդակով ներկայացնելու համար: Այսինքն՝ ես արվեստի տեսաբանի իմ գործը պիտի կատարեմ:

Տիգրանուհին մի ակնթարթ թախծեց, երբ իմացավ, որ Սիփանը որոշ ժամանակով կբացակայի քաղաքից: Նա իսկույն ևեթ մտածեց, որ խավարի թագավորության մեջ ինքը մահացու չափ կտանջվի առանց նրան, քանի որ Սիփանը միշտ ներշնչում է իրեն, այնպիսի թևեր տալով, որ իրականում դժվար է դառնում մենակ մնալը:

-Դու քիթդ կախեցի՞ր իմ այս նորությունից: Ի՞նչ պատահեց քեզ հետ,- Սիփանը նորից իր ափերի մեջ առավ նրա սառը ու ցրտից նկատելի կապտած ձեռքերը:

-Ես մտածում եմ, որ ինձ այլևս կենդանի չես տեսնի քո վերադարձից հետո:

-Ինձ չափազանց վախեցնում ես քո պահվածքով: Չէ՞ որ առիթ կստեղծվի քո նկարներից ևս տանել ինձ հետ: Այդ մասին մտքովդ չանցա՞վ:

-Ինձ համար ամեն ինչից կարևորը դու ես, քո ներկայությունը:

-Քեզ երեխայի նման ես պահում, իսկ քո արվե՞ստը: Եթե ընտրություն անելու լինես իմ ու արվեստիդ միջև, ինչպե՞ս կվարվեիր:

Առանց որևէ երկընտրանքի՝ Տիգրանուհին միանգամից պատասխանեց.

-Կընտրեմ միայն քեզ: Դու թթվածնի պես պետք ես ինձ:

Միփանը քարացած նայեց նրան և մի ակնթաթ մտածեց, որ ինքը պատրաստ չէր նման զոհողության հանուն Տիգրանուհու: Դրա համար, հավանաբար, անհրաժեշտ է խենթության աստիճանի սիրել:

-Բայց դու ապրում ես քո նկարներից ստացված զումարներով: Մի՞թե չես ուզում, որ կտավների շուտ վաճառվեն: Մոռացե՞լ ես, թե փող վաստակելու նպատակով ստիպված ինչպես ես առանձին թերթերի ծառայություն մատուցում՝ ծաղրանկարներ անելով:

-Մի՛ շարունակիր... Ոչինչ էլ չեմ մոռացել: Մի՞թե չգիտես, որ կյանքը բարձր է արվեստից: Եթե ես զգացմունքներ չունենամ, ու՞մ կհուզեն իմ նկարները,- Տիգրանուհուն թվաց, թե չի կարող զսպել արցունքները: Բարեբախտաբար, նա մի պահ փակեց աչքերը, խոր շունչ քաշեց, իսկ արտաշնչելուց հետո ասես շնչառությունն աստիճանաբար կարգավորվեց: Ինքնըստիներյան նաև ինքն իր վրա զայրացավ, որ կարճ ժամանակահատվածում այդպես խորացել էին իր զգացմունքները:

Միփանը նկատելիորեն թախծեց: Զգաց, որ Տիգրանուհին սկսել է տառապել, մինչև իր ճանապարհ ընկնելը: Սակայն ինքը ևս ունի իր ծրագրերը: Միայն փողի խնդիրը չէ, որ իրեն մտահոգում է, հնարավորություն կստեղծվի առիթն օգտագործել, ցուցահանդեսի ավարտից հետո մեկնել Սանկտ Պետերբուրգ՝ որդուն տեսնելու նպատակով: Երեք տարի առաջ էլի հանդիպել էր նրան: Քիչ էր, որ անհայր է մեծանում, իսկ ծնողական իր պարտականություննե՞րը...

Բարեբախտաբար, թեթև ոտնաձայններ լսվեցին: Խոհանոցի դուռը բացվեց, և մոմը ձեռքին երևաց փոքրիկ Մասիսը, որը հորաքրոջից խմելու ջուր խնդրեց: Սակայն Տիգրանուհին նաև նկատեց, որ երեխան ընդամենը մի կու՛մ արեց ջրի բաժակից: Դա նշանակում է, որ հետաքրքրությունից է հասել խոհանոց: Ուզեց իմանալ, թե ինչով են զբաղված իրենից տարիքով մեծերը:

-Այստեղ շատ ցուրտ է, կմրսես: Գնա՛ տատիկի մոտ, ես շուտով կգամ,- Տիգրանուհին զգաց, որ իր ու ընկերոջ միջև եղած խոսակցությունը գրեթե ավարտված է և ժամանակն է նրան հրաժեշտ տալ:

Սիփանն էլ իր հերթին հասկացավ, որ գնալու պահը հասունացել է և բարձրացավ տեղից:

-Բաճկոնս սենյակումն է, այն կվերցնեն ու մայրիկիդ հրաժեշտ կտան:

Ի պատասխան՝ Տիգրանուհին գլուխը դրականորեն շարժեց: Տիկին Մարոն բարեհամբույր նայելով երկուսին՝ ասաց.

-Խոհանոցում մրսած կլինեք: Թեյնիկը դեռ տաք է: Մոտեցե՛ք սեղանին՝ թեյե՛լու:

-Ո՛չ, արդեն ուշ է,- արձագանքեց Սիփանը՝ հագնելով մուգ կանաչավուն տաք բաճկոնը, որը նրան շատ էր սազում: Նա հրաժեշտ տվեց բուրդին և ցանկացավ հեռանալ, երբ Մասիսը դարձյալ կանգնեց նրա կողքին.

-Դուք վաղը մեզ նորի՞ց հյուր կգաք:

-Եթե քեզ խելոք պահես, անպայման կգամ,- ջերմորեն պատասխանեց Սիփանը՝ ձեռքը քնքշորեն սահեցնելով նրա այտով:

-Ես ուրիշ երգեր էլ գիտեմ:

-Վաղը քեզ հետ հաճույքով կերգեմ, միայն մի պայմանով, որ այլևս չվախենաս,- այս անգամ Սիփանը տղամարդու պես սեղմելով նրա ձեռքը՝ հեռացավ:

Հաջորդ օրը նախաճաշից հետո Տիգրանուհուն զանգեցին խմբագրությունից: Լրագրողուհի Անայիսն էր, որի հետ թեկուզ նա վերջերս է ծանոթացել, սակայն հասցրել է մտերմանալ: Հայտնեց, որ արդեն տպագրված ծաղրանկարների համար կարող է իր հոնորարը ստանալ: Տիգրանուհին մի տեսակ երկմտեց: Սովորաբար այնպես է իր օրը պլանավորում, որ միանգամից մի քանի գործ իր ավարտին հասցներ: Անայիսն այս անգամ նրան օգնության հասավ:

-Տիգրանուհի՛, խնդրում եմ, անպայման արի՛: Քեզ հետ խոսելիք ունեմ:

-Ու՞մ մասին է խոսքդ: Հեռախոսով չե՞ս կարող ասել:

-Ո՛չ, չեմ կարող: Իմ հոգեկան աշխարհն է խառնված: Ես քո օգնության կարիքն ունեմ:

-Այդ դեպքում սպասիր ինձ այդտեղ, ես մեկ ժամից հավանաբար քեզ մոտ կլինեմ,- պատասխանեց Տիգրանուհին:

Նա իսկույն հագնվեց՝ մորը հայտնելով, որ պատրաստվում է գնալ խմբագրություն՝ որոշակի գումար ստանալու նպատակով:

-Դրսից ինչ-որ բան պե՞տք է բերեմ,- հարցրեց նա մորը:

-Քո բերած մթերքներից ես ճաշ կպատրաստեմ, դու միայն երեք հաց կբերես: Ուրիշ ոչինչ պետք չէ: Միայն շուտ կվերադառնաս: Առանց քեզ ես շատ եմ ձանձրանում, մանավանդ որ հնարավորություն չկա հեռուստացույց դիտելու:

-Մի՛ նեղվիր, մայրիկ ջան: Մինչև ճաշը կպատրաստես, ես կգամ և միասին կճաշենք:

Տիգրանուհին հասնելով կանգառ՝ մտածեց, որ իր խոստումը ժամանակին կատարելը կապված է տրանսպորտային միջոցների հետ: Պատահում է, ավտոբուսներն այնքան լեփ-լեցուն են լինում մարդկանցով, որ անհնարին է նույնիսկ այնտեղ խցկվելը: Տրամվայներից օգտվելն էլ հուսալի չէ, քանի որ ճանապարհի կեսից կարող է հոսանքազրկվել ու ներսում ցրտից փայտացած մարդիկ հնարավոր է ժամերով սպասեն, մինչև տրամվայը կշարժվի: Ինչ խոսք, տրանսպորտային այդ միջոցից օգտվում են հիմնականում թոշակառուները, տարեցներն ու ընչազուրկները: Վերջիններս, որպես չգրված կանոն, երբեք փող չեն մուծում, որովհետև անգամ հացի փող չունեն: Տրամվայներով էին երթևեկում նաև դպրոցահասակ երեխաներն ու երիտասարդները, որոնք հաճախ տեղ չլինելու պատճառով կախվում էին դռներից: Այսպիսով, տրամվայի ուղեվարձը ոչ միայն անհամեմատ ավելի էժան է ավտոբուսներից, այլև այն համարվում էր անվճար երթևեկելու տրանսպորտային լավագույն միջոցը: Այդ օրը, բարեբախտաբար, Տիգրանուհուն հաջողվեց իր ուզած ավտոբուսով երթևեկել: Մտքերով տարված տեղավորվեց մի տարեց կնոջ կողքին: Անծանոթ կինը միանգամից գրույցի բռնվեց նրա հետ: Նա իր դժգոհությունը հայտնեց պետական այրերից երկրի ծանր վիճակի համար, գտնելով, որ ժողովուրդն իրականում խլուրդի կյանքով է ապրում: Տիգրանուհին ստիպված լուռ լսեց նրա բողոքները: Պարզ է, որ լուսնից չի իջել, ինքն էլ նույն երկրի քաղաքացի է:

-Նախկինում մարդիկ կարգին թռչակ էին ստանում և հացի խնդիր չէին ունենում: Այնինչ հիմա մեր թռչակը հերիքում է ընդամենը մեկ շաբաթ: Ես թռչակառու ուսուցչուհի եմ, այժմ չգիտեմ, թե ով եմ:

-Դուք երեխանե՞ր կամ թռռնե՞ր չունեք, որպեսզի օգնեն ձեզ,- Տիգրանուհին չկարողացավ չարձագանքել: Ջգաց, որ խեղճ կինը ինչ-որ մեկի հետ անպայման շփվել է ուզում:

-Ո՛չ, ես մենակ եմ ապրում: Ոչ ոք չունեմ:

Նկարչուհին հասկացավ, որ այդպիսով դժվարանում է անժանոթ ու մենակյաց կնոջը սփոփելու իր պարտքը:

-Ամիրաժեշտ է համբերել: Դուք խելամիտ կին եք ու գիտեք, որ նաև պատերազմը Արցախում այս տարի է ավարտվել: Ամեն բան շուտով իր տեղը կընկնի:

-Այսինքն՝ դուք պաշտպանո՞ւմ եք այս իշխանություններին: Երկիրը կործանման եզրին են հասցրել՝ ամբողջ մեղքը բարդելով պատերազմի վրա: Մի՛ հավատացեք նրանց, շուտով Հայաստանից բոլորը կփախչեն: Եթե փող ունենայի, վաղուց այստեղից գնացած կլինեի: Ես արդեն մի շաբաթ է, ինչ մոռացել եմ հացի բույրը...

-Ինչպե՞ս,- Տիգրանուհու մարմինը սարսռաց ցավից: Նա հանեց գրպանից դրամապանակը և որոշ դրամներ մեկնեց անժանոթին: Իսնդրում եմ, վերցրե՛ք և անպայման հաց գնեք ձեզ համար:

Թռչակառու կինը շնորհակալություն հայտնելով՝ իջավ հաջորդ կանգառում: Մինչև խմբագրատուն հասնելը Տիգրանուհին այնպես տարվեց ծանր մտքերով, որ մի կանգառ ավելի ուշ իջավ: Ստիպված եղավ ոտքով մի քիչ քայլել ձյունների միջով: Անայիսը նրան վաղուց սպասում էր: Տիգրանուհին տեղ հասնելով՝ նախ՝ մտավ հաշվապահության բաժին իր ստանալիք գումարը վերցնելու, այնուհետև լրագրողուհուն հրավիրեց միասին սուրճ խմելու մոտակա սրճարանում:

- Տիգրանուհի՛, ես ինքս այնպես եմ խճճվել, որ չգիտեմ, թե ինչպե՞ս պետք է դուրս գամ այս վիճակից,- Անայիսի աչքերը լի էին տազնապով:

-Ի՞նչ է կատարվում քեզ հետ: Ո՞վ է քեզ անհանգստացնողը:

-Ընկերս՝ Մուշեղը: Նա չափազանց դաժան է, ու ես վախենում եմ, որ չկարողանամ ազատվել նրանից:

-Բայց ո՞նց հավանեցիր նրան: Մի՞թե նրա հետ շփվելիս հենց սկզբից կոպտություն չզգացիր: Թե՞ սիրահարված էիր,- Տիգրանուհին փորձեց մեղմել նրա լարվածությունը:

-Ակզբնական շրջանում տարվեցի Սուշեղի գեղեցիկ խոսքերով: Առաջին վեց ամիսների ընթացքում նա ինձ հաճախ ռեստորաններ էր հրավիրում, ոսկյա զարդեր էր նվերներ էր տալիս: Տղամարդու նման սրտառուչ վերաբերմունքի կյանքում ոչ մեկի կողմից չէի արժանացել: Դժվար է հավատալ, որ երբևիցե այլ կերպ կվարվի ինձ հետ:

-Կարելի՞ է գոնե իմանալ, թե հատկապես ո՞ր խոսքերից հետո գլուխդ կորցրիր:

-Ասում էր, որ իբրև իմ մարմնի բույրն այնքան գայթակղիչ է, որ տարբերվում է ուրիշ կանանցից, և որ նա աչքերը փակ, անգամ մթության մեջ, հեռվից կգտնի ինձ` իմ անուշ բույրի շնորհիվ, որ առանց ինձ ինքնասպան կլինի ու նման խոսքեր...

Տիգրանուհին մեղմ ժպտաց` վերստին հիշելով այն ակնհայտ ճշմարտությունը, որ կանայք հիմնականում սիրում են ականջներով: Տղամարդիկ էլ գերազանց գիտեն այդ մասին ու պատեհ առիթն օգտագործելով` ձգտում են նրանց իրենց թակարդը զգել: Թեկուզ իրականում նրանց զգացմունքները պետք է հաստատվեն իրենց արարքներով: Ցավոք, կանայք, սովորաբար, հոգեպես շատ շուտ են կապվում: Ինքն էլ, անշուշտ, նրանցից մեկն է:

-Ինչո՞ւմն է արտահայտված նրա դաժանությունը,- հարցրեց Տիգրանուհին:

-Բավական է ինչ-որ հարցում նրան հակաճառես, կծեծի ու կջարդի,- ու Անայիսը զգուշությամբ բացեց հարվածից կապտած ճակատը, որը ծածկել էր գլխաշորով:

Տիգրանուհին խղճաց ընկերուհուն: Նա իսկույն մտածեց, որ կյանքում երբևէ չի հանդուրժի նման վերաբերմունքը: Կնոջ վրա իր բռունցքը ցույց տվող տղամարդն ամենից առաջ ի հայտ է բերում իր անզորությունը:

-Եվ դու ինքա՞ն ժամանակ ես պատրաստվում դիմանալ այդ ամենին,- հարցրեց Տիգրանուհին:

-Զգիտեմ: Վախենում եմ, որ բաժանվելու դեպքում նա ինձ կսպանի և աղջիկս որբ կմնա: Նա մի քանի անգամ սպառնացել է ինձ ատրճանակով,- հուզմունքից արցունքներով լցվեցին ընկերուհու աչքերը:

Տիգրանուհին տեղյակ էր, որ Անայիսը մի անգամ անհաջող ամուսնություն է ունեցել: Ունի մի դուստր, որը սովորում է դպրոցում:

-Գուցե Մուշեղն արցախյան պատերազմի մասնակի՞ց է:

-Այո՛, նա նույնիսկ մի քանի անգամ ծանր վիրավորվել էր՝ հազիվ ազատվելով մահից: Այժմ երկրորդ կարգի պատերազմի հաշմանդան է և թոշակ է ստանում: Նաև աշխատում է: Նույնիսկ գերի է ընկել թուրքերի մոտ ու դաժան կտտանքների է ենթարկվել: Միայն Կարմիր խաչի շնորհիվ նրան հաջողվեց փրկվել:

-Այժմ ինձ համար պարզ դարձավ ամեն ինչ: Այդքան սարսափների միջով անցնելուց ինչպե՞ս կարող էր նրա հոգեկան աշխարհը չխաթարվել: Արդյունքում այդօրինակ մարդիկ կիսով չափ խելագարվում են: Չեմ զարմանա, եթե ավելացնես, որ նաև կոնտուզիա է ստացել,- դառնությամբ ավելացրեց Տիգրանուհին::

-Որտեղի՞ց իմացար: Կոնտուզիա էլ ունի: Պատերազմի մասնակիցներից շատերն են կոնտուզիա ստացել: Նրա առողջությունը լրիվությամբ քայքայված է:

-Եղբայրս էլ պատերազմի մասնակիցներից է,- և Տիգրանուհին ստիպված պատմեց իր հետ կապված տխուր միջադեպի մասին:

Ուշի-ուշով լսելով նրան՝ Անայիսը հուսահատ արձագանքեց.

-Բայց քո եղբայրը քեզ հետ չի ապրում, և դու ինձ պես ամեն տեսակ վախի մեջ չես ապրում:

-Իրավացի ես, սակայն մենք բոլորս առօրյա կյանքում հնարավոր է անուղղակի կերպով առնչվենք նմանատիպ ցավոտ երևույթների: Դա նշանակում է, որ պատերազմին բոլորս ենք մասնակցել: Ժամանակ է պետք, որ ինչ-որ չափով մեղմանան այդ վերքերը: Թեկուզ մարմնի վրա մնացած վերքերը հեշտությամբ են սպիանում, իսկ ուղեղում և սրտում դրոշմված սարսափներն ինչպե՞ս կարող են նահանջել, ստվերի տակ մնալ: Մի՞թե վնասված նյարդերը կարելի է վերականգնել:

-Ի՞նչ ես առաջարկում անել:

-Համոզի՞ր նրան գոնե բուժման մեկ կուրս ընդունել: Կարծում եմ՝ նրա ագրեսիվությունը փոքրիշատե կմեղմանա,- խորհուրդ տվեց Տիգրանուհին:

-Ցավոք, ես այդ մասին մի քանի անգամ ակնարկել եմ, չի համաձայնվում:

-Ուրիշ ի՞նչ առաջարկեմ: Եթե շատ ես սիրում, համբերատար եղի՞ր:

-Ես այլևս չեմ սիրում նրան, միայն վախենում եմ...

-Ուրեմն՝ պիտի մտածել, թե ինչպես անվնաս բաժանվես նրանից: Դա թերևս ամենադժվար խնդիրն է, երբ Մուշեղը զենքով սպառնում է քեզ ու գիտի, որ դու էլ վախենում ես:

-Բայց նա իմ կյանքը վերածել է կատարյալ դժոխքի: Այսպես այլևս չեմ կարող ապրել: Նա նույնիսկ արգելում է ինձ շփվել ընկերուհիներիս հետ: Վաղն էլ կարգելի աշխատել: Ես ստրուկի պես պարտավոր եմ ենթարկվել նրան:

Տիգրանուհու համար այլևս դժվար էր լրացուցիչ խորհուրդներ տալը: Ինքը տվյալ պարագայում կիեռանար՝ առանց մտածելու հետևանքների մասին: Նույնիսկ մտածեց, որ հնարավոր է Մուշեղը պարզապես վախեցնում է, այնինչ իրականում չի համարձակվի կյանքից զրկել սիրած կնոջը: Չէ՞ որ սովորաբար տղամարդիկ նման ծայրահեղության դիմում են դավաճանության, բայց ոչ բաժանության դեպքում:

Անայիսին հրաժեշտ տալով՝ Տիգրանուհին մտավ մթերային խանութ՝ հաց առնելու: Նաև երեխաների համար թխվածք ու միրգ գնեց: Տխուր խոհերով տարված՝ երբ տուն հասավ, մայրը ճաշն արդեն պատրաստել և իրեն էր սպասում: Երեխաներն օգնեցին տատիկին ավսեները սեղանին արագ շարելու: Փոքրիկ Մասիսի ձեռքից հանկարծ մոմն ընկավ ու միջանցքում հատակին փռած գորգը մի քիչ վառվեց: Անին էլ ջարդեց ձեռքի բաժակներից մեկը:

-Դուք ամեն ինչ այստեղ կավերեք: Թե ո՞վ է ձեզ խնդրել ինձ օգնել,- թեթևակի գայրացավ տիկին Մարոն:

Տիգրանուհին բարեհամբույր ժպտաց՝ խաղաղ հայացքն ուղղելով մորը.

-Մայրիկ ջան, ոչինչ, ես նորերը կգնեմ:

Երեխաներն ուրախ նայեցին բարի հորաքրոջը՝ որպես իրենց պաշտպանի: Նրանք առաջվա պես տաք էին հագնված: Մասիսի հագին Տիգրանուհու բրոյա սև փափուկ բլուզն էր: Նա դրանում ավելի շատ սիրումն աղջկա էր նմանվում: Անիին Տիգրանուհին հագրել էր բալագոլյն բլուզը: Երկուսի վրա էլ ճաշի հետքեր կային: Նա այդ բլուզներն այլևս չի հագնի: Իր համար շատ կարևոր է, որ նրանք այդ ծանր պայմաններում չհիվանդանան:

Երեկոյան կրկին այցելեց Սիփանը: Երբ դուռը կամաց բախեցին, երեխաներն ուրախությունից միանգամից դեպի միջանցք վազեցին: Նրանք շատ էին կապվել Տիգրանուհու ընկերոջ հետ, որն ամեն օր պարտադիր քաղցրավենիք էր բերում փոքրիկների համար: Սիփանն էլ սիրում էր երկուսին: Առաջվա պես երեխաների հետ մի քիչ զբաղվելուց և երգելուց հետո Տիգրանուհուն առաջարկեց միասին այցելել իր հորեղբոր տղային, որն ապրում էր կողքի շենքում: Տիգրանուհին ընդունելով ընկերոջ հրավերը՝ նաև մորը և երեխաներին խոստացավ շուտ վերադառնալ: Սիփանի բարեկամը կնոջ հետ շատ ուրախացան՝ տեսնելով նրանց: Առաջին անգամը չէ, որ այցելում են: Գասպարը կարճահասակ, լիքը տղամարդ է՝ փոքր-ինչ դուրս ցցված աչքերով: Նա մի քանի տարով մեծ է Սիփանից: Չավակ չուներ:

-Ի՞նչ լավ արեցիք, որ եկաք: Կարտոֆիլը շուտով կեփվի, միասին կճաշենք: Սառը օդի էլ կա, մի-մի թաս կխմենք,- ասաց Գասպարը:

-Մենք էլ մեզ հետ թթու և օդի ենք բերել,- պատասխանեց Տիգրանուհին:

-Ավելի լավ, օդին պակասություն չի անի,- անկեղծորեն ժպտաց Գասպարը:

-Ես հեռվից նկատեցի, որ ձեր շենքի առանձին բնակարաններում էլեկտրական լույս է վառվում: Ինչո՞ւ մի մասը հոսանք ունի, իսկ մյուս մասը՝ ոչ,- այս անգամ հարցրեց Տիգրանուհին:

-Որոշ բնակիչներ հոսանք են գողանում տրամվայի գծերից: Դրա համար, անշուշտ, ամեն ամիս լրացուցիչ գումար են վճարում տրամվայի դիսպետչերներին: Մենք նման հնարավորություն չուներք: Հագիվ ենք ծայրը ծայրին հասցնում, որ սովից չմեռնենք,- պատաս-

խանեց Գասպարը, որը մոտակայքում պահակություն էր անում, իսկ կինը՝ Սաթիկը, տրամվայի վարորդ էր:

-Չերոնք դեռ այստե՞ղ են, թե՞ մեկնել են,- հարցրեց Սաթիկը:

-Դեռ ինձ մոտ են:

-Մի անգամ մեզ մոտ հրավիրիր,- առաջարկեց Գասպարը:

-Ավելի լավ կլինի դուք մի օր այցելեք մեզ,- արձագանքեց Տիգրանուհին:

-Ի՞նչ նորություններ ունեն,- այս անգամ Գասպարը դիմեց բարեկամին:

-Շուտով հավանաբար մի խումբ նկարիչների հետ ցուցահանդեսի կազմակերպմանը կմասնակցեն հեռավոր Սիբիրում,- ուրախ տոնով պատասխանեց Սիփանը:

-Ուրեմն՝ դու գոնե ժամանակավորապես կապրես լույսի աշխարհում: Ես քեզ հիմիկվանից նախանձում եմ: Այսպիսի կյա՞նք կլինի, նույնիսկ չգիտենք, թե մեր շուրջն ինչ է կատարվում: Լուրերից կցկտուր տեղեկանում ենք տրանսպորտով երթևեկելիս կամ խանութում գոյացած հերթերից: Հավատս չի գալիս, թե այս քանդված երկիրը մի օր կծաղկի,- Գասպարը մի հատիկ ծխախոտ վառելով՝ վեր կացավ տեղից ու մոտեցավ նավթի վառարանին: Նա կաթսայի մրուտված կափարիչը բարձրացրեց և պատառաքաղի օգնությամբ ստուգեց կարտոֆիլի վիճակը: Հետո Սաթիկին խնդրեց սեղանին շարել եղած-չեղածը: Ձկան պահածո էլ կար:

-Լավ էլ առատ սեղան դրվեց: Էլ ինչու՞ ենք բողոքում,- նկատեց Սիփանը:- Մարդիկ մեր օրերում սովից մեռնում են: Չեն թաքցնում, մենք էլ հաճախ խանութից ապառիկ ենք վերցնում մթերքները: Այդպես է գոյատևում մեր ժողովրդի մեծ մասը:

Տիգրանուհին հանկարծ ծանրացավ տխուր մտքերից: Նա անհանգստացավ այն մտքից, որ նկարները չվաճառվելու դեպքում, ինքը նույնպես կընկնի նրանց վիճակի մեջ: Գասպարը լցրեց բաժակները: Տիգրանուհին վերարկուի մեջ կուչ եկած նստեց փոքրիկ սեղանի մի անկյունում:

-Դու վերարկուդ չե՞ս ուզում հանել,- հարցրեց Սիփանը:

-Ո՛չ, ես խիստ մրսում եմ: Միայն կարող եմ արձակել վերարկուկի կոճակները, որ հարմար լինի նստելը:

-Ոչինչ, կխմես մի քիչ, կտաքանաս:

-Բարեկամներս, երեկ մի հետաքրքիր դեպք տեղի ունեցավ հետս,- ասաց Գասպարը:- Երեկոյան, համարյա այս ժամերին բաղնիք էի գնացել: Տաք ջուր կար, միայն լույս չկար: Մեկ էլ տեսնեմ աշխատողներից մեկը մոմ բերեց և կանգնեց կողքիս: Ես արդեն շորերս հանել էի: Նրան շնորհակալություն հայտնեցի, սակայն այդ հիմարը չէր հեռանում: Ստիպված էի ձայնս բարձրացնել. «Քեզ չասացի՞, որ շնորհակալ եմ», - զայրացա ու մի քիչ վարձատրեցի: Ի պատասխան՝ նա ինձ ասաց. «Իզուր մի նյարդայնացեք, ես այստեղ՝ մթության մեջ լողացողների համար որպես մոմ բռնող եմ աշխատում»:

Սիփանը և Տիգրանուհին ժպտացին: Դժվար եղավ սրտանց ծիծաղելը: Երկուսն էլ հավանաբար տխուր մտածեցին, որ հիմնականում խավարն է թելադրում մարդկանց իր կանոնները: Ասես ազգովի անսպասելիորեն հայտնվել էին ժողովրդական հեքիաթներում պատկերվող այն մուֆ աշխարհում, որտեղից կարող էին դուրս գալ միայն յոթզխանի դևին սպանելուց հետո:

Նրանք մի բաժակ օղի էին խմել, երբ դուռը ծեծեցին, և ներս մտավ նրանց բարեկամներից մեկը՝ լուսանկարիչ Արտեմը: Նա յոթանասունն անց տղամարդ էր, որը գաղթել էր Կիրովաբադից ու կնոջ հետ ապրում էր Երևանի Մաշտոցի շրջանի վթարային շենքերից մեկում: Մի աղջիկ ուներ, որն ամուսնու և երեխաների հետ ապրում էին Պյատիգորսկում: Նա իր հետ բերել էր երկու հաց և ապխտած ձուկ: Պարզ էր, որ այդ պայմաններում ոչ միայն թեժացավ գրույցը, այլև ծավալվեցին տարաբնույթ վեճերը հատկապես երկրում իշխող քաղաքական ու տնտեսական իրավիճակի մասին: Օղու շշերը վաղուց դատարկվել էին: Ինչքան էլ Տիգրանուհին փորձեց համոզել Սիփանին հրաժեշտ տալ բարեկամներին, վերջինս գինովացած կարծես մտադրություն չուներ վեր կենալու: Այնինչ մորը խոստացել էր շուտ վերադառնալ: Կեսգիշերն անց էր, երբ վերջապես Սիփանը խավարը ճեղքելով գրպանի լապտերիկով՝ իրեն ուղեկցեց մինչև տուն: Դուռը

կամաց բացեց իր բանալիով ու դանդաղ միջանքում վառելով մոմը՝ դեպի սենյակը շարժվեց:

- Տիգրանուհի՛, ինչու՞ ուշացար,- հարցրեց մայրը:

- Ես մեղավոր չեմ: Սիփանը բարեկամներից ոչ մի կերպ չէր ուզում բաժանվել:

- Ինդրուն եմ, հորաքույր, այսքան ուշ տուն մի՛ արի: Ես մտածում էի, թե թուրքերը քեզ սպանել են,- և փոքրիկ Մասիսը հեծկլտաց վախից:

Տիգրանուհու աչքերը լցվեցին արտասուքներով: Նա մոտեցավ ու փաթաթվելով երեխային՝ հանգստացրեց նրան: Անկասկած, երեկվա իրենց խոսակցություններից շատ էր տպավորվել:

- Երևանում թուրքեր չեն ապրում... Եվ հետո հայերն արդեն հաղթանակ են տարել:

Դու պետք է քաջ լինես և երբեք չվախենաս թշնամիներից: Խոստանում եմ Ես...

Խեղճ տղան ստիպված լացակունած աչքերով դրական մշան տվեց: Տիգրանուհին համբուրեց նրան:

- Հանգիստ քնիր: Ես հիմա կպառկեմ քո կողքին:

Տիկին Մարոն այլևս ոչ մի խոսք չավելացրեց: Այնինչ իրարամերժ մտքերը երկար ժամանակ հանգիստ չէին տալիս նրան:

Մուշեղն արդեն սպասում էր Անայիսին, երբ նա աշխատանքից հետո, մթերքները ձեռքին, վերադարձավ տուն: Նա ընկերների՝ Սամսոնի, Գոռի հետ նստած խմում էր: Անայիսը նկատեց, որ գարեջրի դատարկ շշեր կային սեղանի մոտ՝ անփութորեն ընկած: Շատ ծխելուց սենյակի էլեկտրական լույսի ներքո ասես գորշ մառախուղ էր կախվել: Հեղձուցիչ այդ մթնոլորտում նա ականայից բախվեց անարձագանք՝ ապակե հայացքների:

- Մեզ համար սուրճ թե՛ր և արագ ճաշ սարքիր: Մենք սաստիկ քաղցած ենք,- առնությունք կարգադրեց Մուշեղը:

Անայիսն առանց պատասխանելու մտավ խոհանոց: Եվ մինչև ճաշը կլիներ, նա էլեկտրական սալիկի վրա մի քիչ նրբերշիկ խաշեց և

պանրի ու թթու կաղամբի հետ տարավ սենյակ: Իսկ երբ ուզեց սեղանից հավաքել կեղտոտ բաժակներն ու ավելորդ իրերը, սեղանակիցներից մեկը՝ Սամսոնը, դարձյալ լցնելով օդին՝ ասաց.

-Սպասե՛ք, ես ցանկանում եմ խմել նրանց համար, ովքեր գիշերները չեն քնում, որ խաղաղ ննջեն մարդիկ, ովքեր բաժակի փոխարեն պահում են ավտոմատը, ովքեր բոլոր տոները դիմավորում են պահակության մեջ: Հայ գինվորների և մեր գինակից ընկերների կենացը...

Անայիսը նորից մտավ խոհանոց ու անտրամադիր մտտելով լուսամուտի մոտ՝ մտածեց աղջկա մասին: Ամեն անգամ, երբ ինքը մեցակ է թողնում դստերը, ոչ մի տեղ հանգիստ չի գտնում: Թեև, ինչ խոսք, ուշ երեկոյան տուն է վերադառնում: Սակայն Մուշեղից է կախված, թե որ ժամին պետք է հեռանա: Պատահել է, որ չափազանց համառելու դեպքում բռունցքի հարվածներ է ստացել: Իսկ բռնությունը հանդուրժում է, որովհետև վախենում էր սպառնալիքներից: Դեռ կես ժամ էր չէր անցել, երբ նա գոռաց սենյակից.

-Աղջի, ու՞ր մնաց մեր ճաշը:

Անայիսն իսկույն ևեթ հայտնվեց դռան առջևում:

-Մի քիչ էլ համբերե՛ք, շուտով ճաշը կեփվի:

Այլևս ավելորդ ոչ մի խոսք չասելով՝ նորից գնաց խոհանոց: Նա միշտ տհաճություն էր զգում, երբ Մուշեղը զռեհիկ արտահայտություններ է անում: Ի վերջո, ինքը հաշտվել է այն մտքի հետ, որ ինքը նրան պետք է ճաշ եփելու, լվացք անելու և ֆիզիկական պահանջները բավարարելու համար: Ինքն այժմ ոչ մի կերպ չէր հաշտվում նրա ո՛չ գործողությունների, ո՛չ էլ ցանկությունների հետ: Այդ ինքնըստինքյան նշանակում է, որ նրան այլևս չի սիրում: Արդյո՞ք դաժանությունից չքացավ սերը, թե՞ այն երբեք էլ չի եղել: Գուցե իրականում նրան ընդունեց և խղճաց որպես պատերազմից տուժած հայրենասեր տղամարդո՞ւ: Անայիսը զգաց, որ ինչքան դրա շուրջը մտածում էր, այնքան խճճվում էին իր մտքերն այնքան, որ նույնիսկ կասկածամիտ էր դառնում ինքն իր հանդեպ:

Տասը-տասնհինգ թույն անց նա տաք ճաշը վերջապես մատուցեց: Այս անգամ Մուշեղը գոհ չմնաց ճաշի համից ու դարձյալ ընկերների ներկայությամբ գոռաց ընկերուհու վրա:

-Աղջի, շուտ արի՛ այստեղ: Էս ի՞նչ լափ ես սարքել մեզ համար: Դու քեզ ձե՞ռ ես առել, թե՞ մեզ ես փորձում ծաղրել:

Անայիսը հուսահատ տեսքով չիմացավ՝ ինչպես արդարանալ, թեև հանցանք չի գործել:

-Բայց այդ ճաշն առաջին անգամը չէ, որ պատրաստում եմ: Երբեք չես դժգոհել:

Մուշեղը ցանկանալով մինչև վերջ ընկերների մոտ ցույց տալ իրեն, ձայնն ավելի բարձրացրեց.

-Մոտեցի՛ր ինձ, որ քեզ ապացուցեմ իմ ասածը,- նախկին ազատամարտիկը սեղանից վերցնելով հանքային ջրով լի բաժակը՝ շարտեց նրա երեսին.

-Իսկ հիմա գնա՛ այստեղից:

Անայիսը վիրավորված, ձեռքերով մաքրելով դեմքը, հեռացավ՝ ատելությամբ լցվելով Մուշեղի հանդեպ: Նույնիսկ վախեցավ ծպտուն հանել, քանի որ իր արցունքներից նա կարող էր ավելի զայրանալ: Միայն կամաց աղոթեց Աստծուն, որ իրեն հնարավորինս շուտ ազատեր դաժան ընկերոջ ճիրաններից:

Յաջորդ օրն Անայիսը համարձակվեց աշխատանքից հետո չհանդիպել Մուշեղին: Վերադառնալով տուն՝ նա որոշեց լինել աղջկա կողքին: Դեռ բախտը բերել է, որ գոնե դուստրն իրեն հասկանում է: Մի՞թե քիչ է պատահել, երբ նա մտնելով ննջասենյակ, տեսել է մորն արցունքն աչքերին: Չկարողանալով սփոփել նրան՝ ետ է քաշվել, որ մայրը փոքրիշատե հոգու խաղաղություն գտներ: Եվ ինչքա՞ն պիտի շարունակվեր այդ տազնապալից վիճակը: Ինքը նույնպես մի քանի անգամ փորձել է պաշտպանել մորը՝ հեռախոսով կոպտելով Մուշեղին, որպեսզի հանգիստ թողնի իր մայրիկին: Սակայն ամեն ինչ ապարդյուն ջանքեր էին: Երեկոյան տեսնելով, որ Անայիսը չկա, ոչ միայն զայրությամբ զանգեց, այլև սպառնաց.

-Եթե չգաս ինձ մոտ, հենց հիմա կգամ ու կմորթեմ քեզ աղջկադ հետև կվառեմ տունդ: Աղջի, լսու՞մ ես, թե ինչ եմ ասում: Վեր կաց ու արի՛ այստեղ:

-Այսօր չեմ կարող: Խոստանում եմ գալ վաղը,- վախից կարծես Անայիսի արյունը եռում էր:

-Ինձ հետ հերիք է վիճես: Դու պարտավոր ես ենթարկվել,- բղավեց Մուշեղը՝ նյարդայնությունից շարտելով հեռախոսը:

Աղջիկը՝ Մարին, տեսավ, թե ինչպես մայրը կրկին հուզվեց և նրա աչքերն ասես արյունով լցվեցին:

-Մայրիկ, խնդրում եմ, մի՛ գնա: Ես համարյա միշտ մենակ եմ լինում: Մենք հանդիպում ենք իրար միայն քնելուց առաջ: Քեզ շա՛տ եմ կարոտում...

-Արի՛ ինձ մոտ, աղջիկս: Ինքս էլ չգիտեմ, թե ո՞նց ազատվեմ այդ սադիստից,- Անայիսը գրկելով դստերը՝ մի ակնթաթ լուռ փակեց կուպերը: Իրեն այնպես անպաշտպան զգաց: Նա մտածեց ըմբոստանալ, չենթարկվել Մուշեղին:- Ոչ մի տեղ չեմ գնա, հանգստացիր:

Սակայն կես ժամ էլ չէր անցել, երբ Մուշեղը հայտնվեց: Նա տուն չմտավ, այլ կանգնելով պատուհանի տակ, գոռաց.

-Անայի՛ս, իջի՛ր ներքև... Աղջի, լսու՞մ ես ինձ:

Անայիսի մարմնով սարսուռ անցավ: Չէր կարող չլսելու տալ: Վախեցավ, որ հարևանների մոտ կխայտառակվի վերջնականապես: Ու մինչև լուսամուտը կբացեր՝ նրան պատասխանելու համար, Մուշեղը հանելով ատրճանակը՝ կրակեց օդում: Առանց էլեկտրական հոսանքի՝ իրենց բնակարաններում խավարի մեջ ապրող մարդկանց համար այն նման էր հանկարծակի ականի պայթելուն: Ցավոք, պատերազմի դաշտում ստրես տարած մարդկանց մոտ վերանում են բարոյական արգելքները: Նրանց մոտ իշխում է զգացմունքայնությունը և ինստինկտը: Մարդը գործում է ինչպես ավտոմատ՝ իր կամքից անկախ: Նա մի քանի աստիճան ընկնում է քաղաքակրթության աստիճաններից, քանի որ նրա վարքը համարյա անգիտակից է: Թիկունքի մարդիկ պետք է հանդուրժողականություն ցուցաբերեն այդպիսիների նկատմամբ:

Անայիսը դուրս գալով պատշգամբ՝ ձեռքով նշան արեց, որ շուտով կիջնի: Մարին կախեց հոնքերը: Միանգամից հօդս ցնդեց նրա ուրախությունը: Դարձյալ մտածեց այն մասին, որ մայրը ստիպված պիտի հետևեր այդ բռնակալի կամքին: Արագ հագնելով վերարկուն՝ Անայիսը փաթաթվեց դստերը.

-Կներես ինձ, աղջիկս: Ես պիտի գնամ, հակառակ դեպքում նա երկուսիս էլ կզնդակահարի:

-Չեմ հավատում, մայրիկ: Նա միայն մեզ վախեցնում է:

-Եվ իզուր ես այդպես մտածում: Նա սաստիկ դաժան է և արյունարբու:

-Իսկ եթե ոստիկանությամբ դիմենք:

-Հնարավոր չէ: Նա մեզնից վրեժ կլուծի: Խելոք կմնաս, մինչև ես կենդանի տուն կվերադառնամ...

Մուշեղը մեքենայի մեջ սպասում էր: Անայիսը վախեցած իրեն զգեց մեքենայի մեջ:

Չգիտես ինչու, կիրակի օրը նախաճաշից հետո, Տիգրանուհին դուրս գալով տնից, իրեն զգաց պատահական սարդոստայնի մեջ հայտնված, թևերն հուսահատ թափահարող անզոր բզեզի: Նա գնումներ կատարելու նպատակով ուզեց գնալ շուկա: Տանը մրգերից ու մթերքներից չնչին բան էր մնացել: Առատ գնումներ անելով՝ երկու ծանր տոպրակներով Տիգրանուհին հասնելով շուկայի կանգառը՝ փորձեց ավտոբուս բարձրանալ: Սակայն տեսնելով, որ շարժվելու տեղ չկար, անմիջապես իջավ: Նաև նկատեց, որ ձեռքի սև պայուսակը, որ զգած էր ուսով, բաց էր մնացել: Մի պահ տագնապ ապրեց: Չլինի՞ր այն չէր փակել առևտուր անելիս: Հետո հիշեց, որ ձուկ առնելուց հետո անմիջապես փակել է պայուսակի գրպանները: Ստուգեց դրամապանակը: Այն անհետացել էր: Իզուր ջանք գործադրեց փողը գտնելու համար փորփրել ձեռքի տոպրակները: Իսկույն ևեթ հասկացավ, որ գրպանահատները հասցրել են դրամապանակը թռցրել՝ ավտոբուս բարձրանալիս: Իսկ նման իրարանցման մեջ գողություն հաճախ էր լինում: Ահա ինչու այդ սաստիկ ցուրտ եղանակին Տիգրանուհու ճակատը քրտինքով պատեց: Նա մի ակնթարթ չփոթահար նայեց շուրջը՝ տագնապով շշնջալով.

-Վա՛յ, դրամապանակս...

Երիտասարդ երկու տղաներ, որ կանգառում կանգնած էին իր կողքին, տեսնելով նրա վախից ու ցրտից կապտած դեմքը,, հարց-

-Ի՞նչ է պատահել: Ինչո՞վ կարող ենք օգնել:

-Փողերս գողացան... Ես անգամ տուն հասնելու համար դրամ չունեմ,- հուսահատությունից Տիգրանուհին հազիվ զսպեց արցունքները: Ցավալին այն է, որ պայուսակում էին գտնվում իր ողջ փողերը:

-Ինչո՞վ պիտի տուն հասնեք... Դարծյա՞լ ավտոբուսով,- հարցրեց նրանցից մեկը:

-Ո՛չ, տրամվայով,- պատասխանեց Անայիսը՝ մտածելով, որ տրամվայի ուղեվարձն ավելի քիչ է ավտոբուսից:

-Ես էլ եմ տրամվայով մեկնելու: Մի՛ անհանգստացեք, ձեր փոխարեն տրանսպորտի վարձը կվճարեմ,- առաջարկեց նույն տղան:

Հուզմունքից Տիգրանուհու կոկորդը խեղդվեց: Նա տուն չհասած՝ մտածեց հարազատների մասին: Ինչպե՞ս պիտի կերակրի նրանց: Դրամապանակի մեջ էր նաև իր տան մեկ ամսվա վարձավճարը: Շնչասպառ հասնելով տուն՝ նա կամաց ծեծեց դուռը: Երեխաները մոր հետ անմիջապես հայտնվեցին իր առջև: Տիկին Մարոն օգնեց աղջկան: Ձեռքից վերցնելով ծանր պայուսակները՝ տարավ խոհանոց: Ու մինչև նա կհաներ վերարկուն, մայրն ուրախ լուր հաղորդեց դստերը.

-Վերջապես երկու օր հետո մենք կմեկնենք: Հայրդ զանգեց և ասաց, թե մենք ո՞ր վարորդի մեքենայով կարող ենք ապահով տեղ հասնել:

-Շատ լավ, մայրիկ ջան: Տեսնում եմ, թե ինչքան ես շտապում տուն հասնել,- տխուր ասաց նա, զայրանալով ինքն իր դեմ, որ ունեցած գումարը պահել է պայուսակում:

-Դու էլ արի մեզ հետ: Միասին կանցկացնենք Ամանորը:

-Չեմ կարող, մայրիկ ջան, Փարիզից պիտի զանգեն: Սիփանի ընկերը խոստացել է օգնել ինձ մասնակցելու առաջիկայում կազմակերպվող ցուցահանդեսին:

-Իսկ եթե չզանգի, դու մենա՞կ պիտի անցկացնես Նոր տարին այս մթնոթյան մեջ: Նորմալ մարդն անգամ կգժվի նման պայմաններում:

-Չես սխալվում, մայրիկ ջան: Մենք ազգովի արդեն կիսախելառ վիճակում ենք:

-Երևում է, աղջիկս, որ շատ ես հոգնած: Կուզե՞ս տաք թեյ լցնեմ, մինչև ճաշ կպատրաստեմ,- հարցրեց մայրը:

-Չէր խանգարի: Բայց սկզբում երեխաներին միոգ տուր, թող ուտեն: Քաղցրավենիքը կմնա ճաշից հետո...

Տիկին Մարոն կատարելով աղջկա խնդրանքը՝ տաք թեյ լցրեց: Նա միայն այդ ժամանակ նկատեց, որ Տիգրանուհին չափազանց թախծոտ է:

-Սիփանի հետ վիճե՞լ ես:

-Ինչի՞ց ենթադրեցիր: Չէ՞ որ քո ներկայությամբ երեկ մենք իրար խաղաղությամբ հրաժեշտ տվեցինք,- հետո մի կու՞մ անելով թեյից՝ շարունակեց:- Մայրի՛կ ջան, գողացել են դրամապանակս: Հիմարի պես տանը մի սու անգամ չեն թողել:

-Աստված իմ, մեզ միայն դա էր պակասում: Ի՞նչ պիտի անենք,- անհանգստացավ տիկին Մարոն:

-Կփորձեն մոտիկ հարևանից պարտքով փող վերցնել: Իմ նկարների դիմաց գումարը հավանաբար կտան Ամանորի նախօրյակին,- մտախոհ պատասխանեց Տիգրանուհին:

-Դու այնքան մթերք ես բերել, որ մեզ մի շաբաթ կհերիքի: Հայրդ էլ ճանապարհի համար մեր տոմսերի փողն արդեն նախապես վճարել է:

-Մայրի՛կ ջան, բայց ես հացի փող չունեմ...

Տիկին Մարոն այս անգամ շվարած հայացքով նայեց աղջկան ու ոչինչ չպատասխանեց:

-Մի՛ մտածիր: Դու ճաշ պատրաստիր, ես էլ կորոչեմ, թե ինչ անել:

Այնինչ Տիգրանուհին այժմ ծնողների աջակցության կարիքն ուներ: Նա թեյը խմելուց հետո մտախոհ դուրս եկավ սենյակից: Բարեբախտաբար, հարևանուհուց կարողացավ պարտք վերցնել: Իսկ երկու օր անց նա Սիփանի հետ իր հարազատներին ճանապարհեց Մեղրի:

Նախքան Ամանորը Տիգրանուհին էլի գումարներ ստացավ: Այդպիսով, նա ոչ միայն իր հարևանի պարտքը վերադարձրեց, այլև լրացուցիչ գումարներ կատարեց Նոր Տարին դիմավորելու համար: Դեկտեմբեր ամսվա բնակվարձը հնարավոր չեղավ մուծել: Դա նշանակում է, որ պետք է այն իր տանտիրուհուն վճարի հունվարի ամսավճարի հետ: Նման անհանգիստ հոգեվիճակում էլ փոր-

ձեց դիմավորել Ամանորը: Սիփանը խոստացավ իր ծնողների հետ Ամանորյա գիշերվան մեկ ժամ տրամադրել, այնուհետև մնացած ժամանակն անցկացնել Տիգրանուհու կողքին: Լավ էր, որ գոնե ծննդյան տոների նախօրեին վերջապես էլեկտրական լույս ունեցան թաղի բնակիչները: Տիգրանուհու միակ ուրախությունը Սիփանի ներկայությունն է: Նա թեկուզև հնարավորություն չուներ իրեն նյութապես աջակցելու, բայց հաճելի արվեստաբանի հետ հեշտ էր կիսել թե՛ թանձր խավարը, թե՛ զրուցելը կյանքի դժվարությունների մասին: Սիփանը ծանր օրերի իր անփոխարինելի խորհրդատուն էր:

Ամանորի գիշերը Տիգրանուհին, տոնական սեղանի առջև միայնակ նստած, սպասեց Սիփանին: Նրա զրուցակիցը տան մեջ սև ու սպիտակ էկրանով իր հեռուստացույցն է, որի միջոցով գոնե հիմա հնարավորություն ունի լսելու մարդկային ձայները, ունկնդրել ուրախ երգերն ու տոնական մաղթանքները: Ընկերն իրեն շատ սպասեցնել չտվեց: Նա հայտնվեց ժամը տասներկուսն անց քառասունհինգ րոպեին: Տիգրանուհուն նվիրեց յուղաներկով արված մի կնոջ հետաքրքիր նկար: Նաև ձեռքին շոկոլադի տուփ կար և ամսագիր, որը մեկնեց ընկերուհուն.

-Բացի՞ր ամսագրի իմնասունհինգերորդ էջը ու կարդա,- խորհրդավոր ժպտաց Սիփանը:

-Ես կկարդամ այն ժամանակ, երբ մեռակ կլինեմ: Իսկ դու արագ բացի՞ր շամպայնը:

Սիփանը հանելով վերարկուն՝ մոտեցավ սեղանին: Ջգաց, որ Տիգրանուհին իրեն անվերջ ոչ միայն սպասել է, այլև համարյա ոչինչ չի կերել:

-Չոդվածը հետո կկարդաս, միայն թե ծանոթացիր հոդվածի վերնագրի հետ,- շարունակեց Սիփանը:

Տիգրանուհին հասկացավ, որ նա անակնկալ էր ուզում անել: Որպես արվեստաբան իր մասնագիտական պարտքն է կատարել՝ Ամանորյա համարում ներկայացնելով տաղանդավոր նկարչուհու արվեստը: Չոդվածն ուներ «Չոգու երկիր» վերնագիրը: Այնտեղ տեղ էին գտել ինչպես նրա դիմանկարը, այնպես էլ նկարներից երկուսը: Տիգրանուհին երախտագիտությամբ լի հայացքով կրկին ողջագուր-

վեց ընկերոջը: Սիփանը շամպայն լցրեց սևեռուն՝ նայելով նկարչուհու աչքերին.

-Շնորհավոր Նոր տարիդ, սիրելիս: Քեզ ցանկանում եմ աշխարհի բոլոր ուրախությունները և հարյուր տարվա առողջություն: Այս Նոր տարին թող լինի քեզ համար հրաշքների տարի և դժվարությունները մնան անցնող տարում: Թող մեր սերն էլ ծաղկի վարդի պես և չթառամի այս ձմռան ցրտին:

Երկուսով մինչև վերջ դատարկեցին բաժակները: Տիգրանուհին էլ իր հերթին որպես ամանորյա նվեր մի մեծ փաթեթ մեկնեց նրան: Դա Սիփանի դիմանկարն էր:

-Աստված իմ, դու իսկապես տաղանդավոր ես: Ամեն ակնթարթ պատրաստ ես զարմացնել ու ոգևորել ինձ: Ե՞րբ հասցրիր նկարիս վրա աշխատել...

-Մի՞թե դա եական է: Ես ուրախ եմ, որ այն շատ հավանեցիր: Թեև անկեղծ ասած, համոզված էի, որ նկարը կհաջողվի, որովհետև պատկերդ միշտ սրտիս մեջ է...

-Թանկագինս, արի՛ ինձ մոտ: Ուզում եմ ի սրտե շնորհակալությունս հայտնել քեզ,- Սիփանն այս անգամ պինդ փաթաթվելով Տիգրանուհուն՝ կրքոտությամբ երկար համբուրեց նրա շուրթերը:

Տիգրանուհին մի պահ շփոթվեց: Կյանքում երբեք իրեն այդքան երջանիկ չէր զգացել: Ափեափ լցված սիրով ու կարոտով՝ նա անգամ քաղց չզգաց: Միայն հեղուկի կարիք ուներ, քանզի թվում էր, թե ներքին կրակից կարող էր այրվել ու նույնիսկ մոխրանալ: Նա նորից իր համար հանքային ջուր լցրեց: Սիփանն օգտվեց վաղուց եփած սառը սրճից: Ու քանի որ երկուսով վաղուց հեռուստացույց չէին դիտել, հաճույքով հետևեցին տոնական համերգին: Մերթընդմերթ, գողունի հայացքներ, մտքեր փոխանակեցին՝ պատասխանելով նաև հեռախոսազանգերին: Սակայն Սիփանը մտածեց Ամանորը փոքր-ինչ զվարթ անցկացնելու համար այցելել բարեկամին և դատարկելով բաժակը՝ դիմեց Տիգրանուհուն:

-Չայցելե՞նք Գասպարին: Չեմ կասկածում, որ նրանք հիմա անհամբեր մեզ են սպասում:

-Հաճույքով քեզ կմիանամ, միայն թե ցանկություն ունեն նրանց այցելելուց առաջ քայլել ձյունների միջով:

-Առարկել չեմ կարող, որովհետև այս Ամանորին քո յուրաքանչյուր ցանկությունն ինձ համար օրենքի ուժ ունի,- դարձյալ կատակեց Սիփանը՝ հագնելով վերարկուն:

-Այնպես կուզեի, որ իմ ցանկությունները հաշվի առնես նաև մնացած օրերին,- Տիգրանուհին օգտվելով հարմար առիթից՝ երազային հայացքն ուղղեց սիրած տղամարդուն:

Սիփանը միանգամից հասկացավ, թե ամենից առաջ ինչ ենթատեքստ կա նրա խոսքերում: Նա չէր ուզում, որ ինքը բացակայեր մայրաքաղաքից: Գուցե պատճառը սիրուց առաջացած վախն էր:

Հրաշալի եղանակ էր դրսում, երբ երկուսով հայտնվեցին փողոցում: Ձյան խոշոր փաթիլները փողոցների էլեկտրական լույսերի ներքո հիշեցնում էին հրեշտակների թևերից իջած ճերմակ թիթեռնիկների ճոխ պարահանդես: Տիգրանուհուն թվաց, թե ինքը երազի մեջ է: Մշտապես խավարում ապրող մարդու համար փողոցների լույսն անզամ չափազանց շռայլություն էր թվում: Սիփանը մոտենալով մոտակա էլեկտրական սյանը՝ հայացքը դեպի երկինք հառեց: Արդյո՞ք ինչ-որ բան աղերսեց Ամենատիրոջից, թե՞ պարզապես փորձեց հիանալ ձյան փաթիլներից ստացած բերկրանքից: Դժվար էր կանխազգալ: Այնինչ Տիգրանուհու աչքին այդ գեղեցիկ ակնթարթին նա նման էր Քրիստոսի աշակերտներից ցանկացած մեկին՝ իր տեսքով, խելացի հայացքով, բարությանը: Նա քայլելով հասավ Սիփանի մոտ՝ քնքշորեն բռնելով նրա ձեռքից:

-Երանի՛ այս հրաշալի պահը շարունակվեր,- խոր հոգոց հանեց Տիգրանուհին:

-Մովորի՛ր ապրել ներկայով ու դու քեզ երջանիկ կզգաս:

-Երջանիկ կարող եմ լինել միմիայն քո կողքին: Փաթաթվի՛ր ինձ, իմ հոգին թող ավելի ու ավելի սիրով լցվի:

Սիփանը պինդ գրկեց Տիգրանուհուն՝ ջերմորեն համբուրելով նրա տաք ու ձյան փաթիլներից խոնավացած շուրթերը:

-Եթե ես կախարդական փայտիկ ունենայի, կլուծեի քո բոլոր խնդիրները, ցավոք...

Նկարչուհին իր սառած մատները մոտեցրեց սիրածի շուրթերին.

-Այս գիշեր պետք չէ ափսոսանքի խոսքեր շշմշալ: Դու առանց կախարդական գործիքի էլ ուզածդ ցանկությունը կիրականացնես: Հավատա՛ ինքդ քեզ, նույնն էլ ինձ եմ կամենում:

-Ես ինձ ուժեղ կզգամ, եթե ինչ-որ հարցում օգտակար լինեմ քեզ:

-Բացի՛ր ձեռքիդ շանպայնի շշերից մեկը, ես ուզում եմ խմել քո գայթակղիչ հայացքի կենացը: Հիշի՛ր, դու իմ երկրորդ շնչառությունն ես, և վաղվա օրվա հանդեպ հավատս ձեռք եմ բերում քո շնորհիվ:

Սիփանը ոգևորվելով Տիգրանուհու նտքերից՝ շանպայնի շիշն այնպիսի թափով բացեց, որ շշի պարունակությունից հազիվ կեսը մնաց: Մնացած կեսը միասին ըմպելուց հետո միայն որոշեցին այցելել Գասպարին:

Ամանորյա գիշերը վացուց էր կիսվել:

Մարդու երազանքը հաճախ նմանվում է փոթորկալից ծովում անառագաստ շարժվող մի նավի, ուր նավորդը մտածում է փրկվել հրաշքի ուժով: Իգուր էր Տիգրանուհին մտածում այն մասին, որ Փարիզից իրեն կզանգեն ու կիրավիրեն ցուցահանդեսին: Նույնիսկ այդ զանգի պատճառով աշխատում էր ավելի շատ մնալ տանը: Գործի բերումով էլ եթե բացակայում էր տնից, անպայման շուտ էր տուն վերադառնում: Արդեն հունվարի կեսերն էին, այնինչ տան վարձի համար դեռ նյութական միջոցները չէին հերիքում: Թեկուզ տանտիրուհին բացակայում էր քաղաքից, սակայն նրա տղան հասցրել էր մի քանի անգամ զանգել իրեն՝ հիշեցնելու համար վարձավճարի մասին: Ցավոք, շրջապատում չկար որևէ մեկը, որ կարողանար օգնել Տիգրանուհուն: Պատերազմող երկրում տիրող վիճակն այնպիսինը չէր, որ մարդն ի վիճակի լիներ սատարել կողքինին: Նույնիսկ ապրելն անգամ նման պայմաններում թերևս ավելի հեշտ էր, քան մեռնելը: Վերջին երկու օրերի ընթացքում Տիգրանուհենց բնակելի շենքում էլեկտրական հոսանքը գրեթե չանջատեցին: Պատճառն այն էր, որ հարևաններից մեկը մահացել էր: Մահացողի հարազատները

փող չունեին դագաղ պատվիրելու համար: Ստիպված եղան վարձով դագաղ վերցնել և գիշերը հանգուցյալին հողին հանձնել: Նման դեպքերը եզակի չէին: Ուստի մարդիկ դիմակայում էին, որովհետև համարյա նույնատիպ էին բոլորի հոգսերն ու մտահոգությունները: Թեկուզ, ինչ խոսք, այդ օրերին կային այնպիսիները, ովքեր կամ կյանքից հեռացողին էին երանի տալիս կամ էլ երկիրը լքողին: Հեռանում էին հայրենիքից, վաճառելով իրենց տներն ու ունեցվածքն էժան գներով, միայն թե ազատվեին համատարած խավարից ու ցրտից: Տիգրանուհին ուզեմար էլ, հեռանալ չէր կարող, որովհետև սեփական բնակարան չունէր: Անշուշտ, բնակարանի խնդիր չէր ունենա, եթե ամուսնանար: Սիփանի հետ դեռ չէին խորացել իրենց կապերը: Նրա մտադրությունների մասին ոչինչ հայտնի չէր: Անորոշության մեջ էր իր ողջ կյանքը: Այդ վիճակում ամենադժվարը երազանքների մասին մտածելն է: Իսկ արվեստագետը եթե չերազեց, չի կարող ստեղծագործել: Տիգրանուհու կտավներում ընդգծված թախիծ կար, սակայն առկա էր այն լույսը, որը նրան ապրեցնում էր Սիփանը: Նա հունվարի վերջերին հաստատ որոշել էր մեկնել Սիբիր՝ մի խումբ նկարիչների հետ: Սիփանն էլ նյութական խնդիրներ ուներ և Տիգրանուհուն չէր կարող օգնել: Այսինքն՝ նա չուներ հուսալի զոնե մեկ հենարան: Միակ հենարանն իր կանքի ուժն էր: Տիգրանուհին շուտ հանձնվողներից չէր: Թեկուզ վերջին անգամ նա չափազանց վիրավորված զգաց, երբ տանտիրոջ որդին հանդիպելով իրեն՝ սպառնալիքով խոսեց հետը:

-Եթե մի քանի օրվա ընթացքում երկու ամսվա վարձավճարը չտաս, ես կգամ և ինչ ուզեմամ, քո իրերից վարձի տեղ կվերցնեմ:

-Ի՞նչ կարող ես վերցնել,- հարցրել էր Տիգրանուհին:

-Քո նկարներից,- պատասխանել էր նա ու շարունակել:- Պատից կախված քո գորգերից: Իսկ եթե ինձ դիմադրես, կհայտնվես փողոցում:

Տիգրանուհին նրան դառնությամբ ճանապարհել էր՝ մտածելով, արդյո՞ք պատերազմը, կյանքի պայմաններն էին նրանց դաժան դարձրել, թե՞ այդպիսին է առհասարակ յուրաքանչյուր սեփականատիրոջ հոգեբանությունը: Հիշեց հայտնի առածը. «Կուշտը սովածին

մանր է բրդում»։ Ո՛չ, ինքը թույլ չի տա, որ ինչ-որ մեկը վերաբերվի իրեն այնպես, ինչպես ուզում է։ Եվ Տիգրանուհին որոշեց, որ իր վերջին ոսկյա մատանիները կվաճառի ոսկու շուկայում։ Ոչ ոքից օգնություն չի խնդրի։ Նա մյուս օրն այդպես էլ արեց։ Սակայն ստիպված էր տեղափոխվել այս անգամ նույն շենքում գտնվող ուրիշ բնակարան։ Տեղափոխության հարցում նրան օգնեց Սիփանը։ Իսկ հաջորդ օրը նա մեկնեց։ Տիգրանուհին մնաց մենակ։ Նոր տանտիրուհին, քանի որ ապրում էր Ռուսաստանում, վեց ամսվա վարձավճարը միանգամից պահանջեց։ Խեղճ նկարչուհին կարծես նյութականից բացի ոչնչի մասին մտածելու ժամանակ չուներ։ Սիփանին կարոտելով հանդերձ, ավելի քիչ էր նրան իր մտքերում տեղ տալիս։ Նրա մասին հուշերը ետին պլան մղվեցին։ Այժմ էլ առաջնահերթ խնդիրներից էր իր նկարների վաճառքը։ Շաբաթ օրը նա առավոտից մինչև ուշ երեկո կանգնած էր մնացել իրեն բախտակից նկարիչների մոտ՝ Մարտիրոս Սարյանի արձանի տարածքում։ Ոչ մի նկար չծախվեց։ Նկարիչները հասկանում էին, որ իրենց նկարները չէին վաճառվում մի պատճառով։ Մարդկանց մեծ մասը հացի փող չուներ։ Նրանց կտավները բավականին ցածր գներով ձեռք էին բերում տարբեր առիթներով Հայաստան ժամանած սփյուռքահայ տուրիստները։ Ցավոք, օտարազգի մարդիկ ավելի բարձր էին գնահատում նրանց արվեստը և վարձատրութուցն էլ նկարների դիմաց շոշափելի էր։ Այսպիսով, հայ նկարչի հացի խնդիրը կապված էր երջանիկ պատահականությունից։ Տիգրանուհին այդ ձախտորդ օրվա հաջորդ առավոտյան իր հարևաններից մեկի հետ հայտնվեց Հրազդանի տոնավաճառում։ Տնից վերցրել էր նոր ու չօգտագործված իրեր՝ շորեր ու սպասքեղեն՝ հույս ունենալով, որ գոնե ինչ-որ բան կվաճառվի։ Ծանոթ դեմքերից խուսանավելու նպատակով սև ակնոցներ էր դրել։ Այստեղ էլ գնորդները քիչ էին։ Օրվա ավարտին նա հուսահատ ու քաղցած տուն վերադարձավ։ Ջգաց, որ սաստիկ սարսռում է ամբողջ մարմնով։ Նավթի վառարանի վրա թեյնիկը տաքացրեց։ Սակայն թեյը չօգնեց նրան։ Ջերմաչափը վերցրեց և դրեց թևատակին։ Ջերմաստիճանը խիստ բարձր էր։ Նա դողալով վեր կացավ տեղից, այս անգամ արդեն քացախով շփելով մարմինը։ Ու քանի որ ամբողջ օրը ոչինչ չէր կերել, մի կտոր

պանիր փաթաթելով լավաշի մեջ՝ ծուլորեն սկսեց ծամել: Այնպես անհրապույր թվաց կյանքն իր համար, որ Տիգրանուհին պառկելով սառն անկողնում՝ մի պահ նույնիսկ երազեց փակել աչքերը ու երբեք չարթնանալ: Ծանր մտքերի մեջ էր խորասուզված, երբ հանկարծ լսեց, որ իր դուռը ծեծում են: Նա բրոյա շալով փաթաթվեց և վերցնելով արդեն կիսով չափ հալված մոմը՝ հասավ միջանցք: Մթության մեջ, առանց դուռը բացելու, ուզեց իմանալ, թե ով է իրենով հետաքրքրվողը:

-Մի՛ վախեցիր, քո հարևանուհին է՝ Անուշը:

Երբ Տիգրանուհին բացեց դուռը, Անուշը միանգամից հասկացավ, որ նա հիվանդ է:

-Ինչո՞վ կարող եմ օգտակար լինել քեզ,- հարցրեց հարևանուհին:

-Շնորհակալ եմ, ոչինչ պետք չէ: Հավանաբար մրսել եմ: Բայց դու առաջ անցիր, թե չէ անհարմար է միջանցքում, այն էլ մթության մեջ իրար հետ շփվելը:

Անուշը ներս մտավ սենյակ: Մոմի լույսի տակ դժվար չէր նկատել ոչ միայն բացված անկողինը, այլև հնաճ ու մաշված կահույքի առանձին կտորները, որոնց ստվերները մմանվում էին տան սևացած առաստաղի և պատերի խոնավ պաստառների վրայով խորհրդավորությամբ քայլող սատանաների:

-Հազմվի՛ր, գնանք մեզ մոտ: Մենք վառարան ունենք, կտաքանաս:

-Չեմ ուզում: Անչափ զգացված եմ հրավերի համար:

-Առանց քեզ չեմ գնա: Անուսինս պնդեց, որ քեզ համոզեմ,- ասաց Անուշը տեսնելով, որ իսկապես կարիք չկար նման վիճակում համոզելու նոր հարևանուհուն, ուղղակի ասաց. -Դուռը բաց թող, ես հիմա կգամ:

Քիչ անց նա նորից հայտնվեց, իր հետ բերելով ելակի մուրաբայով թեյ և երկու թարմ հաց: Նրա ամուսինը որպես փոխսնօրեն էր աշխատում հացի գործարանում: Անուշը նստեց Տիգրանուհու մոտ, մրսածության դեմ հաբ տվեց խմելու և զրուցեց հետը, միաժամանակ սպասելով, որ տաքությունը կիջնի: Նա խոստացավ ամուսնուն խնդրել օգնելու նկարչուհուն: Երկու օր անց՝ ամուսինը՝ Թաթուլը, հայտնվեց կնոջ ուղեկցությամբ և իրենց գործարանի համար երկու

նկար վերցրեց՝ նկարչուհուն անմիջապես վճարելով գումարը: Տիգրանուհին միանգամից առողջացավ ու ոտքի կանգնեց՝ զգալով, որ իրականում ջերմությունը բարձրացել էր ոչ թե մրսածությունից, այլ հուսահատությունից, լարվածության այն զգացումից, որ ծանոթ մարդիկ կտեսնեին իրեն ու կխղճային: Կարծես Աստված նրան օգնության հասավ: Ի՞նչ կլիներ հետո, կարևոր չէր: Էականն այս անգամ այն էր, որ գթասիրտ մարդիկ դեռ կան, լույսի, հույսի, հավատի ժամանակները դեռ կգան:

Համարյա մեկ ամիս էր անցել Սիփանի բացակայությունից: Տիգրանուհին ոչ մի տեղեկություն չուներ նրանից: Այդ ողջ ժամանակաընթացքում նա գոնե մեկ անգամ չզանգեց: Նկարչուհու համար, անշուշտ, տարօրինակ էր նման վերաբերմունքը: Մի՞թե Սիփանին չէր հետաքրքրում իր ճակատագիրը: Չէ՞ որ նա տեսավ, որ ինքը փող չուներ այդ պահին՝ վեց ամսվա վարձավճարը մուծելու: Այնինչ ի սրտե երագում էր հանդիպել մեկին, ով ոչ միայն իրեն կսիրեր, այլև կկիսեր իր հոգսերը: Ինչու՞ չէ, նաև հուսահատվեց, որ բոլորովին միայնակ էր մնացել կյանքի հորձանուտում՝ դաժան հարվածների դեմ: Այդ հիասթափությունը մի քանի օր անց ավելի խորացավ, երբ խանութում հանդիպեց Սիփանի բարեկամին: Գասպարն այցելել էր նրա ծնողներին և տեղեկացել, որ ցուցահանդես կազմակերպելու նպատակով Սիբիր մեկնած նկարիչները տասը օր առաջ են վերադարձել Երևան: Սիփանը չկար, որովհետև նա այնտեղից ճանապարհվել էր Սանկտ Պետերբուրգ՝ այցելելու նախկին կնոջն ու որդուն: Հասկանալի էր, որ նա զգալի գումար էր վաստակել իր աշխատանքի դիմաց: Ահա ինչու իրեն չէր զանգել: Նա իր ջերմ կապերը շարունակում էր պահպանել կնոջ հետ, այլապես մի քանի օրն էլ կբավականացներ որդուն տեսնելու և նյութական աջակցություն ցույց տալու համար: Այսինքն՝ Տիգրանուհին սիրահարվել էր ամուսնացած տղամարդու, թեև Սիփանը պատմել էր, որ ինքը դեռ հինգ տարի առաջ էր օրինական ձևով բաժանվել կնոջից: Եվ նա վերադարձավ միայն երկու շաբաթ անց: Տիգրանուհին նրան ընդգծված սառնությամբ ընդունեց: Սիփանը նրան բերել էր այնտեղ վաճառքի հանած մեկ նկարից ստացած գումարը: Սակայն նա իսկույն ևեթ

գլխի ընկավ, որ նկարչուհին տեղյակ էր ամեն ինչի մասին: Սիփանը նույնիսկ չգիտեր, թե ինչպես իրեն պահեր: Յետո հիշեց, որ Տիգրանուհուն արժաթյա ականջօղեր և մատանի էր որպես նվեր բերել ու շփոթված գրպանից հանելով այն՝ դրեց սեղանին:

-Ինձ ոչինչ պետք չէ: Իզուր ես ավելորդ ծախսեր արել,- վիրավորված ասաց Տիգրանուհին՝ ձեռք չտալով իր համար բերված նվերին:

-Այդպես մի՛ խոսիր: Ես միշտ մտածում էի քո մասին:

-Մտածողը գոնե ժամանակ է գտնում զանգելու:

-Ես իսկապես միշտ զբաղված էի,- փորձեց իրեն արդարացնել Սիփանը:

-Քեզ պետք են միայն Երևանում, երբ կինդ կողքիդ չէ, երբ պետք է կյանքի խավարը կիսել մեկի հետ: Իսկ ես միամտորեն կարծում էի, թե սիրում ես ինձ,- Տիգրանուհու աչքերը լցվեցին արտասուքներով:

Սիփանը չհամառեց, չմեղանչեց: Նման անխոս պահվածքը հաստատեց նկարչուհու խոսքերի ճշմարտացի լինելը: Տիգրանուհին ընդամենը նրան դուր էր գալիս:

- Վաղուց ինձ չէր հաջողվում որդուս նյութապես օգտակար լինել ու տանջվում էի այդ պատճառով: Վերջապես հնարավորություն ընձեռվեց և ես որոշեցի նրան օգնել: Մի՞թե իրավունք չունեի:

-Դու կատարել ես քո հայրական պարտքը ու ճիշտ ես արել: Բայց դու այդ քաղաքում բարեկամ ունես և կարող էիր այնտեղ գիշերել որդուդ հետ ամենօրյա տեսակցությունից հետո, այնինչ մնացիր սպասարկելու կնոջդ: Դու ինձ դավաճանել ես: Ես քեզ այլևս տեսնել չեմ ուզում, որովհետև ազնիվ տղամարդ չես:

-Սպասիր, այդպես հե՞շտ ես ուզում ինձնից բաժանվել,- մռայլվեց Սիփանը:

-Մի՞թե դու էլ հեշտությամբ ինձ չես դավաճանում, միայն թե հարմար առիթ ստեղծվի քեզ համար: Այդքան շատ ես սիրում նրան, չբաժանվեիր: Եվ ընդհանրապես, քո անձնական կյանքն այլևս ինձ չի հետաքրքրում:

Սիփանը զգաց, որ իրենց խոսակցությունն այդպես շարունակվելով՝ իր համար անցանկալի վերջաբանը կունենար, ջանաց հաշտության եզրեր գտնել: Դրա համար նա գերադասեց քավել իր մեղքը:

-Ների՛ր ինձ, Տիգրանուհի, ես սխալվել եմ: Նման բան երբեք չի կրկնվի:

Տիգրանուհին մի ակնթարթ չիմացավ ինչ պատասխանել: Ջրույցի այդօրինակ շրջադարձը Սիփանի կողմից բոլորովին անսպասելի էր: Սակայն նա զգաց, որ իր հոգում ինչ-որ թանկագին բան միանգամից փշրվեց: Նկատելով նրա երկընտրանքը՝ Սիփանը հարցրեց.

-Ինձ չե՞ս ուզում հավատալ: Ինչու՞ ես լռում: Եթե քո մեջ ուժ չես գտնում ինձ ներելու համար, մի անգամ էլ դու դավաճանիր: Ես քեզ կներեմ:

-Դու անմիտ առաջարկություն ես անում:

-Ես չեմ ուզում քեզնից բաժանվել:

-Բայց ես սրտիս խորքում համոզված եմ, որ մեկ անգամ դավաճանողը նորից կդավաճանի:

-Ուրեմն՝ դու ինձ չե՞ս ներում,- աղերսալից հնչեց Սիփանի ձայնը:

-Չեմ կարող, ինձ հանգիստ թո՛ղ:

Սիփանը ստիպված բարձրացավ տեղից: Նա տխուր հագնելով աթոռին զցած բաճկոնը՝ լուռ հրաժեշտ տվեց տանտիրուհուն: Այնինչ Տիգրանուհին մնալով մենակ՝ ազատություն տվեց իր արցունքներին: Անլույս սենյակում նրա դառը հեկեկոցից մոմերը ցավագին հևացին: Նկարչուհու հոգում խավարը միանգամից իր թևերն արձակեց համայն աշխարհի վրա:

Եթե յուրաքանչյուր տոն իր խորհուրդն ունի, ապա տոնական վայելքն իր հետևանքներով նման է այն շքահանդեսին, որտեղ անսպասելորեն հայտնված ավազակների արձակած գնդակը կարող է ճակատագրական լինել:

Յունվարի քսանութին՝ բանակի օրվա առթիվ Մուշեղին հրավիրել էին մասնակցելու հանդիսավոր խնջույքի, որ կազմակերպվել էր արցախյան պատերազմի մասնակիցների համար: Այդ օրը մի խունք ազատամարտիկներ պարզևատրվեցին տարբեր աստիճանի մարտական փառքի շքանշաններով: Մուշեղը նույնպես ուշադրության

արժանացավ: Նա անգամ հնարավորություն ունեցավ տեսագրել միջոցառումը: Ուրախությունից կարգին գինովցել էր, թեկուզ նրան թվում էր, թե ամբողջությամբ վերահսկում է իրավիճակը, բայց դա իրականությանը չէր համապատասխանում: Տանն Անայիսը վաղուց ճաշը պատրաստել և նրան էր սպասում: Սակայն երբ Մուշեղը ներս մտավ դռնից, նա մի ակնթարթ սարսռաց վախից: Սովորաբար, մենք՝ բոլորս, կյանքում շատ բաներից ենք վախենում: Վախենում ենք հիվանդություններից և մահից: Վախենում ենք նոր փոխհարաբերություններից, վախենում ենք մենակությունից: Եվ վախենում ենք մարդկանցից ավելի, քան գազաններից: Նայելով նրա արյունոտ աչքերին, Անայիսը վախեցավ այն երեխայի պես, որ սարսափում է խավարից: Այդ պատճառով նա տխուր հայացքով ողջունեց տանտիրոջ հաջողությունը: Նախկին զիվորին դուր չեկավ ընկերուհու չոր վերաբերմունքը: Նրա անտարբերությունից կատաղելով՝ անասելի հայիությանքներ տվեց: Մուշեղն իրեն լավ էր զգում, և կարծում էր, որ ինքը բոլորից լավն է: Անսպասելիորեն չօհտես որտեղից որտեղ հայտնվեց նրա կրտսեր եղբայրը՝ Մամիկոնը: Վերջինիս չհաջողվեց հարթել վեճը: Անայիսը վախից ոչինչ չպատասխանեց: Նրա լռությունն էլ բուլորովին չօգնեց: Հանկարծ Մուշեղը սեղանից վերցնելով ապակյա մոխրամանը՝ շարտեց կնոջ վրա: Ցավոք, հարվածն այնքան դիպուկ էր, որ այն կպնելով կնոջ դեմքին՝ ջարդեց քիթը: Անայիսն այս անգամ սկսեց լացել ու ձեռքերի ավերով ծածկելով արնաթաթախ դեմքը՝ անօգնական ծղրտաց ցավից: Մուշեղն ավելի զայրացավ: Նա ոչ միայն ցավի զգացողություն չունեցավ, այլև, ընդհակառակը, սաստիկ չարությամբ լցվեց իր զոհի հանդեպ: Եթե պատերազմի դաշտում ինքը որպես զինվոր մոբիլիզացնում էր իր ֆիզիկական ուժերը թշնամու դեմ, ապա ուժերի նման լարվածությունը նույնքան վտանգավոր էր խաղաղ պայմաններում՝ շրջապատի նկատմամբ: Նա հանեց կոշիկը և սկսեց ուժգին հարվածներով խփել վիրավորվածի գլխին: Մամիկոնն ամեն կերպ փորձում էր նրան ետ պահել:

-Հերի՞ք է, հանգստացիր: Դու հո՞ շուն չես սպանում,- կատաղած ասաց եղբայրը:

-Բաց թող ինձ, ես նրան պիտի այսօր ոչնչացնեմ: Նրա դատապաշտպանն ես, թե՞ իմ եղբայրը:

-Քո եղբայրը... Մի՞թե կարիք կար այդ մասին վերստին հիշեցնել:

Օգտվելով առիթից՝ Անայիսը դուրս եկավ միջանցք և արագ հագնելով վերարկուն, բաղնիքի սրբիչներից մեկով փաթաթելով դեմքը, ուղղակի ճողոպրեց: Մթության մեջ հասավ մոտակա կանգառը, որտեղ մի քանի տղաներ տաքանալու համար մեքենայի անվադող էին վառել, իսկ իրենք տեղավորվել էին կտրված ծառի հաստ ճյուղի վրա: Հրդեհից արձակվող բոցեղեն լեզուները խավարի մեջ օգնություն աղերսող ջահեր էին հիշեցնում: Հետևաբար, դժվար չէր նկատել տուժածին: Անայիսը խնդրեց նրանց տաքսի փնտրել: Սակայն, ուշ երեկոյան ոչ միայն դժվար էր որևէ տրանսպորտով տուն հասնելը, այլև սովորական մեքենա գտնելը: Նման դեպքերում մարդու ճակատագիրը կախված էր միայն պատահականությունից: Բարեբախտաբար, տասը բուպե անց հեռվից մեքենայի լույս երևաց: Տղաներից երկուսը ուղղակի փակեցին մեքենայի ճամփան: Անայիսը տաքսով միանգամից հիվանդանոց գնաց: Հերթապահ բժիշկն ուշի-ուշով զննելով նրան՝ հայտնեց, որ և՛ ուղեղի ցնցում էր ստացել, և՛ ջարդվել էր քիթը: Նա հիվանդին խորհուրդ տվեց պառկել, միաժամանակ զգուշացնելով, որ պատրաստվի առավոտյան վիրահատության: Անայիսը զանգեց տուն՝ հաղորդելով աղջկան, որ մնալու է Մուշեղի մոտ: Խնդրեց աղջկան գիշերել մոտիկ հարևանուհու տանը: Ամբողջ գիշեր նա չկարողացավ աչք փակել: Մտածում էր, թե որտեղից պիտի վիրահատության համար փող գտնի: Մտածեց քրոջ միջոցով վաճառել իր ոսկե մատանիներից: Սակայն նյութականի հարցն ավելի հեշտ էր լուծելը, քան Մուշեղի հետ իր կապերը խզելու խնդիրը: Հենց իր հետ տեղի ունեցած դժբախտ պատահարն էլ հերիք էր վերջ դնելու ամեն ինչին:

Հաջորդ օրը նրան բարեհաջող վիրահատեցին: Այս անգամ նա ստիպված էր աղջկան իր մոտ կանչել՝ զանգելով նաև քրոջը: Իզուր էին բժիշկները ջանք թափում, կասկածելով, որ նա ջարդվածք էր ստացել ոչ աստիճաններից ընկնելու հետևանքով: Անայիսն իրեն պարտիզանուհու պես էր պահում: Ինչքան էլ չարացած էր Մուշեղի

դեմ, չուզեց տեսնել ճաղերի ետևում: Այդ քայլին դիմեց ոչ թե սիրուց, այլ՝ վախից: Դեռ ինքը նրա հանդեպ ոչ մի սխալ արարք թույլ չի տվել, երբ անտեղի պատժվում է: Հակառակ դեպքում իրեն հաստատ ողջ չի թողնի: Ի զարմանս նրա՝ հաջորդ օրը Մուշեղն այցելեց: Անայիսը նրանից վերցնելով վիրահատության դիմաց բժշկին տրվելիք վարձը՝ խնդրեց այլևս չերևալ իր կյանքում: Իսկ երբ ոտքի կանգնեց ու սկսեց քայլել, մի օր հանկարծակիի եկավ՝ հիվանդանոցի միջանցքում երես առ երես հանդիպեց Մուշեղի եղբորը՝ Մամիկոնին: Նրա դեմքին և գլխին վիրակապեր կային: Անայիսը քարացավ տեղում: Հաջորդ վայրկյանին հասկացավ, որ երկուսն էլ նրա զոհերն էին:

-Նորի՞ց եղբայրդ, թե՞ սխալվում եմ: Ազնիվ եղի՞ր, Մամիկոն:

-Կամաց խոսի՞ր, մեզ ոչ ոք չլսի: Իրավացի ես: Ես փորձում էի քեզ պաշտպանել:

-Նա խելագար է: Մենք նրանից երբեք չենք կարող ազատվել:

-Սկզբում նա ինձ ապտակեց, հետո ես՝ նրան: Այդ ծեծկռտուքի ընթացքում Մուշեղը բռնեց իմ բերանից ու պատռեց: Ես ավելի կատաղեցի՝ հարվածելով նրան, ուր կպատահեր: Այնինչ նա փոխանակ ետ քաշվելու, տեսնելով իմ արյունոտ վիճակը, ընդհակառակը, սեղանի մոտ դրված ծանր աթոռը վերցրեց՝ խփելով գլխիս ու ես անգիտակից ընկա հատակին,- Մամիկոնը լռեց ու մռայլվեց:

-Իսկ ինչպե՞ս այդ վիճակում հասար այստեղ:

-Նա ինձ հիվանդանոց բերեց: Պատժելուց հետո նա միշտ հոգ է տանում իմ մասին,- այս անգամ դառը ժպիտ երևաց Մամիկոնի աչքերում:

-Քեզ հետ էլի մնա՞ն դեպք է պատահել,- հետաքրքրվեց Անայիսը:

-Այո՛, մեկ տարի առաջ վեճի ընթացքում խոհանոցի կաթսայով գլխիս խփեց: Ոչ միայն ուղեղի ցնցում ստացա, նաև ականջս կարեցին:

-Բայց մի անգամ էլ կարող է նրա հասցրած հարվածը քեզ չցանկալի այն աշխարհն ուղարկել, որտեղից մարդիկ այլևս չեն վերադառնում,- Անայիսը սաստիկ զայրույթով լցվեց Մուշեղի դեմ:

-Ի՞նչ արած, ես միշտ ներում եմ նրան: Մուշեղն իսկապես հիվանդ է:

-Երանի՛ կյանքում երբեք չհանդիպեի նրան: Մի՞թե նա արցախյան պատերազմից առաջ շատ խաղաղ էր:

-2էի ասի, սակայն պատերազմը նրան ահավոր չարացրեց: Որոշ մարդկանց պես նա էլ ագրեսիվ դարձավ: Եղբայրս կարծես բոլորովին մոռացել է, որ մենք նրա հակառակորդները չենք: Ցավոք, եթե պատերազմում բազմաթիվ են մահվան դեպքերը, եթե շատ արյուն է հեղվում, մարդու մեջ առաջանում է ռեֆլեքս՝ դեմ գնալ մահվան: Այդ ռեֆլեքսը կարող է գործել և խաղաղ պայմաններում: Կարճ ասած, պատերազմը լայն առումով բռնություն է՝ իր դաժան հետևանքներով...

-Պետք է եղբայրդ բուժվի,- սարսափից լայնացան Անայիսի աչքերի բիբերը:

-Ես էլ գիտեմ, նա էլ է հասկանում, որ պետք է բուժվել, բայց հրաժարվում է:

-Այդ կնշանակի, որ նրան շրջապատող մտերիմ մարդիկ անվերջ վախի մեջ կմնան: Այսինքն՝ եղբորդ ներկայությունը մեզ համար պատերազմական ցնցող մի իրավիճակ է:

-Նա հարբած էր այդ օրը, բայց...

-Հիմա էլ դու՞ ես նրան պաշտպանում ինձնից:

-Ես ուզում եմ, որ նա ճիշտ ապրի: Եթե քո կողքին լավ է զգում, ուրեմն՝ դու նրան պետք ես և...

-Ես շատ եմ վախենում նրանից: Նույնիսկ հաճախ մտածում եմ, ում դիմեմ, որ ինձ ի վիճակի լինի փրկել,- աղերսագին հնչեց Անայիսի ձայնը:

Հայացք ձգելով նրա աչքերի տակ հարվածներից կապտուկներ առաջացած ու վիրակապով դեմքին՝ Մամիկոնի գթասրտությունը նորից շարժվեց: Սակայն այս անգամ նրա զայրույթն ուղղված էր ոչ այնքան եղբոր, ինչքան պատերազմի դեմ, որ քայքայում է մարդու հոգեկան վիճակը: Մշտապես գտնվելով վախի մեջ՝ այն աստիճանաբար վերածվում է տառապանքի ու ցավի: Այդ զգացումը թուլացնելու նպատակով էր Մուշեղն ալկոհոլ էր օգտագործում, որպեսզի ցավը չտարածվի մարմնի մեջ: Բայց ներքին վախը հաղթահարելու այդ միջոցը, անշուշտ, կործանարար էր թե՛ իր համար, թե՛ շրջապատի մարդկանց:

Անայիսը Տիգրանուհուն ավելի ուշ զանգեց: Թեև չէր ուզում որ նա իրեն այդ վիճակում տեսներ, բայց և այնպես շատ էր ցանկանում

տեսնել նրան: Տիգրանուհին առանց հապաղելու գնաց տեսության: Անայիսը փաթաթվելով նրան՝ արտասպեց:

-Յանգստացի՛ր, վտանգն արդեն ետևում է մնացել,- մխիթարեց Տիգրանուհին:

-Ների՛ր ինձ, որ քեզ անհանգստացրի: Յոզեպես սաստիկ ճնշված եմ: Դու ինձ կարողանում ես մաքառելու ուժ ներշնչել:

-Յույսդ միշտ կարող ես ինձ վրա դնել: Անկեղծ ասած, ես հաճախ տագնապում էի քեզ համար:

-Նա անգամ հարազատ եղբորը չխնայեց: Ինձ պաշտպանելու պատճառով Սամիկոնը հիմա պառկած է այս նույն հիվանդանոցում:

-Եթե չբուժվի, նա շրջապատի համար միշտ վտանգ կներկայացնի,- և որպեսզի Անայիսին զոնե ժամանակավորապես շեղի իր ծանր մտքերից, Տիգրանուհին ուզեց նրան նարնջի հյութ հյուրասիրել:

Անայիսը հաճույքով կողապահարանից բաժակներ հանեց, նաև սուրճ պատրաստելու պարագաներ: Տիգրանուհին օգնեց նրան սուրճը եփել:

-Մե՛նակ սուրճը կարծես այն համը չունի: Մե՛նակ մարդու կյանքն առհասարակ համ չունի,- թախանձագին ասաց Տիգրանուհին:

-Չէ՞ որ դու ընկեր ունես, թե՞ սխալվում եմ:

-Ունե՛ի... Վերջերս բաժանվեցինք:

-Քո խոսքերից զգացվում է, որ շարունակում ես սիրել նրան:

-Այո՛: Սիրային հարաբերություններում, ինչ խոսք, կանանց ամենից շատ տառապանքն է բաժին հասնում: Կփորձեն հնարավորին չափ դիմակայել: Թեկուզ կյանքում մեզանից յուրաքանչյուրը հիմնականում կառավարվում է զգացմունքներով, քան բանականությամբ: Հանոգված չեմ, որ կկարողանամ շուտ մոռանալ նրան: Հաճախ ինձ թվում է, որ ճակատագիրն ամեն մեկիս փորձության առաջ է կանգնեցնում: Կարծես սովորեցնում է, թե ինչպես պիտի ճիշտ ապրել:

-Իսկ կա արդյո՞ք աշխարհում ճիշտ ապրելու բանաձև:

-Իհարկե, չկա: Եվ լավ է, որ չկա: Յուրաքանչյուր ոք իր սրտի գաղտնիքներն ունի և երազանքները կյանքի կոչելու իր ծրագիրը: Սակայն ինչ էլ ծրագրելու լինենք, միևնույն է, առանց սիրո ապրելն անիմաստ է դառնում:

-Ցավոք, բացառիկ կանանց է հաջողվում արժանանալ փոխարարձ սիրո:

-Ուզում եմ հավատալ, որ մենք էլ մի օր նրանց շարքերում կհայտնվենք: Ես պատրաստ եմ քեզ հետ մոմեր վառել մեր սիրո համար,- Տիգրանուհու ծիծաղկոտ աչքերը տխուր շղարշով փայլեցին:

Նայելով նրան՝ Անայիսը հավատով ներշնչվեց, որ մառախլապատ երկնքում անձրևից ու կարկտից հետո անպայման երփներանգ ծիածան է բացվում:

Չաճախ մարդն իր կատարած սխալ քայլի համար ասես հայտնվում է անհասկանալի մի լաբիրինթոսում, որտեղից դուրս գալ հնարավոր է իր իսկ տիտանական ջանքերի շնորհիվ: Սիփանն անվերջ հոգեկան տագնապների մեջ էր: Նա Տիգրանուհուց ընդմիջտ բաժանվել չէր ուզում: Թե ի՞նչ էր զգում նկարչուհու հանդեպ, ինքն էլ չէր հասկանում: Միայն չէր ուզում նրան ընդմիջտ կորցնել: Գուցե Տիգրանուհուց պետք էր թաքցնել ճշմարտությունն այն մասին, որ ինքը նախկին կնոջ՝ Ալլայի հետ նորմալ հարաբերությունների մեջ է: Ազգությամբ ռուս իր կնոջը դեռ շարունակում է սիրել: Պատճառը սոսկ երեխան չէ: Իսկ Տիգրանուհի՞ն... Ո՞վ էր նա իր կյանքում: Նա չափազանց կանացի է, տաղանդավոր, անսովոր, բարի, խելացի, բայցևայնպես իր ճակատագիրը չէր: Այդ դեպքում ինչու՞ է անվերջ նրա մասին մտածում, եթե նա իր էության թանկագին մասնիկը չի կազմում: Եթե իր ծնողների խնդիրը չլիներ, ինքն էլ ամենայն հավանականությամբ կտեղափոխվեր Սանկտ Պետերբուրգ: Տխուր հանգամանքների բերումով մի կերպ հանդուրժում էր խլուրդի կյանքը՝ իր բոլոր դժվարություններով: Ինքը հուսով էր, որ մի օր անպայման նրանց մոտ կապրի: Այնինչ ոչ միայն նոր ընտանիք կազմել չի ցանկանում, այլև բնական էր համարում կարգին ընկերուհի ունենալը: Նա լավ էր հասկանում Տիգրանուհուն: Անշուշտ, ոչ մի կին չի ուզեմա, որ իրենով տարված տղամարդը մեկ ուրիշով տարված լինի: Միևնույն է, եթե ինքը Տիգրանուհուն չխոստովաներ ամեն ինչ, նա գլխի կընկներ: Չէ՞ որ երկու շաբաթից ավելի

տևեց ցուցահանդեսից հետո ընկած ժամանակահատվածը: Մի փաստ սակայն ակնհայտ էր. Սանկտ Պետերբուրգում գտնվելու ընթացքում հաճախ մտածում էր նկարչուհու մասին, իսկ Երևանում, ընդհակառակը, մտաբերում էր ռուս կնոջն ու որդուն: Այսինքն՝ ինքն իր կամքից անկախ հայտվել էր մի այնպիսի փակուղու առջև, որից որևէ ելք գտնելը նույնպես իրենից էր կախված: Նա զգում էր, անկասկած, որ տառապում է առանց Տիգրանուհու: Նրա քնքշանքների ու ջերմության պակասը սարսափելի զգացվում էր: Երանի՜ նա նմանվեր ուրիշ կանանց, և նրան մոռանալը հեշտ կլիներ: Ուրեմն՝ իր մոտ ֆիզիկական ձգտումը չէր, որ այդքան տանջում էր: Նրա հանդեպ ունեցած վերաբերմունքն ավելի խորն էր: Ամեն անգամ ականջալուր լինելով սրտի ձայնին, զգում էր, որ նա իրեն ճնշում, միաժամանակ հուշում էր, որ պետք է հուսալ՝ օգտագործելով ևս մի շանս: Նրանից բաժանվելու այդ ողջ ընթացքում չի համարձակվել զանգահարել: Միշտ մտածել է, որ Տիգրանուհին իրեն կկոպտեր, կամ կկախեր հեռախոսը: Բայց մինչև ե՞րբ: Ու նա վերջապես կարողացավ մի ելք գտնել նրան տեսնելու և գործնական հետաքրքիր առաջարկություն անելու: Երբ հեռախոսով կապվեց նկարչուհու հետ, միանգամից հաղորդեց, որ նրան գործով ուզում է հանդիպել խամաճիկների թատրոնի ռեժիսորը: Նպատակը նոր ներկայացման համար նկարչական ձևավորման պատվերն առաջարկելն էր:

-Բայց ես այդ ռեժիսորին չեմ ճանաչում, ոչ էլ՝ նա ինձ,- հանկարծակիի եկավ Տիգրանուհին, միաժամանակ զգալով, որ սիրտն անսովոր տրոփում էր: Թեև Սիփանից վիրավորված էր, բայց շնչահեղձ էր լինում կարոտից:

-Ես ձեզ կծանոթացնեմ: Եթե դեմ չես նման առաջարկին, զուցե մտածենք, թե որտեղ հանդիպենք իրար,- լսվեց Սիփանի պատասխանը: Նա գրեթե հավատացած էր, որ Տիգրանուհին չի հրաժարվի փող վաստակելու հնարավորությունից: Ու չսխալվեց:

-Ժամը երկուսին կլինեմ թատրոնի մոտ,- թեև չոր հնչեց Տիգրանուհու խոսքը, այնինչ իրականում տակնուվրա եղավ հոգին: Շուրջ երկու շաբաթ էր, ինչ նրան չէր տեսել: Սակայն, ամեն օր, մանավանդ մութ պահերին, երբ լույս չէր ունենում, մտովի զրուցում էր նրա հետ:

Նույնիսկ մոմի աղոտ լույսի տակ վերցնելով թուղթ ու գրիչ, նշել էր, թե ինչպիսի հաճելի ակնթարթներ է անցկացրել նրա հետ, որպեսզի մտապահեր սիրած տղամարդու յուրաքանչյուր ժպիտը, հայացքը, բառը, ջերմ վերաբերմունքը: Այնուհետև ընթերցել էր ու հասկացել, թե ինպես ուժգին է սիրում նրան:

Կախելով հեռախոսը, նա նույնիսկ վայրկյաններն էր հաշվում, թե երբ կհանդիպի Սիփանին: Հասկացավ, որ անգամ խավարի մեջ վայրկյանները շատ ավելի արագ են անցնում, քան հիմա, երբ առավոտյան դեռ ժամը տասնմեկն է: Նրան ժամ առաջ հանդիպելու մտքից ոչինչ անել չկարողացավ: Իրեն ոչ այնքան փողն էր հետաքրքրում, որքան հանդիպման պահը: Մազերը հարդարելիս նայեց հայելու մեջ և փորձեց հուսադրել ինքն իրեն: Դժվար չէր հասկանալ, որ Սիփանը, ինչ խոսք, պատրվակ էր փնտրում հանդիպելու իրեն: Քիչ նկարիչներ չկային, որ կարելի էր նրանց դիմել: Այդ նա էր առաջարկել իր թեկնածությունը: Հավանաբար, Սիփանը գտնում էր, որ իրենց հարաբերություններում ամեն ինչ կորած չէ:

Սիփանը թատրոնի մուտքի դիմաց ծխում էր, երբ հեռվից նկատեց Տիգրանուհուն: Ջգաց, որ անչափ կարոտել է նրան: Հուզմունքից նա արձակեց ձմեռային բաճկոնի կոճակները: Սիփանն արդեն քանի օր էր, ինչ անհամբեր սրտով պատրաստվել էր այդ հանդիպմանը, որն ինչ-որ չափով մոտավուտ հաղթանակին հասնող ճակատամարտ էր հիշեցնում: Եվ ինքն իրեն անվերջ հուշում էր, որ անպայման պիտի հաղթի: Հաղթի ցավին, սպասմանը, կասկածներին:

Սիփանը Տիգրանուհուն ներկայացրեց թատրոնի ռեժիսորին, որը նկարչուհուն հանձնեց սցենարը: Պայմանավորվեցին նաև վճարման մասին: Տիգրանուհին կարծես գոհ մնաց նախնական գործարքից: Միայն պետք է սեղմ ժամկետում կատարվեր պատվերը: Սիփանը Տիգրանուհուն առաջարկեց միասին սրճել «Նաիրի»-ի կինոթատրոնի մոտակայքում գտնվող սրճարանում: Նկարչուհին համաձայնվեց: Նրանք ոչ մի խոսք չփոխանակեցին միմյանց, մինչև մատուցողուհին չբերեց սուրճը և հյուրը: Լռությունը, բնականաբար, խախտեց Սիփանը:

-Ինչպե՞ս ես ապրում: Մի քիչ խոսիր, քո վիճակն ինձ շատ է հուզում:

-Ամեն ինչ կարգին է,- խաղաղ պատասխանեց Տիգրանուհին:

-Ո՞ր նկարիչն է այսօր կարգին ապրում,- բարեհամբույր ժպտաց արվեստաբանը:

-Բոլորիս վիճակն էլ նույնն է: Կարգին են ասում, որովհետև համառորեն մարտնչում ենք մեր գոյության համար: Երևի ուրախանալ է պետք, որ այժմ հացը առաջվա պես կտրոններով չեն տալիս:

-Դու իրավացի ես,- այս անգամ խորը արտաշնչեց Սիփանը, այնուհետև շունչը պահելով՝ հարցրեց:- Իսկ դու ինձ չե՞ս կարոտում:

- Անկեղծ ասած, ես չեմ ցանկացել, որ ամեն ինչ մեր միջև այսպես ավարտվեր:

-Բայց մեզանից դու ես միանգամից վերջակետ դրել: Թե՞ սխալվում եմ:

-Չես սխալվում: Քո դավաճանությունն ինձ հունից հանեց:

-Չէ՞ որ ես քեզնից ներողություն էի խնդրել և խոստացել, որ այլևս նման բան չի կրկնվի,- Սիփանն ուզեց նայել Տիգրանուհու աչքերի մեջ: Վերջինս խոնարհեց հայացքը սեղանին: Ջգաց, որ Սիփանի հետ անգամ յուրաքանչյուր խոչընդոտ ավելի երջանկություն է բերում, քան անորոշ միայնությունը: Ուստի, պետք է նրան երկրորդ շանսը տար... Սիրել, նշանակում է ներողամիտ լինել: Եթե ինքը պատրաստ չէ ներելու, կնշանակի՝ երբեք նրան չի սիրել:

-Ես քեզ անչափ կարոտում եմ ու տառապում եմ առանց քեզ: Գիտեմ, որ նույն էլ դու ես զգում: Այսինքն՝ մենք մեզ կամովին մազոխիզմի ենք ենթարկում: Ինչու՞:

Տիգրանուհին հասկացավ, որ այլևս անիմաստ էր նախկին խոսակցությանն անդրադառնալը, առավել ևս բացատրություններ պահանջելը: Ամեն ինչ ինքնընտրության հասկանալի էր: Ինքը պետք է զիջեր՝ հեռու մնալով վտանգավոր մարտահրավերներից: Խոսակցությունն ավարտված համարելով՝ երկուսով դուրս եկան սրճարանից: Սիփանը որոշեց ուղեկցել Տիգրանուհուն: Եվ քանի որ ավտոբուսը ուշանում էր, մտածեցին օգտվել տրամվայից, թեկուզ հնարավոր էր, որ այն կես ճանապարհից հոսանքազրկվեր: Եվ իսկապես մի երեք կանգառ չանցած այն հոսանքազրկվեց: Ցրտից կուչ եկած ուղևորները ստիպված էին սպասել: Մի երիտասարդ տղա-

մարդ, որ նստել էր Սիփանի և Տիգրանուհու ետևի նստատեղին, այլևս չհամբերեց նման իրավիճակից: Նա համարյա գռռալով դիմեց վարորդին:

-Մինչև ե՞րբ պիտի հանդուրժենք այս ամենը: Մի՞թե մենք կռվել ենք այս օրերին հասնելու համար: Գոնե տրամվայներն անխափան աշխատեն:

-Ես ի՞նչ մեղք ունեմ, իշխանություններին դիմիր քո բողոքներով,- պատասխանեց վարորդը:

Անծանոթ երիտասարդի ըմբոստ ելույթը բուրդին էր ուղղված: Նա կարծես ականայից կոչ էր անում սեփական երկրում իրենց ստրուկների պես զգացող, ցրտից ու սովից խեղճացած մարդկանց: Նրան զայրացրեց այն հանգամանքը, որ նրանցից ոչ մեկը չարձագանքեց:

-Ինչու՞ չեք խոսում, թե՞ կարծում եք, որ լռությամբ ու խավարապաշտությամբ ողջ ազգին կարմիր գրքում կգրանցեն:

-Արցախյան պատերազմի համար ռազմամթերք գնելու համար պետական այրերը ստիպված եղան մազութը վաճառել՝ մեզ մատնելով խավարի,- արձագանքեց քառասունն անց մի տղամարդ:

-Այդ դեպքում ինչու՞ իշխանավորները մշտապես լույս են ունենում: Թե՞ ժողովրդին խեղճության մեջ պահելը նրանց օգտին է: Միմիայն լույսի ու հացի մասին մտածող մարդու ուղեղն ուրիշ բաների մասին մտորելու ո՛չ ուժ, ո՛չ էլ հավես կունենա: Նրանք խաբում են մեզ, ու մենք հավատում ենք:- Երանի՛ ես էլ զոհված լինեի: Պատերազմի դաշտում գոնե միանգամից կարող ես մեռնել, իսկ այստեղ՝ գնդակներից հեռու, դանդաղ մահն ինձ համար սարսափելի է թվում: Այս պայմաններում մենք ամեն օր, ամեն ժամ ենք մեռնում,- տխուր հառաչեց նախկին ազատամարտիկը՝ գրպանից հանելով «Ավրորա» մակնիշի ծխախոտի տուփը:

Սիփանը, որ մինչ այդ լուռ հետևում էր նրան, այս անգամ բարձրացավ տեղից և բռնելով ըմբոստացողի թևից, բարեկամաբար նրա հետ դուրս եկավ տրամվայից:

-Այնտեղ երեխաներ ու կանայք կան, չաղտոտենք օդը, եթե մտածում ենք նրանց մասին:

-ճիշտ ես ասում, եղբայր: Հավատա՛, այնքան դաժան դեպքերի են ականատես եղել, որ այս կյանքում անհետաքրքիր է դառնում ինձ համար ամեն ինչ:

-Ինչպե՞ս չհավատամ, երբ իմ հարազատ եղբորս էլ թուրքերը գերի են վերցրել ու տանջել: Դեռ լավ էր, որ կարմիր խաչի օգնությամբ նա ազատվեց: Այնինչ հարյուրավոր տղաների նրանք անգթորեն սպանեցին,- թախծագին հառաչեց Սիփանը՝ նայելով ձեռքի ժամացույցին: Համարյա կես ժամ անցել էր, ինչ տրամվայը կանգնել էր, իսկ իր ոտքերը լրիվությամբ սառել էին, քանի որ ծակ կոշիկների տակից բրդյա գուլպաները թացացել էին:

-Թուրքերին հաջողվեց բռնել նաև մարտական ընկերոջս: Ես ականատես եղա, թե ինչպես նրան պարանով կապեցին ծառից ու կենդանի վառեցին:

Սիփանը նկատեց, որ անծանոթի աչքերն իսկույն ևեթ արյունով լցվեցին, և նրա հայացքը նմանվեց վիրավորված գազանի հայացքի:

-Բայց ես վրեժս լուծեցի իմ ընկերոջ համար: Գերի վերցնելով պատահական թուրքի, նրա մի ոտքը նույնպես կապեցի ծառին, իսկ մյուսը՝ ավտոմեքենայի թափքից ու մեքենայի շարժիչը միացրի: Այժմ ես հանգիստս գտնում եմ գերեզմանոցում: Այնտեղ քայլելիս ոչ միայն կարոտով հիշում եմ ռազմական ընկերներիս, այլև հաղթահարում եմ կյանքի խավարը նրանց շիրիմների մոտ:

Սիփանի մարմնով սարսափելի սարսուռ անցավ: Նա մոռացավ թաց ոտքերի մասին: Սոռացավ, թե ինչու էր կանգնել տրամվայը և ինչու էր ինքն անծանոթի հետ այդ բքին կանգնել: Ստածեց պատերազմի չզրված օրենքների մասին: Պարզվում է, որ թշնամու դեմ գրոհելու նպատակով կռվողները ոչ միայն ենթարկվում էին ընդհանուր հրամանի, այլև իրենք էին անձնապես հաշվեհարդար տեսնում հակառակորդի հետ: Այդպես նրանք իրենց մեջ հագեցնում էին վրեժխնդրության ծարավը: Ցավոք, խաթարվում է նրանց հոգեբանությունը, խաթարվում է առօրյա կյանքի անդորրը:

Վերջապես, տրամվայի հոսանքը միացրին և ուղևորները գրավեցին իրենց զբաղեցրած տեղերը: Տիգրանուհին մնացել էր մենակ: Նա ձանձրացել էր սպասելուց, մրսում էր ցրտից ու քաղցից: Երագում էր

ամենից շատ մի բաժակ տաք թեյ ըմպել: Համոզված էր, որ Սիփանն իրեն կմիանար: Երբ տրամվայը շարժվեց, նա փշաքաղվելով կծկվեց՝ սեղմվելով նրան:

Առավոտյան Տիգրանուհու ոտքերի տակ ձյունը ճռռաց այնպես, ինչպես հյուսնի վաղուց ծերացած սղոցը: Մի քանի օրից հետո մարտ ամիսն իր ոտքը կդնի: Գոնե ժամանակավորապես ետևում կմնան ցուրտ օրերը: Հաճելի լուրեր էին պտտվում, որ մարդիկ աստիճանաբար շուրջօրյա էլեկտրական լույս կունենան: Մնում էր միայն հավատալ ու սպասել: Հասնելով կանգառ՝ նա նկատեց, որ եղանակն էլ զգալիորեն տաքացել է: Մի պահ փակելով աչքերը՝ նա մտովի, թերթելով զգայական շերտերը, գարնան մանուշակների բուրմունքն զգաց և խոր արտաշնչեց: Անայիսի մոտ՝ դեպի խմբագրություն տանող ավտոբուսը շատ չուշացավ: Երբ ներս մտավ, Տիգրանուհին բնազդաբար ձեռքի պայուսակը դրեց թևատակը: Զգուշանում էր գողերից: Թեև տիաճ էր ամեն դեպքում մտածելը, որ կողքիդ մշտապես գողեր են թափառում: Այդ միտքը միայն յուրաքանչյուր մարդու ուշադրությունը կշեղի օրվա ընթացքում իր ունեցած մտադրություններից: Ավտոբուսում թթու դրած ծիծակի ախորժալի հոտ էր տարածվել: Հավանաբար ինչ-որ մեկի ամանը կամ ապակե տարան էր շրջվել: Տիգրանուհին հիշեց իր մայրիկին: Նա էլ այնպիսի թթու բանջարեղեն էր սարքում, որ քիչ է մնում մատներդ էլ հետը ուտես: Տիգրանուհին կարոտել էր թե՛ մորը և թե՛ հորը: Մտածեց այն մասին, որ նրանք հիմա տարված են երկու թռռնիկներով և իրենով կարծես չէին հետաքրքրվում: Հայրը խստակյաց բնավորությամբ մարդ է: Նա քանիցս հայտարարել է, որ զավակներից յուրաքանչյուրն ինքը պետք է կյանքում հարթի իր ճանապարհը և հարազատներից ոչ ոք պարտավոր չէ մյուսին օգնության ձեռք մեկնելու: Հաճախ որպես արդարացում հիշում էր վաղուց կյանքին հրաժեշտ տված հորը. «Հայրս ինձ համար ոչինչ չի արել: Ինչու՞ պետք է ես ձեր մասին մինչև վերջ հոգան: Կրթություն եք ստացել, ապրեք, ինչպես կարող եք»: Սակայն

նա գիտակցաբար հասկանում էր, որ ծնողներին և հայրենիքը սիրում են անկախ ամեն ինչից:

Խմբագրությունում Անայիսը սուրճը պատրաստել ու սպասում էր ընկերուհուն: Տիգրանուհին խոստացած ժամանակին տեղ հասավ: Նա իսկույն ևեթ նկատեց, որ Անայիսն անհամեմատ ավելի խաղաղ էր: Ու չսխալվեց: Քիչ անց ծավալված խոսակցությունից պարզվեց, որ Մուշեղը նրան ոչ միայն չէր անհանգստացնում, այլև խոստացել էր բուժվել: Դա փոքր-ինչ անհավանական էր թվում, բայց սատանան ու՞մ հետ ասես չի կատակում: Սակայն Անայիսը նրան իսկապես գործի բերումով էր կանչել:

-Արդեն գիտես, որ ես ուզում եմ գիրք գրել արցախյան պատերազմի տարիներին զոհված ու անհայտ կորած մեր տղաների մասին, - Անայիսը անբռնազբոս հայացքն ուղղեց Տիգրանուհուն:

-Դու հրաշալի աշխատանք ես սկսել: Ոչ ոք չպիտի մոռացվի, - տխուր արձագանքեց Տիգրանուհին:

-Պապս, որ Երկրորդ համաշխարհային պատերազմի մասնակից էր, ասում էր, որ այն օրհասական տարիներին Ստեփանակերտը նրան հիշեցնում էր Ստալինգրադը: Մեր ժողովուրդը իր դիմացկունությամբ ու հայրենասիրությամբ ոչնչով պակաս չէ ռուս ժողովրդից: Ափսո՛ւ, նա հիմա ողջ չէ: Իսկ տատիկիս իրենց տան մեջ արկակոծումներից վնասվեց: Նրա ձախ ձեռքի երեք մատները պոկվեցին, իսկ բեկորներից մեկը մտավ մարմնի մեջ: Դա էլ պատճառ եղավ, որ նա մեկ տարի հետո հրաժեշտ տար կյանքին: Ինձ մոտ խոսում է արյան հիշողությունը, ու ես իմ սուրբ պարտքն եմ համարում գրել այդ ամենի մասին:

-Քեզ պատմե՞լ էի, որ պատերազմը դեռ չավարտված՝ Վարդենիսի մշակույթի պալատի նախածեռնությամբ ինձ հրավիրել էին մասնակցելու մի հետաքրքիր միջոցառման, որն անցկացվեց երաժշտական դպրոցում: Ես այնտեղ հանդիպեցի մեր քաջարի հրամանատարներից մեկին՝ Մոնթե Մելքոնյանին: Մենք ոչ միայն ծանոթացանք, այլև սեղանի շուրջը հասցրինք մոտիկից շփվել միմյանց հետ: Նա շտապում էր, պետք է մեկներ կռվի դաշտ: Ստիպված եղավ բռնորիս լքել: Ցավոք, այդ հանդիպումից մի քանի ամիս անց նա հերոսաբար զոհվեց:

-Մոնթեն այն բացառիկ համանատարներից էր, որով կերազեր պարծենալ ամեն մի ազգ,- ավելացրեց Անայիսը:

-Իրավացի ես: Սակայն մենք հպարտ ենք, որ նա հայ է և իր թե՛ մարդկային բացառիկ տեսակով, թե՛ ազգասիրությամբ ոգեշնչում էր իր շրջապատի տղաներին: Իսկ ես ինչո՞վ կարող եմ օգտակար լինել քեզ,- հարցրեց Տիգրանուհին:

-Ինձ ծանոթ կանանցից մեկը խնդրել է, որ իր անհայտ կորած որդու դիմանկարը որևէ նկարչի օգնությամբ մեծացվի:

-Անկեղծ ասած, այս օրերին զբաղված եմ: Թատրոնի համար եմ գործ անում, բայց խոստանում եմ այսօր և եթե հանդիպել այդ կնոջը: Տուր ինձ նրա տվյալները:

-Ես գիտեի, որ կհամաձայնվես, շնորհակալ եմ,- Անայիսը մի թղթի վրա գրելով իրեն խնդրանքով ներկայացած կնոջ հասցեն և հեռախոսահամարը՝ մեկնեց ընկերուհուն:

Տիգրանուհին վեր կացավ տեղից՝ փոքր-ինչ շփոթված դուրս գալով խմբագրությունից: Էսփիզները ձեռքին այս անգամ նա կանգառում բավականին սպասեց, մինչև թատրոն հասցնող տրանսպորտը մոտեցավ: Ռեժիսոր Օլեգը վաղուց նրան էր սպասում: Տեսնելով Տիգրանուհուն՝ մտերմաբար բացականչեց.

-Վերջապես եկար: Այնպես անհագիստ եմ, թեկուզ սրտիս խորքում հավատացած եմ, որ տրված առաջադրանքը պատվով կկատարես:

Տիգրանուհին բարեհամբույր ժպտալով՝ սառած մատներով տոպրակից հանեց էսփիզները:

-Խնդրեմ, նայեք, եթե ինչ-որ բան այն չէ, Ձեր կարծիքը հայտնեք: Միևնուն է, ամեն ինչ կլինի այնպես, ինչպես դուք եք ուզում:

Օլեգը զանգի կոճակով իր մոտ կանչեց քարտուղարուհուն, որպեսզի երկու բաժակ սուրճ պատրաստի: Նաև խնդրեց որևէ քաղցրավենիք բերել:

-Բայց ես քիչ առաջ ընկերուհուս հետ սրճեցի: Այնպես որ, շնորհակալ եմ...,- Տիգրանուհին քաղաքավարությամբ մերժեց:

-Թող լինի այնպես, ինչպես կուզեք: Մարդու կամքին բռնանալն ինձնից հեռու է,- Օլեգն այս անգամ վերցնելով էսփիզները և մեկ առ մեկ մանրազնին նայելով՝ ասաց.- Կեցցես, Տիգրանուհի: Դու

գերազանց ես կատարել աշխատանքդ: Սիփանը չէր սխալվում: Ես անձամբ նրան իմ երախտագիտությունը կհայտնեմ:

Ռեժիսորը ձևավորումներից ոգևորված՝ հանկարծ անցավ «դու»-ի: Հետո զանգեց Սիփանին՝ իր ուրախությունն արտահայտելուն մեկտեղ, հրավիրեց ճաշի: Տիգրանուհին ձեռքը բացասաբար թափ տվեց: Այդ նշանակում էր, որ նա զբաղված կլինի: Օլեգը ստիպված Սիփանի հետ ավարտելով հեռախոսազրույցը, խոստացավ լրացուցիչ զանգել:

-Ես անհետաձգելի գործեր ունեմ: Նախապես պայմանավորվել եմ,- ասաց Տիգրանուհին:- Մենք մեկ ուրիշ անգամ կհավաքվենք:

-Իհարկե, բայց ես սրտանց ցանկացա երեքով միասին ընթրել: Այդ դեպքում ինչո՞վ կարող եմ պիտանի լինել քեզ: Սիփանն ինձ պատմել է, որ ապրում ես վարձով:

-Դե, այդ խնդիրն ավելի անլուծելի է: Ո՞վ կարող է ինձ օգնել:

-Ես... Թե՞ կասկածում ես:

Տիգրանուհին մի պահ զլուխն անորոշ թափահարեց: Թվաց, թե երազի մեջ հայտնվեց: Նկատելով նրա շփոթվածությունը՝ Օլեգն ասաց.

-Մեր թատրոնին է պատկանում ետևի շենքում գտնվող մի սենյականոց բնակարանը, որ նախատեսված է հյուրերի համար: Այն կարող եմ ժամանակավորապես քեզ տրամադրել, մինչև կլուծես բնակարանիդ հարցը:

-Այսինքն՝ ես չնչի՞ն վարձ էլ չպիտի մուծեմ թատրոնին ինձ անկյուն տալու համար:

-Ոչ մի սու,- պատասխանեց ռեժիսորը:- Եթե ուզում ես, մենք միասին հիմա կգնանք այնտեղ:

-Իհարկե, ուզում եմ: Գնացի՞նք,- Տիգրանուհին ոգևորված բարձրացավ տեղից՝ կոճկելով վերարկուն՝ ռեժիսորի ուղեկցությամբ գնացին վերոհիշյալ բնակարանի ուղղությամբ:

Այն գտնվում էր թատրոնին մոտակա բնակելի շենքի առաջին մուտքի երկրորդ հարկում: Օլեգը ձեռքի բանալիով բացեց սենյակի դուռը: Հիրավի, այն մի սենյականոց բնակարան էր: Ուներ ընդամենը մեկ խոհանոց և ուրիշ ոչինչ: Այսինքն՝ ո՛չ քրի ծորակ կար, ո՛չ էլ զու-

գարան: Պարզվեց, որ զուգարան կոչվածը տեղավորված էր առաջին հարկում: Դա էլ դեռ ոչինչ: Երբ առաջին հարկ իջան, զուգարանը կեղտոտ վիճակում գտնվելով հանդերձ՝ ո՛չ դուռ ուներ, ո՛չ էլ ջուր: Թե ինչպես են նախկինում հյուրերն օգտվել այդ սենյակից, Տիգրանուհու համար հարցական մնաց: Նա հիասթափված շունչ քաշելով՝ արձակեց վերարկուի կոճակները: Ներքին անհանգստությունից քրտնել էր: Օլեգը նայելով նկարչուհուն՝ հասկացավ, որ նրա համար անհարմար էր այդտեղ բնակություն հաստատելը:

-Իմ ունեցած հնարավորությունները սա էր: Անշուշտ, եթե նյութական միջոցներ ունենայիր՝ վերանորոգելու, գուցե թե մի բան ստացվեր,- ռեժիսորը հարցական կրկին նայեց Տիգրանուհուն:

-Բայց այստեղ վերանորոգման համար ահագին գումարներ կպահանջվեն: Տասնյակ մետրերով խողովակներ պիտի անցկացվեն, դուռ պիտի դրվի և նման այլ գործեր: Մի խոսքով, շնորհակալ եմ նաև այս առաջարկի համար, բայց, ինքդ էլ գիտես, որ առանց տարրական կենցաղային պայմանների, անհնար է այստեղ ապրելը: Գոնե բակում ջրի ծորակ լիներ,- նկարչուհին կարող էր նաև ինչ-որ կերպ գումար հայթայթել՝ վերանորոգումների նպատակով:

Օլեգը բանալիով փակելով սենյակի դուռը՝ Տիգրանուհու հետ լքեց բարձիթողի տարածքը: Նկարչուհին այլևս ո՛չ ժամանակ ուներ Օլեգի հետ թեյ խմելու, ո՛չ էլ ցանկություն: Միայն խոստացավ նրան հաջորդ անգամ ներկայացնել եսթիզների մյուս մասը: Ու օրվա ծրագրերն ավարտված չհամարելով՝ Տիգրանուհին որոշեց կատարել Անայիսի խնդրանքը՝ զանգելով անծանոթ կնոջը, որն ապրում էր քաղաքի ծայրամասերից մեկում՝ Դարավ-արևմտյան թաղամասում: Ինչ արած, այժմ էլ Տիգրանուհին առանց դժվարության հասավ այնտեղ, որտեղ իրեն գլխիկոր սպասում էր տիկին Ռոզան: Նա մոտ քառասունհինգ տարեկան կին էր, ալեհեր մազերով, ժամանակից շուտ թառամած ու տանջված դեմքով: Սիրալիի ընդունելով նկարչուհուն՝ նա թեյ և միրգ հյուրասիրեց հյուրին: Տիգրանուհին այս անգամ հաճույքով խմելով տաք թեյը, գրույցի բռնվեց տիկին Ռոզայի հետ: Նա բնիկ արցախցի էր, իսկ ավելի ստույգ՝ Մարտակերտի շրջանի Մարաղա գյուղից: Նա Երևան էր տեղափոխվել 1992 թվականի ապրիլի 10-ին

Մարադայում թուրքերի կողմից կազմակերպված սպանդից հետո: Թշնամիները հանկարծակի տանկերով ներս էին խուժել Միր-Բաշիրի կողմից: Գյուլի բնակիչները պատսպարվել էին իրենց տների թաքստոցներում: Տիկին Ռոզան սակայն մտածելով, որ թուրքերն իրենց կգտնեն ու կսպանեն, թաքուն իր ընտանիքի անդամների հետ որոշեցին գաղտնի մուտքով և հատուկ աստիճանով կտուրը բարձրանալ: Սկզբում ինքը բարձրացավ իր աղջկա հետ, իսկ երբ ամուսինն ու որդին ցանկացան հետևել նրանց, արդեն ուշ էր: Ներևքում աղմուկ բարձրացավ: Թուրքերը հասցրին նկատել նրանց: Հրացանի օգնությամբ տարան ամուսնուն որդու հետ: Տիկին Ռոզան աստիճանը թաքցրեց և աղջկա հետ տեղավորվեցին կտուրում՝ խտտի դեզի մեջ: Այնտեղից էլ մի փոքրիկ ճեղքի արանքից հետևեց գյուղամիջում գտնվողների գործողություններին: Նա տեսավ, թե ինչպես ամուսնուն սպանեցին, իսկ տասնութամյա որդուն՝ Գնելին, հրեցին գերիների կողմը: Տիկին Ռոզան թաշկինակը գրպանից հանելով արտասվեց:

-Գիտեք, ձեր պատմածները տատիկիս պատմություններն են ինձ հիշեցնում: Նա Արևմտյան Հայաստանից էր, նաև 1915թվականի եղեռնի ակամատեսներից: Նույնպիսի ջարդեր են եղել Բիթլիսում, Վանում, Ուրֆայում և այլուր: Թուրքերը բոլոր ժամանակներում նույն ձեռագիրն ունեն: Նրանք ամենուր հայերի դեմ իրագործել են սպանության բոլոր տեսակները, քանի որ առաջնորդվում են «Վառի՛ր, ավերի՛ր, սպանի՛ր» նշանաբանով,- զայրույթով ասաց Տիգրանուհին:

-Թուրքերն աշխարհի վայրենի ազգերից են: Ոչ մի քաղաքակրթություն չի կարող փոխել նրանց էութունը՝ որպես արնախում բորենիների: Միայն տեսնեիր, թե ինչպիսի սառնասրտությամբ էին գլխատում մարդկանց, այնուհետև մարմինները զցում խարույկի մեջ: Բռնաբարում էին կանանց ու աղջիկներին նրանց ամուսինների կամ հայրերի առաջ: Պատանդ վերցրին գյուլի գեղեցիկ աղջիկներին: Սրերով պատռում էին կանանց փորը, ստամոքսը: Մարդկանց նետում էին ջրհորները: Քրքիջով սպանում էին մանուկներին, գնդակահարում անգամ կենդանիներին՝ կովերին, ոչխարներին, հավերին, շներին: Իսկ վերջում հրդեհեցին տները և թալանեցին մեր ունեցվածքը: Ինչ էլ չէր տեղավորվում իրենց բարձած մեքենաների մեջ, կոտրում

էին, ջարդուն, ավերուն: Իմ տեսածը նման էր դժոխքի տեսարանի: Ողջ գյուղը խարույկի պես վառվում էր՝ օդի մեջ արյան ծանր հոտ տարածելով: Ջարմանում եմ, որ չեմ խելագարվել:

-Ձեզ այդպես էլ օգնության չհասա՞ն,- աղերսագին հնչեց Տիգրանուհու ձայնը:

-Մերոնք, ավելի ճիշտ Վլադիմիր Բալայանի ջոկատը հասավ այն պահին, երբ թուրքերն իրենց սպանդն ավարտել էին: Նրանք կռվում էին Թալիշուն թուրքերի դեմ: Ուրեմն՝ թշնամիները Սարաղայում էին, այնինչ մեր համագյուղացի տղաներից երկուսը անտեղյակ լինելով, թե գյուղում ինչ է կատարվում, որոշում են հանդիպել: Մինչ այդ նրանք նախապես պայմանավորվել էին իրար տեսնել գյուղամիջում: Սկզբում նրանցից մեկը հեռվից անզեն հայտնվեց՝ սպասելու համար ընկերոջը և միանգամից ընկավ ծուղակը: Թուրքերը բռնեցին նրան ու կապելով ծառից, սղոցով մարմինը երկու մասի բաժանեցին: Նրա ընկերը, որն ավելի ուշ էր հայտնվել, հեռվից ականատես եղավ այդ ողբերգությանը: Յենց նա էլ շուտափույթ դուրս եկավ գյուղից՝ հայերին տեղեկացնելու կատարվածի մասին:

-Տիկին Ռոզա, ինձ տվեք ձեր որդու լուսանկարը: Չէ՞ որ ես ձեզ օգնելու համար եմ այստեղ եկել:

Մինչ տանտիրուհին կբերեր նկարը, Տիգրանուհին ուշի-ուշով զննեց իր շուրջը: Սենյակի մի անկյունում սրբապատկերներ էին ու մոմեր: Նույն տեղում՝ փոքրիկ սեղանի մոտ, մի աթոռ էր դրված, որտեղից զինվորականի հագուստ էր կախված: Դժվար չէր հասկանալ, որ այն անհայտ կորած որդու համազգեստն էր: Նա առաջին կանավորականներից էր, որը մեկ օր առաջ եկել էր գյուղ՝ հարազատներին տեսնելու: Տիգրանուհին վեր կացավ տեղից՝ մոտիկից նայելու սեղանին: Նկատեց, որ նաև ինչ-որ իրեր կային այնտեղ: Դրանք հավանաբար որդու անձնական իրերից էին: Տիկին Ռոզան մի քանի լուսանկարներ հանձնեց նկարչուհուն, այնուհետև մոմեր վառելով՝ աղոթեց, ու կռամալով հոտոտեց որդու զինվորական համազգեստի օձիքը:

- Տիգրանուհի՛, խնդրում եմ, դու էլ մոտեցիր և կզգաս իմ տղայի անուշ հոտը:

Նկարչուհին կատարեց նրա խնդրանքը: Միաժամանակ սարսափելի սարսուռ անցավ մարմնով: Թվաց, թե դարձել էր բաց ներվ և ուր որ է, պիտի փղծկա անդամնալի կորստից: Վարակիչ է մարդու համար ոչ միայն ծիծաղը, այլև տառապանքը: Նա ասես շնչահեղձ եղավ, երբ ձեռքի լուսանկարից իրեն նայեց հայրենիքի սիրով այրվող Գնելի աչքերը: Տիգրանուհին ցավով զգաց, որ պատերազմը դեռ չի վերջացել: Ու հենց այսպիսի պահերին մեզանից ամեն մեկը մոռանալով սեփական հոգսը, իր մեջ ինքնաբերաբար հայտնաբերում է ոչ միայն հոգու վեհանձնությունն ու թռիչքը, այլև կուտակված գայրույթը, որը քառապատկվելով դառնում է վրեժ, քանզի չի ուզում հաշտվել «առանց կորուստների չկա հաղթանակ» արտահայտությամբ:

-Մեր իշխանությունները հնարավորինս պիտի ջանան հայրենի հողը պաշտպանած մեր հերոս տղաներին անպայման գտնել՝ վահանով, թե վահանի վրա: Չէ՞ որ ի վերջո մենք ապրում ենք հարաբերական խաղաղության մեջ, քանի դեռ վերջին անհայտ զինվորը տուն չի վերադարձել,- տխուր եզրակացության հանգավ Տիգրանուհին:

-Եթե զոհվածների մայրերը փոքրիշատե մխիթարություն են գտնում իրենց որդիների գերեզմանների մոտ, նույնը չի կարելի ասել այն ծնողների մասին, որոնց զավակները անհայտացել են դաժան կռիվների ընթացքում: Բայց ես իմ հույսը չեմ կորցնում: Սրտիս խորքում հավատացած եմ, որ որդիս անպայման մի օր տուն կվերադառնա,- պատասխանեց տիկին Ռոզան:

-Դուք ընտրեք այն լուսանկարը, որը կուզենայիք մեծացնել:

Տիկին Ռոզան մեկնելով նկարներից մեկը՝ հարցրեց.

-Իսկ ինչքա՞ն պիտի վճարեմ ձեր աշխատանքի համար: Մի՛ մտածեք, աղջիկս ամուսնացել և ապրում է Փարիզում: Նա ինձ նյութապես օգնում է:

-Վճարման մասին ոչ մի խոսք: Դա իմ նվերը կլինի ձեզ: Սակայն մեկ ամսից շուտ չի լինի: Իմ ձեռքին հիմա անհետաձգելի գործեր կան:

-Ես ձեզ չեմ շտապեցնում: Երբ ավարտեք կտավը, այն ժամանակ էլ եկեք: Անկեղծ ասած, շնորհակալ եմ ճակատագրից, որ ձեզ մնան նվիրյալներ կան:

Տիգրանուհին վերցնելով լուսանկարը՝ հրաժեշտ տվեց աչքը որդու ճամփին ջուր կտրած միայնակ կնոջը ու ծանր քայլերով հեռացավ: Երբեք իրեն այդքան ճնշված չէր զգացել: Նա անգամ մոռացավ իր սովորական հոգսերի ու խնդիրների մասին: Վերստին հասկացավ, որ պատերազմի սարսափներով անցած մարդիկ եթե ի վիճակի են պահպանել իրենց զգոնությունը, ապա խաղաղ պայմաններում ապրողներն իրավունք չունեն վիատվելու անգամ խավարից, ցրտից ու գործազուրկ լինելուց:

Մուշեղը վերջապես կարողացավ իր մեջ ուժ գտնել հիվանդանոցում պառկելու համար: Սրտի խորքում նա ուզում էր ցավ չպատճառել ո՛չ շրջապատին, ո՛չ էլ առավել ևս՝ ինքն իրեն: Այն օրվանից, երբ ջարդել էր Անայիսի քիթը, այլևս նրան չէր տեսել: Խնդիրն այստեղ սիրած էակին իր հետ հանդիպելու համոզմունքի մեջ չէր: Մուշեղի մտահոգությունն այս պարագայում ուրիշ էր: Վախենում էր, որ կրկին անտեղի կվնասի նրան, մանավանդ որ մարդկային կարոտի ուժ էլ չի մնացել իր մեջ՝ շարունակական անքնությունից, ֆիզիկական թուլությունից, ներսում կուտակված ատելությունից, նյարդային զրգռվածությունից, մշտապես ինքնազգացողության դժգոհությունից: Նրան բուժող բժիշկը կոնպլեքս ֆիզիոթերապևտիկ բուժում էր նշանակել, և Մուշեղն այս անգամ երեխայի պես հնազանդ էր դարձել: Նա անգամ դժվարությամբ համաձայնվեց հաճախել զրույցների հոգեբույժ Լիլիթ Մամիկոնյանի մոտ: Բայց և այնպես հոգեբույժն արտաքնապես գրավեց նրան: Նա միջին տարիքի բարեհամբույր անձնավորություն էր՝ մի քիչ լիքը մարմնով, մոխրագույն, խոշոր աչքերով ու խաղաղ ժպիտով: Այսինքն՝ մարդկային այն տեսակներից էր, որին հնարավոր չէր չվստահել ու չհամակրել: Մանավանդ նրա ձայնն այնքան երգեցիկ էր ու մեղմ, որ հիվանդը միայն այդ անուշ ձայնից ինքն իրեն կխոսեր: Իրականում Լիլիթ Մամիկոնյանը ջանքեր չթափեց դիմացինին համոզելու, որ ամեն ինչ կարվի, որպեսզի ետևում մնան ուղեղն ու հոգին լափող սարսափներն ու կյանքի

հանդեպ գորշ հիասթափությունները, որոնք պատրաստ են յուրաքանչյուրին անդունդ քարշ տալ:

-Որպես սկիզբ՝ մի քիչ կպատմեք ձե՞ր մասին,- կրկին ժպտաց հոգեբույժը՝ հայացքն ուղղելով Մուշեղին:

-Երեսուն տարեկան եմ: Ծնվել եմ Սյունիքի մարզի գյուղերից մեկում: Ամուսնացել և բաժանվել եմ: Ունեն երկու որդի: Ապրում եմ մեռակ: Աշխատում եմ խանութներից մեկում:

-Վացու՞ց եք ակնոցներ կրում:

-Արցախյան պատերազմից հետո: Մի քանի անգամ վիրավորվել և ուղեղի ցնցում եմ ստացել:

-Հիրավի, այդ ամենն անդրադառնում է տեսողության վրա: Սակայն իմ կարծիքով վատ տեսողության պատճառներից մեկն էլ այն է, երբ մարդ ցանկություն չի ունենում տեսնելու աշխարհն այնպիսին, ինչպիսին կա: Բացի այդ, շրջապատող աշխարհից միաժամանակ վախի ցացում ունես: Դա ճի՞շտ է: Ինչպե՞ս ես դու մտածում:

-Դուք իրավացի եք, բժշկուհի: Ես այս կյանքի հետ չեմ հարմարվում: Նույնիսկ ատում եմ ինձ վերջին ժամանակաշրջանում: Ցանկություն չունեմ որևէ մեկին տեսնելու, որովհետև ոչ մեկին չեմ հավատում ու չեմ վստահում:

-Գուցե ենթագիտակցությունն է քեզ ասում, որ դու ավելորդ ես այս կյանքում, դրա համար ես ամեն ինչից հոգնած, նյարդայնացած: Անկատա՞ր եմ մնացել ցանկություններիդ, թե՞ դժգոհ ես մասնագիտությունից:

-Շատ մտահոլացումներ ունեի, որոնց մասին հիմա անիմաստ եմ համարում երազելը: Մասնագիտությամբ շինարար եմ:

-Ի՞նչն է խանգարում: Դու շատ երիտասարդ ես, ուժերի ծաղկման շրջանում և ոչ մի վտանգից չպիտի վախենաս: Կյանքը միշտ ռիսկ է: Այնպես որ, միշտ առաջ նայիր: Ծանր ճգնաժամը պիտի հանես քո գլխից և հոգուց: Մարդն ամբողջ կյանքում որոնումների մեջ է:

-Ինձ խանգարում են պատերազմից մնացած հուշերն ու սարսափելի տեսարանները: Ես ինձ գտել ու կորցրել եմ պատերազմում,- Մուշեղը մի պահ խոր շունչ քաշեց ու լռեց:

Լիլիթ Մամիկոնյանը լավ էր հասկանում իր հիվանդին: Դեռ երկրորդ համաշխարհային պատերազմին մասնակցած զինվորներին բուժիետազոտություններ անցկացնելուց հետո հայտնաբերվել է, որ նրանցից միայն քսանհինգ տոկոսն է ֆիզիկապես առողջ վիճակում: Պարզվել է, որ ռազմական ոչ մի գործողություն առանց հոգեկան ցնցման ազդեցության չի լինում: Նրանց մեծ մասի մոտ ի հայտ են գալիս խելացորության և շիզոֆրենիայի ախտանիշներ: Նույնիսկ բժշկության մեջ հանդես է եկել «զինվորական հոգնածություն» և «մարտական ուժասպառում» հասկացությունները: Ինքնին հասկանալի է, որ չբուժվելու դեպքում վատթարանում է նրանց վիճակը:

-Պետք է կարողանաս հաղթահարել քո ներսում ունեցած ցավը, աստիճանաբար մի կողմ նետես քեզ տանջող հուշերը:

Յոզեֆույժը լավ էր հասկանում, որ Մուշեղի պես հիվանդներին նման ճգնաժային վիճակից դուրս բերելու համար բուժման ընթացքում նշանակություն ունի անհատի հարմարվողականության հնարավորությունները: Իսկ հարմարվածությունը կյանքի սովորական պայմաններին նրանց մոտ շատ ծանր է ընթանում: Դա պայմանավորված է երեք գործոնով. առաջին՝ ռազմական գործողություններում ստացած հոգեկան ցնցման ծանրաբեռնվածության աստիճանով, երկրորդ՝ ժամանակակից երիտասարդ սերնդի սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններով, երրորդ՝ պատերազմի մասնակիցների հանդեպ պետության և հասարակության ունեցած վերաբերմունքից:

-Ես ուզում եմ լսել ձեր կարծիքը, ինչպես նաև խորհուրդները, բայց իրականության հետ չեմ հարմարվում: Ես հարյուրավոր մահեր եմ տեսել ռազմի դաշտերում... Կորցրել եմ լավագույն ընկերներիս և ինձ թվում է, թե իմ շուրջը մնացել են միայն դավաճանները: Չեմ կարողանում առաջ մայել, մտածել ապագայի մասին: Առհասարակ ոչ մի բանի մասին մտածել չեմ կամենում: Չեմ հավատում սիրուն: Բոլոր մարդիկ ինձ համար նույնն են: Ահա ինչու երբեմն ինքնասպանության մասին եմ մտածում: Ես սարսափում եմ ապրելուց:

-Ամնտություն է ինքնասպանության մասին մտածելը: Եթե քեզ դավաճանել են, այդ չի նշանակում, որ ամբողջ աշխարհը լի է միայն դավաճաններով: Ամենուր կողք- կողքի են չարն ու բարին: Կյանքը

միշտ էլ իր իմաստն ունի: Հիշիր, մարդիկ ձգտել են ապրել անգամ համակենտրոնացման ճամբարներում: Դու չարացած ես: Հասկանում եմ, որ քեզ համար հեշտ չէր ծանր փորձությունների միջով անցնելը: Սակայն դրանով դու ձեռք ես բերել փորձ: Ուստի՝ ավելի զգոն պիտի լինես:

-Ես չեմ կարող այն ուղիով գնալ, ինչ կյանքն է իմ առջև խնդիր դնում:

-Ստացվում է քո խոսքերից, որ եթե ականատես ես եղել չարին, դաժանությանը, դու նույնպես այդպիսին ես դարձել: Եի՞շտ եմ հասկանում,- հոգեբույժը տեսնելով, որ հիվանդը չի արձագանքում, շարունակեց.- Ինքդ պիտի քո հոգում խաղաղություն փնտրես, և աշխարհը աչքիդ կդառնա բարի ու թափանցիկ:

-Իսկ եթե ես ցանկություն չունեմ ինձ մոտ մեկին թողնելու՞: Բարոյապես ինձ մեռած եմ զգում: Պարզապես այսպիսին չպիտի լինի կյանքը պատերազմից հետո: Իմ շուրջն անվերջ բացասական լիցքեր են ստանում և ինձ թվում է, որ շուտով ամեն ինչ կփլվի:

-Բայց ոչ մի երկրում երբեք պատերազմի ավարտից հետո հեշտ չի եղել: Ժամանակ է պետք, որ ամեն ինչ իր բնականոն հունով ընթանա:

-Դուք ինձ փորձում եք սփոփե՞լ կամ հանդարտացնե՞լ իմ մեջ ապրող ցավը: Այնինչ ոմանք օգտվեցին պատերազմական այս վիճակից՝ երկիրը թալանելու համար: Այսօր մշտական լույս ունենում են հիվանդանոցները և հացի փռերը, բնակչությունը մի քանի ժամ էլեկտրական հոսանք ունենալու համար աղոթում է: Գուցե բոլորը տեղավորվե՞ն հիվանդանոցներում կամ էլ կու՞չ գան հացի փռերի անկյուններում: Իսկ իմ հաշմանդամ մարտական ընկերները... Նրանք քաղցած են, տկլոր, հուսահատ...

Լիլիթ Մամիկոնյանը զգում էր, թե որքան խորն էր Մուշեղի վիրավորանքը... Անշուշտ նրա դժգոհություններում ճշմարտության ձայնն էր խոսում: Չէր կարող ամբողջովին հերքել նրա ասածները, քանի որ հիվանդն իրեն այլևս չէր վստահի: Գերադասեց ո՛չ ժխտել, ո՛չ էլ շարունակել նրա միտքը:

-Ինչո՞վ էիր զբաղվում մինչև պատերազմը: Կարծում եմ՝ դու բավականին ակտիվ կյանք ես վարել:

-Այո՛, չեք սխալվում,- տխուր ժպիտ թրթռաց հիվանդի աչքերում:- Պատերազմից առաջ ուրիշ էր: Շատ ուրախ անցավ ուսանողական կյանքս: Խենթություններ էինք անում աղջիկների հետ: Յետաքրքիր արշավներ էինք կազմակերպում, զվարճալի երեկոներ, մրցույթներ... Իսկ երբ արցախյան շարժումը սկսվեց, ես առաջին կամավորականներից էի, որ հայտնվեցի այնտեղ: Իմ համակուրսեցիներից մեկը՝ Գոռը, ինձ օգնության կանչեց: Հրաժարվել չէի կարող: Նա իմ մտերիմ ընկերներից էր:

-Հիմա՞ էլ կապ ես պահպանում նրա հետ:

-Այո՛, նա այն բացառիկ մարդկանցից է, որին երբևիցե ճանաչել եմ կյանքում:

-Առանց լավ մարդկանց ու ձեզ պես հայրենասեր տղաների մեր կյանքն իմաստ չի ունենա: Առանց ձեզ մեր ազգն էլ կանգուն չի լինի:

Մուշեղն իսկապես իրեն թեթևացած զգաց բժշկուհու վերաբերմունքից: Նա խոր արտաշնչեց՝ երախտագիտությամբ լի հայացքն ուղղելով Լիլիթ Մամիկոնյանին:

-Իսկ հիմա ազատ ես: Մենք մեր գրույցը կշարունակենք վաղը՝ նույն ժամին:

Մուշեղը հեռացավ: Հիվանդասենյակում իրեն էր սպասում Անայիսը:

-Վերջապե՛ս եկար, իսկ ես կարծում էի, որ այլևս քեզ չեմ տեսնի:

-Դու ավելի շուտ պիտի մտածեիր բուժվելու մասին, թե չէ աչ ու ձախ անտեղի կարող ես զայրանալ և մարդկանց վնաս պատճառել,- ասաց Անայիսը:

-Որոշել ես գլխիս ճա՞ն կարդալ... Բայց քիթդ վիրահատությունից հետո սիրունացել է,- փորձեց կատակել Մուշեղը:

-Ուրեմն շնորհակալություն՞ն հայտնեմ ինձ հարվածելու համար,- Անայիսին դուր չեկավ նրա դեմքի ցինիկ ժպիտը:

-Չէր խանգարի: Դու ինձ ասա, թե ինչո՞վ ես զբաղվում:

-Ուզում եմ գիրք գրել զոհված և անհայտ կորած ազատամարտիկների մասին: Տեղեկություններ եմ հավաքում: Դու էլ կօգնես ինձ ընկերներիդ մասին ստույգ տվյալներ հաղորդելու նպատակով:

-Դժվար բան ես խնդրում: Սակայն խոստանում եմ հիվանդանոցից դուրս գրվելուց հետո ցանկությունդ կատարել,- Մուշեղը կողապահարանից հանեց ծխախոտի տուփը և մի հատիկ ծխախոտ վառեց:

-Իսկ եթե բժիշկը նե՞րս մտնի,- հարցրեց Անայիսը:- Ավելի լավ չէ՞ր լինի ճաշես, տաք կերակուր եմ բերել:

-Հետո կուտեմ: Ուզում ես ասե՞լ, որ մտածել ես իմ մասին:

-Դու օտար մարդ չես ինձ համար,- ավելացրեց Անայիսը:- Ի դեպ ուզում եմ քեզ հարցնել, թե քո նվիրած ոսկյա վզնոցս չեմ գտնում: Գուցե քե՞զ մոտ է մնացել:

-Ո՛չ, իմ տանը վզնոցդ չեմ տեսել: Երևի մտածում ես, թե վերցրել ու վաճառել եմ:

-Ես միայն հարցրեցի, իսկ դու արագ եզրակացություններ արեցիր: Չպիտի՞ հարցնեի,- Անայիսը կասկածամտորեն նայեց նրան:

Սակայն նրանց խոսակցությունը կիսատ մնաց: Ներս մտավ տոպրակը ձեռքին մի կին՝ մոտ երեսուն տարեկան և զայրացած նայելով Անայիսի կողմը՝ հարձակողական տոնով հարցրեց.

-Ես քո հերթական լրբերի՞ց է:

-Բերանդ կարգին բացիր: Նա իմ ընկերուհին է, այնինչ քո ետևից հեռագիր չեմ ուղարկել: Ի՞նչ գործ ունես այստեղ: Մե՞ք միասին չե՞ք ապրում, ես քեզ տեսնել չեմ ցանկանում,- կոպտեց Մուշեղը:

Անայիսը հասկացավ, որ նա դիմում էր իր նախկին կնոջը: Եվ որպեսզի աղմուկ չբարձրանա հիվանդանոցում, գերադասեց հանգիստ հեռանալ, որը սակայն չհաջողվեց: Նրա կինն արագ վրա հասավ, երբ նա իջնում էր աստիճաններով և կատաղած քաշեց մազերից: Անայիսը ցավից կուչ եկավ՝ հազիվ շշնջալով.

-Բաց թո՛ղ, ցավում է: Քո ամուսինն ինձ բուրոբովին պետք չէ:

-Այդ դեպքում ինչու՞ ես նրա մոտ եկել, այ լիրբ:

Անայիսն ազատվելով լաջառ կնոջից՝ անպատասխան թողնելով նրան՝ հեռացավ, քանի որ միջանցքում երեք բուժքույրեր հայտնվեցին: Դուրս գալով փողոց՝ դեռ կանգառ չհասած, նա հեռվից ձեռքը թափ տալով ստիպված մի պատահական մեքենա կանգնեցրեց: Արդեն մեքենայի մեջ հարդարելով մազերը՝ նա դառնությամբ մտածեց, որ վտանգավոր էր ոչ միայն Մուշեղի հետ շփվելը, այլև չարություն

կարելի է սպասել նրան շրջապատող մարդկանցից: Ինքն էլ նույնիսկ իր հետ եղած փորձանքից դասեր չէր անում լոկ այն պատճառով, որ վախենում էր Մուշեղի վրեժխնդրությունից:

Եթե նկարչության մեջ հնարավոր լիներ պատկերել մի արտասովոր արբանյակ և գոնե կարճ ժամանակամիջոցում հեռանալ իրական աշխարհից, Տիգրանուհին առանց երկմտելու անպայման կստեղծեր այն: Յուրաքանչյուր մարդու մոտ նման ցանկություն առաջանում է, երբ ծանրանում են ոչ միայն իր կեցության պայմանները, այլև մռայլ ու գորշ են դառնում շրջապատող կյանքի պատկերները: Հայտնի ճշմարտություն է նաև այն, որ արվեստագետի համար ուրիշի ցավ չի լինում, քանի որ մարդկային շփումների ընթացքում դրսևորված տառապանքներն ու հարվածները նա անց է կացնում իր սրտի պրիզմայի միջով, այլապես աշխարհում երբեք չեն հայտնվի արվեստի գլուխ-գործոցներ: Բարեբախտաբար, արվեստագետի փրկությունը նրա իռացիոնալ մտածողության մեջ է: Այդպիսով, նա կարողանում է կտրվել ռեալ իրականությունից, ապրելով իրական կյանքի նմանությամբ ստեղծված մի աշխարհում, որը կատարյալ է իր էությամբ, գույներով ու պատկերներով:

Տիգրանուհու փրկությունն իր համար հարազատ այդ աշխարհում գտնվելու վիճակն է: Ժամանակին ավարտելով իրեն հանձնարարված թատրոնի գործը, նա որոշեց մի քանի օր հանգստանալուց հետո կատարել այրի կնոջ խնդրանքը: Սակայն նյութական կողմն իրեն առաջվա պես մտահոգում էր, որովհետև բնակվարձը վճարելու համար մեկ ամիսը չափազանց արագ էր անցնում: Նա հուսով էր, որ ռեժիսոր Օլեգն իր խոստումը կկատարեր և չէր ուշացնի իր աշխատանքի համար տրվելիք վարձը: Խավարի մեջ, լամպի լույսի տակ, բազմոցի մի անկյունում կուչ եկած, սպասում էր, թե լույսը երբ կմիացնեն, երբ հեռախոսի զանգը հնչեց: Օլեգն էր: Երկու օր հետո ներկայացման պրեմիերան պիտի լիներ, այդ պատճառով ցանկություն հայտնեց հանդիպել Տիգրանուհուն: Ճշտելով նրա հասցեն, խոստացավ

այցելել: Նկարչուհու տրամադրությունը նկատելիորեն փոխվեց: Նա մտածեց, որ հավանաբար ռեժիսորն ուզում էր իրեն հանդիպել վարձատրելու նպատակով: Իսկույն ևեթ վեր կենալով տեղից, նկարչուհին լամպը ձեռքին գնաց լոգարան՝ մազերը հարդարելու, ինչպես նաև դեմքի կոսմետիկան թարմացնելու համար: Հագիվ էր ավարտել հարդարումը, երբ դուռը ուժեղ բախեցին: Այս անգամ նա լամպի դողացող լույսի ներքո հայտնվեց միջանցքում: Թեև սիրտն արագ թրթռում էր անհանգստությունից, այնուամենայնիվ, գերադասեց դռան ետևից հարցնել, թե ով է իրեն հարցնողը: Սովորության համաձայն՝ Տիգրանուհին անժանոթների առջև դուռը չէր բացում, քանի որ մենության մեջ գտնվող մարդը հիմնականում անպաշտպան է, ուստի իր յուրահատուկ ապրելակերպն ունի: Լսվեց Սիփանի ձայնը:

-Հո՞ չխանգարեցի,- լայն ժպտաց Սիփանը՝ հայտնվելով սենյակում:

-Իհարկե, ոչ: Միայն տասը բոպեից լույս կունենանք,- պատասխանեց տանտիրուհին, միանգամից զգալով, որ նա հասցրել էր ալկոհոլ օգտագործել:

- Օլեգը զանգել է: Ուր որ է, կգա,- ասաց Տիգրանուհին:

Իսկապես ռեժիսորը չուշացավ: Նրա ձեռքին երկու պայուսակ կար: Սիփանը ջերմորեն ողջագուրվեց ընկերոջը:

- Ցանկացա ուրախությունս երկուսիդ հետ կիսել,- ասաց Օլեգը: Տիգրանուհի, դու միայն ափսեները և բաժակները բեր: Ռեստորանից խորոված ու քյաբաբ են վերցրել, նաև հանքային ջուր, հյութ և օղի:

Նկարչուհու դեմքին ժպիտ երևաց: Նա դառնությամբ փորձեց հիշել, թե վերջին անգամ երբ էր ճոխ սեղանից օգտվել: Այդպես էլ ոչինչ չհիշելով՝ սեղանին դասավորեց Օլեգի բերած ուտելիքները:

-Սիփան, ի դեպ, քեզ հետ գործ ունեն: Կարծում եմ, չես մերժի,- ասաց Օլեգը:

-Պատրաստ եմ օգնել, եթե իմ ուժերից վեր չէ:

-Ես առաջարկում եմ քեզ մեկնել Սանկտ Պետերբուրգ՝ պայմանագրեր կնքելու տարբեր թատրոնների հետ: Ուզում եմ հյուրախաղերով հանդես գալ այնտեղ: Դու ծանոթներ ու մտերիմ մարդիկ այդ բնագավառում չատ ունես: Չգիտեմ, քեզնից հարմար թեկնածու չեմ գտնի:

-Ե՞րբ պետք է մեկնեն,- միանգամից հարցրեց Սիփանը:

-Ուրեմն՝ դու համաձայնվեցի՞ր: Հավանաբար, մեկ ամսից հետո: Ես քեզ համար գործուղում կձևակերպեմ: Բնականաբար, կհոգամ քո նյութական ծախսերի մասին:

Տիգրանուհու գլխին ասես սառը ջուր լցրեցին: Նայելով Սիփանի ուրախությունից փայլատակող աչքերին, զգաց, որ նա կարոտել էր կնոջն ու զավակին, այլապես այդպես հանկարծակի իր համաձայնությունը չէր տա: Տիգրանուհու ոտքերի տակից հողն ասես ինքնըստինքյան փլվեց: Ներքին մի ձայն աղերսում էր, որ ճիզեր գործադրի Սիփանին այդ որոշումից ետ պահելու համար:

-Իսկ հնարավոր չէ, որ մեկ ուրիշին ուղարկես,- տխուր հայացքով այս անգամ նկարչուհին նայեց Օլեգին:

-Ինչու՞ ես անհանգստանում: Չէ՞ որ նա ընդմիշտ չի հեռանում մայրաքաղաքից:

-Բայց նա մի քանի ամիս է առաջ է եղել այնտեղ,- սրտի ցավով ասաց Տիգրանուհին՝ հիշելով Սիփանի դավաճանության մասին:

-Ոչինչ չեմ հասկանում: Գուցե դու ինձ բացատրե՞ս, թե Տիգրանուհին ինչու է այդքան շատ մտահոգված,- ռեժիսորը երկնտրանքով նայեց Սիփանին:

-Նա չի ուզում ինձնից բաժանվել, ու ես գնահատում եմ իմ հանդեպ ունեցած նրա նվիրվածությունը: Այդպես չէ՞,- արվեստագետն իր հայացքը դարձրեց Տիգրանուհուն և նրա աչքերում վախ տեսավ:- Ավելի լավ կլինի, մի քիչ խմենք և Օլեգին նոր պրեմիերայի առթիվ ցանկանանք հաջողություններ:

Ռեժիսորը ժպտաց: Սիփանն արդեն լցրել էր բաժակները: Տիգրանուհին ևս մինչև վերջ դատարկեց բաժակը: Ջգում էր, որ հուզմունքից խեղդվում էր կոկորդը ու քիչ էր մնում նրանց ներկայությամբ արտասվեր: Սակայն նա այդպես էլ չկարողացավ օգտվել սեղանից: Ախորժակը միանգամից փակվել էր:

-Դու ինչու՞ կարգին չես ընթրում,- հարցրեց Օլեգը:

-Ես մինչև ձեր գալը ճաշել էի,- ստեց Տիգրանուհին: - Դուք ինձ վրա ուշադրություն մի դարձրեք:

-Բայց ես այստեղ եմ եկել իմ շնորհակալությունը քեզ հայտնելու: Երիշտ է, նյութական վարձատրությունը հետո կլինի:

- Ափսո՛ւ, որ հիմա չեմ վարձատրվելու: Մի քանի օրից հետո տան վարձը պիտի վճարեմ: Սակայն ուրախ եմ ինձ մոտ հյուրընկալվելու համար,- փորձեց ժպտալ Տիգրանուհին, միաժամանակ զգալով, որ աստիճանաբար սկսում է ատել Օլեգին ոչ թե այն բանի համար, որ իր չաչարանքի դիմաց չի ուզում փող տալ, այլ որ ուզում է իրենից խլել Սիփանին իր անմիտ առաջարկությամբ:

-Դու քեզ այսօր լավ չե՞ս զգում,- Սիփանը միամիտ հարց տվեց ընկերուհուն:

-Չի՞ լինի, որ ինձ այդքան շատ հարցեր չուղղվեն: Եկեք խոսենք ուրիշ թեմաների մասին: Օրինակ, թե ինչքա՞ն մարդ է հրավիրված առաջին պրեմիերային, ո՞վ է երաժշտության և սցենարի հեղինակը և այլն,- ասաց Տիգրանուհին՝ նայելով Օլեգին:

Ռեժիսորը ոգեշնչվելով նկարչուհու խոսքերից՝ մանրամասն տեղեկություններ հայտնեց ներկայացման մասին: Այնուհետև խոսակցությունը շարունակվեց այլ թեմաների շուրջ: Այդ ողջ ընթացքում Տիգրանուհին ոչ մի բանի մասին մտածել չէր կարողանում: Ավելին. նույնիսկ նրանց խոսակցությանը չէր հետևում ու չէր լսում: Նա վախենում էր կորցնել Սիփանին:

Օլեգի այցից հետո Տիգրանուհին կորցրեց հանգիստը: Բնության օրենքների համաձայն՝ կանայք ավելի շուտ են զգում վերահաս վտանգը: Սիփանը դեռ չէր մեկնել, բայց նա թևահատ էր, ջարդված: Անկասկած, գիտեր, որ սիրած տղամարդն անպայման կհանդիպի իր նախկին կնոջը ու իրեն առաջվա պես կդավաճանի: Եվ ինչքան էլ Սիփանն իրեն հավատացներ, որ ընդամենը կհանդիպի նրան զավակին տեսնելու նպատակով, միևնույն է, Տիգրանուհին չի հավատա: Իր աչքի առաջ Սիփանն այնպիսի ոգևորությամբ ընդունեց Օլեգի առաջարկը, ասես նրան որպես լավագույն արվեստագետի պատրաստվում էին Նոբելյան մրցանակ շնորհել: Տիգրանուհին հի-

նա, քան երբևիցե, համոզված էր, որ իր սերը միակողմանի էր: Այլապես Սիփանը չէր թողնի, որ ինքը տառապեր: Այդ մտքից էլ էր նեղվում: Չէ՞ որ ի վերջո, մարդու մասին պատկերացում են կազմում նրա արարքներից: Տիգրանուհին քիչ էր մնում ցնորվեր: Եվ փոխանակ ավելի շատ մտածեր իր բնակարանի վարձի մասին, ընդհակառակը, տարված էր Սիփանի շուրջը պտտվող մտքերով: Մենակ ու տխուր խոհերով էր ծանրաբեռնված, երբ դուռը ծեծեցին: Հարևանուհին էր՝ Անուշը: Տիգրանուհու դեմքին թախծոտ ժպիտ երևաց:

-Նորից հիվա՞մնդ ես,- հարցրեց հոգատար հարևանուհին:- Դեմքիդ բոլորովին գույն չկա:

-Ո՛չ, մտահոգված եմ: Ի՞նչ կա,- - Տիգրանուհին ուժեր գործադրեց՝ ծածկելու համար նրանից վիատությունը:

-Վաղը տղայիս ծննդյան օրն է: Ամուսնուս հետ որոշեցինք քեզ նույնպես հրավիրել:

-Շնորհակալ եմ հրավերի համար: Անպայման կգամ: Իսկ հիմա ուզում եմ, որ ինձ հետ մի բաժակ սուրճ ըմպես,- ժպտաց Տիգրանուհին:

-Թեկուզ քիչ առաջ եմ սրճել քրոջս ընկերակցությամբ, բայց քեզ հետ էլ հաճույքով կսրճեմ,- Անուշը միանգամից զգաց, որ Տիգրանուհին միայնությունից բավականին ճնշված էր ու հուսահատ տեսք ուներ: Ահա ինչու սիրով ընդունեց նրա հրավերը:

Մինչ սուրճը կեփվեր, տանտիրուհին սեղանին շոկոլադի հետ հյուսք դրեց:

-Ինչպե՞ս են գործերդ, Տիգրանուհի:

-Ոչ այնքան բավարար: Անգամ այդ մասին չեմ ցանկանում խոսել:

-Ընդհակառակը, խոսիր, որ ինքս էլ քեզ մի բանով օգտակար լինեմ:

-Դու ամուսնուդ հետ մի անգամ արդեն ինձ օգնել եք:

-Բայց մեր երկրում ո՞ր արվեստագետի վիճակն է լավ: Ինձ միայն ճիշտն ասա, տան վարձը վճարե՞լ ես:

-Անո՛ւշ, ես իսկապես ամաչում եմ պատասխանել, թեկուզ տարիքով մեծ եմ քեզնից:

-Տարիքը կապ չունի: Ես ամուսին ունեմ, որ մշտապես հոգ է տանում իմ ու երեխաներիս մասին: Քո մասին ո՞վ է մտածում:

Տեսնելով, որ Անուշն անկեղծորեն անհանգստացած էր իր համար, Տիգրանուհին համարձակություն ունեցավ իր առաջարկն անելու:

-Անուշ, գուցե կինանաս, թե քո շրջապատում ո՞վ կուզենա պղնձե մեծ կաթսա և յուրահատուկ նախշերով մի սիրուն ապարանջան ունենալ:

-Այդ դեպքում ցույց տուր, որ իմանամ, թե ինչպես ներկայացնել,- Անուշը զգաց, որ չի սխալվել: Իրականում նկարչուհին տան վարձը չէր կարողանում վճարել, թե չէ ինչու պիտի ծախեր իր ապարանքերը:

Տիգրանուհին պահարանից հանեց իր նոր իրերը, որոնք իսկապես փայլուն էին իրենց գեղեցկությամբ: Անուշը ոչ միայն անմիջապես հավանեց դրանք, այլև խոստացավ իր որդու ծննդյան տոնից հետո անպայման գնել:

-Շնորհակալություն: Դու ինձ նորից փրկեցիր: Ի՞նչ անեմ, իմ արված աշխատանքների դիմաց դեռ չեմ ուզում վճարել, այնինչ տան վարձը ուշացնել չեմ կարող:

-Քեզ արդեն ասել եմ, էլի եմ կրկնում, հույսդ միշտ կարող ես մեզ վրա դնել,- Անուշն այնպես բարեհամբույր ժպտաց, ասես գարնան բուրբուր շողերը պարուրված էին այդ ժպիտի մեջ:

-Ինչու՞ հեռուստացույցը չես միացնում: Հայաստանի առաջին ալիքով հետաքրքիր ֆիլմ են ցուցադրում,- հարցրեց Անուշը:- Հիմա էլ լույս կա, թե՞ մոռացել ես...

-Ո՛չ, չեմ մոռացել: Միայն թե թույլ հոսանքի դեպքում հեռուստացույցս չի միանում:

-Դու պետք է քեզ համար նորը գնես: Դա մեր օրերի համար պիտանի չէ:

-Գիտեմ, բայց այժմ հնարավորություններ չունեմ: Այնքա՞ն բան է ինձ պակասում, որ հեռուստացույցի մասին չեմ էլ մտածում,- տխուր պատասխանեց Տիգրանուհին՝ ավելացնելով,- Եվ հետո ազատ ժամանակս նկարչությանն եմ տրամադրում:

Հարևանուհին ոչինչ չարձագանքեց: Սուրճ խմելուց հետո նա հեռացավ: Տանը երեխաներին մենակ էր թողել: Տիգրանուհին հո-

գեպես փոքր-ինչ խաղաղվեց և վեր կենալով տեղից, որոշեց զբաղվել յուղաներկով: Այրի կնոջ պատվերը դեռ մնացել էր: Հետաքրքիրն այն էր, որ ամեն անգամ, երբ նա փորձում էր նայել այդ լուսանկարին, պատերազմական գործողություններն էր հիշում: Հիշում էր տիկին Ռոզայի պատմածները և ծանրանոմ էին մտքերը, դանդաղում էր շնչառությունը: Ասես լուսանկարից իրեն նայող անհայտ կորած երիտասարդն ըմբոստացած ինչ-որ բան էր անընդհատ ուզում իրեն հաղորդել: Իսկ գուցե իրականում նա արդեն կենդանի չէր: Ո՞վ գիտե: Հույսը վերջինն է մեռնում: Ամեն դեպքում անհրաժեշտ էր հավատալ, որ նա շարունակում է լլկանքների ենթարկվել թուրքերի կողմից կամ գուցե վաճառքի է հանվել և գտնվում է ուրիշ երկրում: Տիգրանուհին փշաքաղվեց, երբ հիշեց, թե ինչպես էր տիկին Ռոզան կարոտով համբուրում կորած միմուճար որդու զինվորական համազգեստի օձիքը: Տիգրանուհին նայելով լուսանկարին, զգաց, թե ինչպես այնտեղից իրեն էր նայում մի խելամիտ երիտասարդ, որ պատրաստ էր ինքնազոհողության հանուն հայրենիքի, հանուն մերձավորների խաղաղ կյանքի: Մատիտը վերցնելով՝ նկարչուհին մի քանի էքզիզներ արեց, երբ հանկարծ հեռախոսի զանգը հնչեց: Անայիսն էր:

-Մի լավ նորություն ունեն քեզ հայտնելու: Դու պետք է իմանաս, որ կյանքում նման շանս երկրորդ անգամ չի լինի: Այդ պատճառով...

-Առանց նախաբանի խոսել չե՞ս կարող,- անհամբերությամբ նրան ընդհատեց Տիգրանուհին:

-Այս անգամ խոսքս անմիջապես քեզ է վերաբերվում: Շատ շտապ մեկ սենյականոց բնակարան են վաճառում՝ ընդամենը մեկուկես հազար դոլարով:

-Զի կարող պատահել,- համարյա բացականչեց Տիգրանուհին:

-Մեկը ստիպված է վաճառել իր բնակարանն էժան գնով, որովհետև որդին բանակում ինչ-որ մեկին դանակով խփել է: Այդ գումարը կօգնի, որ տղային բանտ չնստեցնեն: Կարճ ասած, դու պետք է շտապ գումար գտնես:

-Բայց որտեղի՞ց... Ես, իհարկե, այդ գումարը կվճարեմ նրան, ով կհամաձայնվի ինձ պարտքով փող տալ:

Անայիսը մի պահ լռեց: Տիգրանուհին զգաց, որ նման տարբերակ հավանաբար կար, թե չէ միանգամից չէր լռի:

-Մորաքույրս կարող է քեզ օգնել, բայց նա ժամկետը կհարցնի:

-Ամեն ինչ իմ նկարների վաճառքից է կախված: Հնարավոր է, որ մի քանի ամսից փակեն: Ի՞նչ ասեն, ինձ պետք է վստահել, ուրիշ ոչինչ:

-Իսկ ծնողներդ չե՞ն կարող օգնել,- հարցրեց Անայիսը:

-Ո՛չ, ես ինքս այդ հարցը ի վիճակի եմ լուծել:

-Այդ դեպքում երեկոյան կայցելեն մորաքրոջս ու կփորձեն համոզել նրան:

-Ես մինչև կյանքիս վերջը խոստանում եմ մոմեր վառել քեզ համար,- խոր թախանձանքով հնչեցին Տիգրանուհու խոսքերը:

-Ուրեմն՝ այսօրվա դրվեցինք: Սպասի՛ր իմ զանգին:

Տիգրանուհին վեր կացավ տեղից: Նա փոքր-ինչ շփոթված մտավ խոհանոց՝ իր համար նորից սուրճ պատրաստելու: Սրտի զարկերակն այնպես արագ էր տրոփում, որ թվում էր, թե մեկը վազում էր իր ետևից՝ թալանելու կամ բռնաբարելու համար: Այնպես էր ուզում հավատալ, որ Աստված իրեն օգնության կհասնի: Նա նույնիսկ աղերսագին նայեց իր ձեռքի էսքիզներին: Հետո դրանք մի կողմ դնելով՝ կես բաժակ վիսկի իր համար լցրեց՝ լարվածությունը թուլացնելու նպատակով: Ներքին անհանգստությունից քրտնել էր: Անվերջ մտածում էր, թե ում զանգեր կամ ում դիմեր: Տիգրանուհին նաև մռայլվեց, երբ զանգեց եղբորը Ռուսաստան՝ օգնություն խնդրելու և մերժում ստացավ: Նույնիսկ ավսոսաց իզուր արված զանգի համար: Դժվար էր գիտակցելը, որ դու մենակ ես այս աշխարհում՝ քո հոգսերի, քո ցավի, քո երազանքների հետ: Ինչևէ, իրականությունից փախչել չի լինի: Արդեն պառկել էր քնելու, երբ Անայիսը զանգեց: Պատասխանը դրական էր: Մորաքույրը համաձայնվել էր վեց ամիս ժամկետով գումար տրամադրել: Ընկերուհու զանգը նման էր անտառի մեջ գիշերվա խավարում լուսատուիկի ուրախ ձայնին: Տիգրանուհին այդ ցնծությունը երբեք չի մոռանա:

Մուշեղը շարունակում էր տարբեր բուժումներ ստանալ, բայց հոգեկան ճգնաժամային վիճակն էապես չէր փոխվում: Դա պայմանավորված էր նրա՝ որպես անհատի, զգացմունքային կայունության, անձնական ռեսուրսների հետ, նաև թե ինչպիսի հոգեբանական պաշտպանիչ որակներ էր իր մեջ կրում: Չէ՞ որ պատերազմում մարդը ոչ միայն ականատեսն է զանազան բռնությունների, այլև դառնում է նրանց ակտիվ մասնակիցը: Այդ գիշեր Մուշեղը ևս սարսափելի երազ տեսնելով՝ այնպես բարձրաձայն գոռաց՝ «կսպանեն», «կմորթեն» բառեր հնչեցնելով, որ սենյակում պառկած կողքի հիվանդները լեղաճաք եղած՝ արթնացրին նրան: Մուշեղը վախեցած զարթնել էր՝ բոլորովին ջարդված, մկանները ձգված, քրտինքի մեջ կորած: Նրա բռունցքները սեղմված էին՝ պատրաստ կռվելու: Դա ճգնաժամային ամենաբարդ վիճակներից էր: Եվ որպեսզի մարդկանց նորից սարսափահար չանի, ստիպված էր մինչև լուսաբաց կոպերը չփակել: Իսկ արդեն նախաճաշից հետո նա նշանակված ժամին մտավ հոգեբույժի մոտ: Լիլիթ Սամիկոնյանը իր մատյանում ինչ-որ բան էր լրացնում: Սակայն դա չխանգարեց, որ նա միանգամից չնկատեր Մուշեղի չափազանց լարված տեսքը:

-Դարձյալ անքնությունն է անհանգստանալուդ պատճառը,- հարցրեց հոգեբույժը՝ տեղավորվելով հիվանդի դիմաց ընկած աթոռին:

- Սարսափազդու երազներն ինձ հանգիստ չեն տալիս:

-Ի՞նչ երազ ես այս գիշեր տեսել:

-Թվաց, թե թուրքերով շրջապատված է հիվանդանոցը ու ես ցանկանում էի բոլորին պաշտպանել: Իբրև նրանցից մեկը մոտեցել էր մի ծեր կնոջ և ուզում էր բռնաբարել: Յենց այդ ժամանակ էլ ես գոռացի, որ կմորթեմ նրան՝ արթնացնելով կողքիս հիվանդներին:

- Գիշերային երազները մի՞շտ են կապված լինում ռազմական գործողությունների հետ և արդյո՞ք քո տեսածները նույնությամբ ես վերապրում:

-Պատերազմից բացի ուրիշ երազներ չեմ տեսնում: Հաճախ նույնությամբ եմ տեսնում մարտական անցքերն ու տարբեր տեսարանները, երբեմն էլ փոխվում եմ դեպքերը, վայրերը, դեմքերը:

-Ինչքա՞ն ժամանակ ես կռվել և ի՞նչ տարածքներով ես անցել:

-Կռվել եմ չորս տարի: Մասնակցել եմ Մարտակերտի շրջանի Մարաղայի, Լենինավանի, Կարմիրավանի և այլ գյուղերի, նաև Լաչինի, Շուշիի պաշտպանական մարտերին:

-Զինվորական ի՞նչ աստիճան ունես:

-Մայրո եմ:

-Երբ հարցնեն, թե ի՞նչ է պատերազմը, քո գլխում միանգամից ի՞նչ է ծագում:

-Վախ, սարսափ, բռնություն, թալան, արյունահեղություն, մարդկային զոհեր...

-Ի՞նչ զգացումով ես մասնակցել կռիվներին և ի՞նչ զգացումով վերադարձել:

-Ի սկզբանե էլ գիտակցում էի, որ պիտի զենքը ձեռքիս կռվեմ Արցախը թուրքերից ազատագրելու նպատակով: Այնտեղ ապրում է հայ ժողովրդի հերոսական մի հատվածը և ըստ իս, յուրաքանչյուր հայի պարտքն է անտարբեր չլինել իր ազգի ճակատագրի համար: Իսկ Արցախում որոշվում էր ամբողջ ազգի գոյատևելու հարցը: Ես շատ ոգևորված էի, որ ինձ ևս բախտ վիճակվեց ցույց տալու իմ հայրենասիրությունը: Ի վերջո, մենք մեր հողն ենք պաշտպանել: Այնտեղից վերադարձա, սակայն ուրիշ մարդ դարձած: Միանգամից փոխվեց հոգեբանությունս, նախկին մոտեցումս կյանքի հանդեպ: Թեկուզ արժանապատիվ գործի համար եմ պայքարել, բայց բացասական լիցքեր են իմ մեջ ավելի շատ կուտակվել, որոնցից չեմ կարողանում ազատվել:

-Ի՞նչ եք զգացել մշտական կռիվների ընթացքում՝ վա՞խ, վախի հաղթահարու՞մ, թե՞ էլի ինչ-որ այլ զգացողություն:

-Այո՛, մեզ միշտ ուղեկցում էր վախի զգացումը: Ամեն օր աղոթում էինք, որ Աստված մեզ հետ լինի, որ ժամանակից շուտ չզոհվենք, քանի չենք կատարել մեր պարտքը: Կռվից հետո զորամաս վերադառնալիս, ուրախանում էինք, որ էլի ողջ մնացինք:

-Համոզված էիք, որ անպայման հաղթելու եք: Առհասարակ ինչպե՞ս էին զինվորների տրամադրության վրա ազդում հաղթանակներն ու պարտությունները:

-Գիտակցում էինք, որ մեր կռիվն արդար է ու պիտի հաղթենք: Մենք մեր նախնիների թողած հողերն էինք պաշտպանում: Բոլորին էլ հայտնի է, որ սկզբնական շրջանում հակառակորդը ռազմական ուժի գերազանցություն ուներ: Երբ նրանք իրար ետևից զավթում էին հայկական բնակավայրերը, մենք ստիպված էինք լինում նահանջել: Իսկ դա պարտվել է նշանակում, քանի որ թուրքերը հաշվերահարդար էին տեսնում գյուղերի խաղաղ բնակչության հետ: Նման դեպքերում մենք զազազում էինք, բայց չէինք ընկճվում: Հատկապես սարսափելի է հիշել Մարտակերտի տարածքի գյուղերի մասին: Բոլոր շրջաններից բռնագաղթած ժողովուրդը կենտրոնանում էր Ստեփանակերտում, որտեղ թշնամին ավելացնում էր արկակոծումների և ռմբահարումների հաճախականությունը:

-Ի՞նչ տեսարան է քեզ մոտ ամենից շատ տպավորվել:

-Ցնցող տեսարանները բազմաթիվ էին: Սակայն մեր ջոկատը դաժան տեսարանի ականատեսը դարձավ, երբ մտանք Մարտակերտի շրջանի Դրմբոն գյուղը: Թուրքերը քսաներկու հայի միջնադարյան վայրենությանը սպանել էին: Խեղված էին բոլորի մարմինները: Ոմանց աչքերն էին հանել, գլուխները մաշկազերծ արել ու կախել պարաններից, ոմանց կրծքներին սրերով ու դանակներով խաչեր էին քանդակել, մյուսների մարմինները մասերի էին հատված,- մռայլվեց Սուշեղը՝ դիմելով հոգեբույժին: - Խնդրում եմ, թույլ տվե՛ք ծխել, թե չէ իսկապես կցնդեմ:

Բժշկուհին գլխով դրական նշան տվեց, թեև նրան արգելել էր ծխել: Ինչևէ, նաև հասկանալի էր, որ միանգամից հեշտ չէր նրան ետ պահել վնասակար սովորություններից, մանավանդ որ պատերազմից վերադարձածները երկար ժամանակ դառնում են իրենց հուշերի գերին: Սուշեղը պետք է կյանքի կոչվեր հոգեբանորեն: Նա պետք է ամենից առաջ հաշտվեր ինքն իր հետ:

-Ի՞նչ էիք անում, որ չկորցնեիք ձեր հոգեկան հավասարակշռությունը:

-Ալկոհոլ էինք օգտագործում, այլապես կխելագարվեինք:

Լիլիթ Մամիկոնյանը որպես մասնագետ լավ էր հասկանում իր հիվանդին: Նա ոչ միայն իր պրակտիկայի տարիներին շփվել էր նմանատիպ հիվանդների հետ, այլև բժշկական հետազոտությունների արդյունքից տեղյակ էր, որ կոմոդների հիսունչորս տոկոսը ռազմական գործողությունների ընթացքում ալկոհոլ են օգտագործել, իսկ նրանցից յուրաքանչյուր չորրորդը՝ թմրամյութ: Այդ փաստը մասնավորապես վերաբերում է քսաներորդ դարի պատերազմական այնպիսի գործողություններին, որոնք տարիներ շարունակ ծավալվեցին Աֆղանստանում, Վիետնամում, Չեչնիայում, Արցախում:

-Ինչպիսի՞ն էր թշնամու պատկերը: Ի՞նչ խոսքերով կնկարագրեիք նրան:

-Մեր թշնամիները հրեշավոր գազաններ են, Աբդուլ Չամիդի ոճրագործ հետնորդները:

-Մասնակցե՞լ ես հետախուզությանը: «Լեզու» բռնե՞լ ես:

-Իհարկե, մասնակցել եմ և թուրքերի եմ գերի վերցրել:

-Ինչպե՞ս ես վարվել առաջին գերու հետ:

Մուշեղը մի պահ լռեց: Նա դանդաղ ծխախոտի ծուխը ներս էր քաշում՝ երկընտրանքով նայելով հոգեբույժին:

-Դու ինձ չե՞ս ուզում ճշմարտությունը պատմել: Մի՛ թաքցրու ոչինչ, ես պետք է լավ հասկանամ քեզ:

-Առաջին անգամ նրա ականջները կտրեցի, իսկ հետո նման բան չեմ արել: Ես չէի կարող մոռանալ այն ամենը, ինչ նրանք էին անում հայերի հետ: Ծարավ էի վրիժառության:

-Ի՞նչ ես մտածում նրանց մասին, ովքեր գերեվարվել են թշնամու կողմից:

-Թուրքերը շատ հեռու են քաղաքակրթությունից: Մեր տղաներին այնպիսի խոշտանգումների են ենթարկել, որ այդ մասին չեմ կարող պատմել: Կարմիր խաչի օգնությամբ որոշներին բաց են թողել, բայց ի՞նչ է սպասվում մնացածներին, ոչ ոք չի կարող ասել: Գուցե նրանց մի մասն արդեն կենդանի չէ:

-Ի՞նչ նշաների էիք հավատում, երբ մտածում էիք, թե ինչով կավարտվի ձեզ սպասվող ճակատամարտը:

-Ինչ-որ երազի, նախազգացման, երբ ռազմամթերքների պակաս չէր լինում... Ո՞վ գիտե,- նախկին ազատամարտիկը դառը քննիչն էր:

-Իսկ խաչերի մասին ի՞նչ կասեք,- բարեհամբույր հարցրեց հոգեբույժը:

-Դա Շուշին գրավելուց առաջ էր: Արցախի հոգևոր թեմի առաջնորդ Պարզև սրբազանի խորհրդով յուրաքանչյուրս իր մեջքին խաչի նշան էր կրում այն հավատով, որ Աստված անպայման կլինի մեր կողքին ու մեզ կօգնի նվաճելու այնքան սպասված հաղթանակը:

-Ինչպե՞ս ես հիշում Շուշիի ազատագրման օրը: Ի՞նչ ես զգացել,- Լիլիթ Մամիկոնյանը նկատեց, որ հանկարծ ուրախությունից փայլատակեցին Մուշեղի աչքերը:

-Աննկարագրելի էր այն ցնծությունը, որ այնտեղ մենք զգացել ենք, որովհետև դա սովորական հաղթանակ չէր: Յոթանասուն տարի գերության մեջ գտնվող Շուշին ազատեցինք վիշապի ճանկերից, դրանով էլ վերականգնեցինք Արցախի շնչառությունը: Ողջ հայ ժողովրդի համար Շուշիի հաղթանակը յուրօրինակ խորհուրդ ունի:

-Կուզենայի՞ր նման կռվի նորից մասնակցել:

-Հաճույքով... Այդպիսի մեծ հաղթանակի համար պայքարելուց չէի հրաժարվի:

-Կարելի՞ է եզրակացնել, որ դու «ռազմական կարոտախտ»-ի զգացողություն ունես:

-Հավանաբար, ես ինձ ավելի լավ էի զգում խոնավ խրամատներում, քան այս համատարած մթության մեջ, ուր կյանքն ասես ընդմիշտ մեռած է: Այնտեղ գիտակցում էինք, թե ինչու՞ էինք կռվում, այստեղ չենք հասկանում, թե ո՞րն էր ձեռք բերած հաղթանակի իմաստը: Մեր մղած կռիվը ողջ հայության նորմալ ապրելակերպի համար էր...

-Ինչպիսի՞ն են հարաբերություններդ մարտական ընկերներիդ հետ:

-Նորմալ, ես միայն նրանց եմ վստահում, ովքեր մասնակցել են պատերազմին:

-Պետք է վստահես նաև ուրիշներին: Պատերազմն ավարտվել է, դու պետք է փոխվես:

-Ո՛չ, պատերազմը շարունակվում է իմ ուղեղում և հոգու մեջ:

Հոգեբույժի համար հասկանալի դարձավ, որ նա շատ էր օտարված իր շրջապատից: Պատճառը միայն պատերազմը չէր, այլ նրան շրջապատող մարդկանց, մտերիմների վերաբերմունքը: Այդ մարդիկ նրա ագրեսիվությունը դատապարտելուց առաջ պետք է մի պահ մտովի վերապրեն այն ողբերգությունը, որի միջով անցել էր Մուշեղը: Շրջապատի ջերմ ու վստահություն ներշնչող վերաբերմունքը նրան կսովորեցներ ներել ամենից առաջ ինքն իրեն:

-Փակի՛ր աչքերդ և աշխատիր հիշել քո երջանիկ ակնթարթներից յուրաքանչյուր մանրուք, որ զգացել ես ի սրտե: Փորձի՛ր այն վերապրել ամբողջ մարմնով ու հոգով:

Մուշեղը ենթարկվելով բժշկուհու խորհրդին՝ փակեց աչքերը: Նա մի քանի րոպե տևողությամբ աշխատեց հիշել իր կյանքի գեղեցիկ ակնթարթները, բայց ոչ մի թրթիռ կամ հարազատ դող չզգաց մաշկի վրա: Ասես ամեն ինչ վերապրում էր մոխիրների ետևից: Եվ նա այս անգամ կարծես փոքր-ինչ շնչասպառ դիմեց բժշկուհուն.

-Ինչպե՞ս բարձրացնեն իմ ինքնագնահատականը:

-Պետք է ինքդ քեզ սիրես այնպես, ինչպիսին կաս: Նախ՝ քո մեջ ինքնավստահություն կառաջանա: Ապա՝ քեզ շրջապատող մարդիկ էլ քեզ կսիրեն: Մտածի՛ր, թե ո՞վ է քեզ սիրում: Կարևոր չէ, թե քանիսն են: Եվ վերջապես սովորի՛ր չվախենալ քո հասցեին արված քննադատական խոսքերից: Միշտ հիշի՛ր, որ դու լավն ես:

Տիգրանուհին յոթերորդ երկնքում էր: Նման զգացողություն հնարավոր է, որ մարդն իր ողջ կյանքում երբիցե չունենա: Նա ասես երազի մեջ էր: Իսկ երբ մի քանի օրվա ընթացքում ձևակերպվեցին անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը, Տիգրանուհին հասկացավ, որ այն կարծես ի վերուստ պարզև էր իր համար՝ երկարատև տառապանքների դիմաց: Բնակարանը գտնվում էր Երևան քաղաքի Նորքի երկրորդ զանգվածում: Տանտերը ևս մի սեփական տուն ուներ Երեբունի թաղամասում: Ուստի, նա բնակարանը վաճառելով

անօթևան չի մնա, ինչպես դա պատահեց շատերի հետ: Պատահում էին դեպքեր, երբ մարդիկ միայն ինքնաթիռի տոմս ամռելու նպատակով վաճառում էին իրենց սեփականությունը՝ միայն թե հեռանային Հայաստանից: Ցավոք, բոլոր ժամանակներում արտագաղթը կապված է կյանքի ծանր պայմաններին չհաշտվելու հետ՝ սով, գործազրկություն, անհույս օրեր: Սիփանը Տիգրանուհուց կարօես թե ավելի շատ էր ուրախացել: Ահա ինչու նրա առաջարկով որոշեցին ընկերներով հավաքվել ու նշել սեփական տան բնակարանամուտը: Նկարչուհու բախտից մի նկար էր վաճառվել՝ երեք հարյուր դոլարով: Տիգրանուհին որոշեց դրանից հարյուրն իրեն պահել, մնացածը տալ Անայիսին՝ փոխանցելու մորաքրոջը: Հրավիրեցին Գասպարին, Անայիսին, Անուշին՝ իր ամուսնու հետ և օպերատոր Օնիկին, որը Սիփանի մտերիմ ընկերներից էր: Հենց նրա օգնությամբ էին տեղափոխել Տիգրանուհու տան իրերը: Տանտիրուհու տրամադրությունը բավականին բարձր էր: Նկարչուհին չէր ուզում մտածել, թե ինչ պիտի աներ Սիփանի մեկնելուց հետո: Ո՞վ գիտե: Սիփանը նաև ինքնակամ սեղանապետ դարձավ: Տիգրանուհին նկատեց, որ ինչ-որ տեղ արվեստագետն իրեն ավելի շատ տանտիրոջ իրավունքով էր պահում, քան ընկերոջ: Կանչված հյուրերը Տիգրանուհուն փոքրիկ նվերներ բերեցին: Սակայն Տիգրանուհին հուզվեց, երբ ներս մտավ նախկին հարևանուհին՝ Անուշը Թաթուլի հետ: Նրանք շքեղ ծաղկեփնջի հետ տանտիրուհուն մատուցեցին մի գեղեցիկ տուփ: Նրա մեջ նկարչուհու արծաթե այն ապարանջանն էր, որը վաճառել էր տան վարձը տալու համար: Այն նորից իրեն նվիրեցին, որ Տիգրանուհին կորստի մասին այլևս չմտածեր: Սկսված քեֆը թեժացավ, երբ հատկապես տղամարդիկ գինովացան: Սիփանը երգեց «Կիլիկիա»-ն: Բոլորը հիացան նրա փայլուն կատարմամբ: Պարզվեց, որ նա ժամանակին երգել է նույնիսկ երգչախմբերից մեկում: Նման հայրենասիրական երգ ունկնդրելուց հետո հրավիրվածները հոտնկայա հիշեցին նրանց, ովքեր իրենց կյանքը նվիրաբերեցին հայրենիքին՝ արցախյան գոյամարտի տարիներին: Ներկաներից այդ պատերազմի մասին ավելի շատ տեղեկություններ ուներ Սիփանի ընկերը՝ Օնիկը: Նա որպես օպերատոր եղել էր պատերազմի թեժ կետերում: Ոչ միայն նկարա-

հանել է հայ զինվորների սխրագործությունները, այլև զենքը ձեռքին կռվել է նրանց շարքերում: Նա վիրավոր էր մի ոտքից և պրոտեզ էր կրում:

-Պատրաստվում եմ մի հոյակապ ֆիլմ նկարել հերոս տղաների մասին: Շատ նյութեր ունենմ հավաքած, թեկուզ ժապավենների մի մասն էլ, ցավոք, այրվել են, ոչնչացվել: Դա պատահեց, երբ մի անգամ ուղղաթիռի վրա թուրքերը կրակեցին: Ստիպված էինք օդապարիկներով մեզ դուրս գցել: Այդ ժամանակ էլ անհաջող թռիչքի հետևանքով ոտքս ջարդվեց: Իսկ երբ եկան մեզ օգնության, հնարավոր չեղավ ոտքս փրկել: Ստիպված անդամահատեցին,- ժպտաց Օնիկը:- Բայց դուք մի՛ մտածեք, ես պատրաստ եմ և՛ երգել և՛ պարել, եթե երաժշտություն միացնեք:

-Իսկ զուցե սկզբում երգե՞ս ռազմաճակատում տարածված ձեր սիրած երգերից մեկը,- ոգևորվեց Տիգրանուհին:

-Հաճույքով, եթե դու կիթառ կամ ակարդեոն տաս ինձ նվագելու համար:

-Ես չունեմ, բայց կարծում եմ հարևանուհիս չի մերժի, եթե նրան մի փոքր նեղություն տամ,- ժպտաց տանտիրուհին՝ վազելով դեպի դուռը: Մի քանի վայրկյան անց նա վերադարձավ կիթառը ձեռքին ու Օնիկը սկսեց երգել ռազմի երգերից:

Երբ նա ավարտեց երգելը, Սիփանը վերցնելով բաժակը՝ կենաց առաջարկեց՝ հագեցած հումորով ու կենսախնդությամբ.

-Բրավո՛, ընկերս... Ուրախ եմ, որ մեր այս ընկերական նեղ միջավայրում կան ազատամարտիկներ ի դեմս Օնիկի և Թաթուլի: Դուք սիրված եք բոլորի, մանավանդ կանանց կողմից: Հիշենք, թե ինչպես էր Վեներան Օլիպիոսում իր համակիրների մեջ ընտրել Մարսին՝ պատերազմի Աստծուն: Կին աստվածուհիները սիրում էին զինվորականներին: Եկեք հաճույքով հետևենք նրանց օրինակին և խմենք մեր զինվորականների խիզախության ու հերոսական ոգու համար: Մենք այսօր ամենուրեք հպարտանում ենք ձեզանով:

Սեղանի շուրջը նստածների դեմքերին արվեստագետի ջերմ խոսքերից անմիջապես հավլեց տխրությունը, ինչպես շաքարի կտորը տաք ջրի մեջ: Նրանք հոտնկայս խմեցին Օնիկի և Թաթուլի կենացը:

Բարեբախտաբար, լույս կար և Տիգրանուհին միացրեց ձայնագրիչը: Սիփանն Օնիկի հետ բարձրացան տեղից՝ պարելու: Գասպարը և Թաթուլը լուռ ծխում էին:

-Դուք էլ միացեք մեզ, Գասպա՛ր,- ասաց Սիփանը, որը ոգևորված պարում էր:

-Մենք ձեր բաժակները կլցնենք, մինչև դուք նորից կմիանաք մեզ,- արձագանքեց Սիփանի բարեկամը:

-Իսկ կանա՞յք,- այս անգամ Սիփանն իր սիրավառ հայացքը դարձրեց Տիգրանուհուն:

Նկարչուհին նրանց հետ միացավ՝ իր հետ տանելով ընկերուհուն՝ Անայիսին: Վերջինս, որ առաջին անգամն էր տեսնում Սիփանին, ընկերուհու ականջին շշնջաց. «Դու երջանիկ ես, որ այդպիսի ընկերուհունես»: Տիգրանուհին թերահավատորեն ժպտաց: Նա սրտի խորքում, չգիտես ինչու, զգում էր, որ Սիփանը երբեք իրենը չէր լինի:

Վերջապես երաժշտությունն ավարտվեց, և պարողները նորից տեղավորվեցին սեղանի շուրջը: Սակայն, երբ բաժակները բարձրացրեցին խմելու պարողների, հատկապես Օնիկի կենացը, լույսերը հանգան: Տիգրանուհին իսկույն ևեթ վառեց լամպը և տան եղած բոլոր մոմերը, որպեսզի հյուրերը չմեղվեն: Ասենք, ինչու պիտի մեղվեին, երբ Հայաստանոմ բնակվողների համար վաղուց սովորական էր դարձել խավարում ուրախանալը կամ էլ տխրության մասնակցելը: Խավարն ամենուրեք մոմերից ու լամպից տարածվող նավթի հոտն ուներ: Այդ պատճառով բոլոր մարդիկ մշտապես սրտխառնուք ունեին: Ահա ինչու դժվար էր հիվանդանոցներում բժիշկների համար ցանկացած հիվանդին ճիշտ ախտորոշում տալը: Բոլորի հիմնական ցավը թունելի հեռվից երևացող լույսի կարոտն էր...

Երկու օր անց խամաճիկների թատրոնում վերջապես տեղի ունեցավ այնքան սպասված պրեմիերան, որի նկարչական ձևավորումը Տիգրանուհին էր արել: Նա այնտեղ գնաց Սիփանի հետ: Փոքրիկ դահլիճը լեփ-լեցուն էր մարդկանցով: Իսկապես ներկայացումը հետաքրքիր էր ու յուրօրինակ իր մատուցման ձևով: Այն ոչ միայն կյանքի, այլև սիրո անցողիկության մասին էր: Մարդու հոգին պարուրվում է անհասկանալի մի թախիծով, թե ինչու աշխարհում ոչինչ հավեր-

ժական չէ: Իրականում ինչքան կարճ է մարդկային կյանքը, բյուրավոր անգամ պակաս են նրա թե՛ երջանկության, թե՛ նվիրվածության ակնթարթները: Եվ մարդ արարածը ստիպված է լինում հաճախ սնվել իրեն բաժին հասած խաբկանքով ու ցնորքներով: Այս հարցում ճակատագիրը ոչ մեկին օգնել չի կարող, քանի որ մարդն ինքն անկարող է վերծանել իր ցանկությունները:

Երբ ներկայացումն ավարտվեց, դահլիճում բոլորը ոտքի կանգնեցին՝ ի նշան զոհունակության: Օլեգը մի անգամ ևս դուրս գալով բեմ՝ որպես ռեժիսոր իր շնորհակալությունը հայտնեց ներկաներին, սակայն Տիգրանուհին սպասում էր, որ բեմ կիրավիրի նաև երգահանին, սցենարիստին ու նկարիչին: Բայց ոչ, Օլեգն ուզում էր մարդկանց ցույց տալ, որ այդ ամենի հաջողությունը բացարձակապես իր շնորհքի արդյունքն էր: Թեև իրականում ռեժիսորն օդի մեջ չէր կարող ներկայացում պատրաստել առանց սցենարիստի, երգահանի, նկարչի յուրօրինակ ձևավորման: Տիգրանուհին խորապես հիասթափվեց: Այժմ նա հասկացավ, որ Օլեգը դժվար թե իրեն վարձատրեր: Նա նկատել էր նաև, որ անգամ ներկայացման ազդագրի մեջ իրենց անունները չկային: Թատրոնից դուրս գալուց հետո նա իր դժգոհությունն արտահայտեց Սիփանին: Արվեստագետը չնայած համամիտ էր նկարչուհու հետ, այնուամենայնիվ, փորձեց նրան իզուր հույս ներշնչել: Տիգրանուհին տուն գնալ չէր ուզում, քանի որ ներքուստ զայրացած էր: Նա առաջարկեց Սիփանին որևէ բար մտնել՝ սուրճ, գուցե թե մի բաժակ վիսկի ըմպելու:

-Բայց ինձ մոտ այդքան զումար չկա,- կարկամեց Սիփանը:

-Ո՛չ, այսօր և հիմա: Ես փող ունեմ:

Տիգրանուհին սիրալիր ժպտաց: Նա համոզված էր, որ Սիփանն իր ցանկությունը կկատարեր: Երկուսով մտան հարմար մի տեղ, ուր շատ մարդ չկար: Մատուցողը մոտեցավ նրանց:

-Բերեք երկու տեսակի պիցցա և թարմ որևէ սալաթ,- ասաց Տիգրանուհին:

-Մենք պետք է ճաշե՞նք,- Սիփանը հարցական հայացքն հառեց ընկերուհուն:

-Կարծեմ, դու էլ երեկոյան ոչինչ չես կերել:

Տիգրանուհին նաև հանքային ջուր և վիսկի պատվիրեց: Նա մի քիչ վիսկի ըմպեց լիմոնով՝ ուշադիր նայելով Սիփանին: Ջգաց, որ նրա ներկայությամբ օդը դառնում էր ավելի ջերմ, միանգամից փոխվում են կյանքի բոլոր գույները: Սակայն Տիգրանուհին չէր կարող չմտածել Սիփանի քաղաքից բացակայելու մասին: Ախր նրանից հարազատ ինքը ոչ մեկը չուներ: Սիփանն ուշի-ուշով հետևելով նրա խառնիխուռը հայացքին, զգաց, որ ինչ-որ մտքեր պղտորում էին նկարչուհուն:

-Մի՛ ընկճվիր, ամեն բան լավ կլինի:

-Երնե՛կ քո լավատեսությունն ունենայի:

-Դու կամքի ուժ ունես, ի վիճակի ես հաղթահարել ամեն մի խոչընդոտ: Թե՞ սխալվում եմ...

-Որոշել ես ինձ գոտեպնդելու նպատակով աշխատա՞նք տանել: Ես չեմ ուզում, որ դու մեկնես,- Տիգրանուհին ընդհատելով նրան՝ կտրուկ տոնով ասաց այն, ինչի մասին ամեն վայրկյան մտածում էր:

-Բայց ես անպայման կվերադառնամ քեզ մոտ,- Սիփանը զգում էր, թե նա ինչու՞ էր այդպես բացահայտ արտահայտում իր վախը:

-Ես տագնապում եմ քեզ կորցնելու մտքից,- Տիգրանուհու ձայնը նկատելիորեն դողաց:

Սիփանը բռնեց նրա ձեռքից՝ տաք շուրթերը մոտեցնելով:

Մատուցողը բերեց պատվերը ու հեռացավ: Նրանք լուռ ճաշեցին: Սակայն հետո Տիգրանուհին չփոխեց զրույցի թեման:

-Դու նրանց առաջվա պես շա՞տ ես կարոտում,- հարցրեց Տիգրանուհին՝ ազնիվ պատասխան լսելու ակնկալիքով:

- Կո՞նք ու տղայի՞ս:

Տիգրանուհու մարմնով սարսափելի դող անցավ: Սիփանը «կին» բառն արտասանելուց «նախկին» բառը չչեչտեց: Այդ դեպքում ինքն ի՞նչ գործ ուներ այդ ամուսնացած տղամարդու հետ, որի կողքին ստիպված պիտի լիներ տառապել:

-Այո՛,- հազիվ արձագանքեց Սիփանը:- Կարոտում եմ:

-Իսկ ի՞նձ: Ես ի՞նչ կապ ունեմ քեզ հետ:

-Քեզ նույնպես կարոտում եմ:

-Երևի այն ժամանակ, երբ ինձնից հեռանում ես:

-Ի՞նչ իմացար: Իրականում չես սխալվում:

-Ինձնից բաժանվիր և տեղափոխվիր նրանց մոտ: Այդպես ավելի ճիշտ կլինի,- ցավով առաջարկեց Տիգրանուհին:

-Իսկ ծնողներս: Նրանց մեծակ թողնել չեմ կարող,- անկեղծացավ Սիփանը:

Տիգրանուհու համար ամեն ինչ պարզ էր: Նա ի սրտե կցանկանար միանալ նրանց: Սիփանը սիրում էր նախկին կնոջը: Նրա հետ ինքն ապագա չուներ: Սիլևույն է, վաղ թե ուշ կհեռանա իրենից: Ինքն այլևս հարցեր չուներ: Տիգրանուհին մտածեց, թե ինչու էր նրան այդպես խենթի պես սիրում: Իսկույն և եթ գտավ պատասխանը: Սերը յուրաքանչյուր մարդու կյանքում ինչպես անսպասելիորեն հայտնվում է, նույն ձևով էլ անհետանում է, եթե չես ուզում նրան փայփայել: Ցավոք, միակողմանի զգացմունքի դեպքում այդ մասին երազելը նույնքան անխոհեմ է, որքան ավագի վրա սիրո մասին բառեր գրելը: Այդ պատճառով Տիգրանուհին գերադասեց լռություն պահպանել: Սիփանը նկատելով, որ իր անկեղծությանը միայն ցավ պատճառեց Տիգրանուհուն, ափսոսաց քիչ առաջ ասված խոսքերի համար:

-Դու ինձ այլևս ոչինչ հարցնել չե՞ս ուզում:

-Ե՞րբ ես մեկնելու,- հանգիստ տոնով հարցրեց Տիգրանուհին:

-Մեկ շաբաթից հետո: Տոմսն արդեն գնել եմ:

-Դե ինչ, քեզ նախապես բարի ճանապարհ եմ մաղթում: Ապրիր այնպես, ինչպես ուզում ես,- Տիգրանուհին հաճույքով ըմպեց դառը վիսկին, որը չպակասեցրեց իր ուղեղում թանձրացած ծանր մառախուղը:

-Ուզում ես ասել, որ քեզ հնարավոր չի՞ լինի այլևս տեսնել:

-Երևի այլևս չհանդիպենք,- ավելացրեց Տիգրանուհին:

-Մենք անպայման կհանդիպենք:

Տիգրանուհու համար ոչինչ անսպասելի չէր: Միայն նա շատ էր ուզում, որ հրաշք կատարվեր: Սակայն հրաշքները մարդու կյանքում անգամ հաճելի ակնթարթներից հազվադեպ են լինում: Ու եթե նրան ճակատագիրը մի հրաշք՝ չորս պատ ունենալն արդեն մատուցել էր, սիրո հրաշքից ինքնըստինքյան պիտի հրաժարվեր: Չէ՞ որ հրաշքը մարդու գիտակցության մեջ երեք անգամ գտվում է՝ իր տեսքն

ընդունելու համար: Այդ մասին Տիգրանուհին հնարավոր է երազեր իր կտավներում շունչ ստացած հեքիաթներում: Վրձնի մի հարվածով կպատկերի սիրո հրաշագործությունը, երբեմն էլ էքստազի մեջ կպատկերացնի, որ այն իրենն է ընդմիշտ: Ինչ խոսք, արվեստագետի համար ավելի հեշտ է ապրել իր ստեղծած երևակայական աշխարհում, քան սովորական մարդուն՝ իրական աշխարհում:

Ինչքան էլ բնությունն է կառավարում ֆիզիկական օրենքները, այնուհանդերձ, նա դրանց է ենթարկվում ամենուր: Միայն մարդն է, որ տիրապետում է բանականությանը և կամքի ազատությանը: Նա ընդունակ է ընտրություն կատարելու, թեև կյանքում շատ բան տեղի է ունենում առանց մարդու ակտիվ մասնակցության: Մարդը չի ընտրում այն ընտանիքը, որտեղ ծնվում, ապրում և մեծանում է: Նա է ընդունում որոշումներ, բայց գլխավոր հարցերի լուծումը կարծես կապված է լինում անկանխատեսելի դեպքերից ու հանգամանքներից, որոնց վրա ինքը չի կարող ազդել: Այդ պատճառով մարդը ստիպված է հարմարվել ի վերուստ տրված այն ամենին, ինչը մենք անվանում ենք ճակատագիր: Իհարկե, մեր ժամանակներում այնպես չենք հավատում ճակատագրին, ինչպես հին հույները: Էդիպ արքայի ճակատագիրը դրա վառ վկայությունն է: Ակնհայտ է մի բան, որ Աստված պատահականություններ չի սիրում, իսկ ճակատագիրը կյանքի ընթացքն է, որը փոխում է մարդու վիճակը: Բնականաբար, ճակատագիրը կապ ունի Աստծո հետ:

Տիգրանուհին հավատում էր ճակատագրին, նաև զգում էր, որ քաղաքակիրթ ձևով պիտի բաժանվեր սիրած տղամարդուց: Այսինքն՝ ինքը ընտրություն չուներ կատարելու: Ավելի ճիշտ, նրա կողքին անորոշության մեջ պիտի շարունակեր տառապելով ապրել, ինչին կտրականապես դեմ էր: Տիգրանուհին կանխագուցում էր միաժամանակ, որ նրանից բաժանվելն իր համար ամենամեծ ողբերգությունը կլինի, բայց ինքը պատրաստ էր իր մեջ կամքի ուժ դրսևորել հաղթահարելու վերահաս ցավը: Նա այժմ տարված էր իր նկարներով:

Ձօր ու գիշեր պարտավոր էր աշխատել, որպեսզի ինչքան հնարավոր էր, շուտ ազատվեր պարտքերից: Ստորումների մեջ նա յուղաներկով գործ էր անում, երբ զանգեց Անայիսը: Նրա ծայրը փոխված էր, գրեթե անճանաչելի: Մի պահ նկարչուհին վախեցավ՝ մտածելով, որ չի-նի թե նորից բռնության էր ենթարկվել: Խոսակցությունից պարզվեց, որ նա հոգեկան տվայտանքների մեջ էր: Անշուշտ, պատճառը Մուշեղն էր: Տիգրանուհին նրան իր մոտ հրավիրեց, և մեկ ժամ անց ընկերուհին շփոթահար իր տանը հայտնվեց: Գունատ ու հոգնած տեսք ուներ: Եվ քանի որ էլեկտրական լույս չկար, ընկերուհիները ստիպված էին կուչ գալ նավթավառի մոտ:

-Միասին մի բան ուտե՞մք, մինչև լույսը կմիացնեն, թե՞ սկզբում կպատմես քեզ հետ կատարվածի մասին,- հարցրեց Տիգրանուհին:

-Ո՛չ, ես քաղցած չեմ: Ավելի լավ կլինի զրուցեմ, գուցե այդպիսով հոգեպես մի քիչ կթեթևանա՞մ:

-Հասկանալի է, որ դարձյալ վիճել ես ընկերոջդ հետ: Բաժանվիր նրանից վերջնականապես, որ այդքան ցավ չզգաս,- գրեթե առանց մտածելու պատասխանեց նկարչուհին պատերազմի դաշտում ուտքից վիրավորված այն զինվորի պես, որը չի պատկերացնում, որ բժիշկները շուտով ստիպված պիտի լինեն անդամահատել իրեն:

-Նա՛ է ինձնից բաժանվել:

-Բայց չե՞ որ դու ինքդ էիր երազում նրան թողնել, թե՞ սխալվում եմ:

- Աննորմալը ես եմ: Երբ կողքիս էր, մտածում էի հեռանալու մասին, իսկ երբ կամովին հեռացավ՝ առանց որևէ բացատրության, ես սկսեցի տառապել...

Տիգրանուհին ապշահար եղավ նրա տրամաբանությունից: Ասեմք, ոչ մի մարդու սիրտ առհասարակ բանականությանը չի ենթարկվում: Սակայն այս պարագայում զարմանալին այն էր, որ Մուշեղը հաճախ բռնության էր դիմում, ճնշում էր նրան՝ վախեցնելով իր ռազմատենչ վարքագծով:

-Դու կարծում եմ, պիտի աղոթես նրանից ի վերջո ազատվելու համար:

-Թվում էր, թե իրականում այդպես պիտի անեի, իրականում տառապում եմ:

-Ուրեմն՝ սիրում ես նրան, այնինչ ասում էիր, որ...

-Չեմ սիրում, ուղղակի կարոտում եմ,- ընդհատեց ընկերուհուն Անայիսը:- Ես կարոտում եմ նրա ծայնին: Քանի անգամ եմ զանգել նրան ու լռել հեռախոսափողի մեջ,- նրա ծայնը հուզմունքից դողաց:

Տիգրանուհին նրան այդ աստիճան հուսահատ չէր տեսել:

-Իսկ ի՞նչ է կատարվել, որ Մուշեղը միանգամից որոշեց հեռանալ քեզնից:

-Նա սիրային կապ է հասատել հիվանդանոցի բուժքույրերից մեկի հետ:

-Ինչպե՞ս... Այդ կնշանակի, որ նա քեզ չէ՞ր սիրում:

-Վերջին շրջանում ես նրան անվերջ կոպտում էի, նույնիսկ ֆիզիկական շփումից էի խուսափում: Քիթս ջարդելուց հետո համարյա մեկ ամիս չտեսա նրան: Իսկ երբ հիվանդանոցում էր, ընդամենը մեկ անգամ նրան այցելեցի: Այդ օրը նրա նախկին կինը միջանցքում ինձ վրա հարձակվեց: Այդ տիպի դեպքից հետո ես ցանկություն չունեի այնտեղ հայտնվելու: Հենց այդ ընթացքում Մուշեղը կապ հաստատեց ինչ-որ բուժքրոջ հետ:

-Հավանաբար, նա արդեն հիասթափվել էր քեզնից: Տղամարդկանց դուր են գալիս այն կանայք, որոնք չափազանց հանդուրժող են, սիրալիր, ավելորդ խնդիրներ չեն ստեղծում, մանավանդ նրա մնանները,- եզրակացության հանգեց Տիգրանուհին:

-Շատ կուզենայի տեսնել այդ կնոջ դեմքը: Արդյ՞՞ոք նա ինձնից լավն է:

-Ասենք, թե լավն է, հետո՞... Մի՞թե մոռացել ես, թե ինչպես ես տանջվել նրա կողքին: Անընդհատ վախի մեջ էիր: Կասկածում եմ, թե նա մեկ անգամ բուժում ստանալուց հետո կարգին կկազդուրվի:

- Չեմ էլ ուզում նրա հետ հանդիպել: Միայն թե չզիտեմ, ինչպես մոռանամ ամեն ինչ:

-Այդ նպատակով մի մտարի վրա դիր նրա բնավորության բացասական գծերը, մյուս մտարին պատկերացրու դրականը: Քեզ համար պարզ կդառնա, թե ում համար ես ուզում արցունք թափել:

-Մուշեղի մեջ անչափ չարություն կա: Ես էլ եմ մտածում, որ նա երբեք չի փոխվի:

-Կանայք գուցե ավելի ներողամիտ են, քան տղամարդիկ: Եվ հետո հոգեպես մենք ավելի ենք կապվում, քան նրանք,- Տիգրանուհին հիշելով Սիփանին՝ նույնպես տխրեց:- Դիշիր, մենք պետք է մեր մեջ ուժ գտնենք նաև մոռանալ նրանց, ում սիրում ենք:

Անայիսը զարմացավ, որ ընկերուհին խոսում էր «մենք»-ի անունից:

-Դու նույնպե՞ս բաժանվել ես Սիփանից:

-Ո՛չ, նա այժմ քաղաքում չէ: Սակայն վերադառնալուց հետո հագիվ թե մենք իրար հետ հանդիպենք: Չեմ հանդուրժի, որ ինձ անվերջ դավաճանեն:

-Երևի առհասարակ ոչ մի տղամարդ հավատարիմ լինել չի կարող, թե՞ սխալվում եմ,- Անայիսը հարցական նայեց Տիգրանուհուն:

-Նրանց հետ դժվար է, առանց նրանց առավել ևս... Ի՞նչ է սպասվում ինձ, ինքս էլ չգիտեմ: Ավելի լավ է պատմես, թե ինչ վիճակում է գիրքը: Քեզ հաջողվու՞մ է տեղեկություններ հավաքել զոհված ազատամարտիկների մասին:

-Գործս դեռ կիսատ է մնացել: Անկեղծ ասած, ահագին նյութեր հավաքել եմ, բայց այժմ Մուշեղի մասին մտածելով, ուշադրությունս չեմ կարողանում կենտրոնացնել: Ոչ մի տեղ հանգիստ չեմ գտնում, ո՛չ աշխատանքի վայրում, ո՛չ տանը, ո՛չ բարեկամների մոտ:

-Ինձ սովորաբար ծանր մտքերից փրկում է նկարչությունը: Իմ հույզերը գույների միջոցով արտահայտելով՝ ստեղծած բնապատկերների շնորհիվ հոգեպես խաղաղություն եմ գտնում:

-Երանի՜ քեզ, որ նկարելու ձիրք ունես, այնինչ ես ընդամենը լրագրող եմ:

-Բայց քեզ էլ խորթ չէ երևակայությունը, այնպես որ իզուր մի՛ բողոքի,- ու քանի որ էլեկտրական լույսը միացրին, Տիգրանուհին վերկացավ տեղից ճաշը տաքացնելու:

Հնչեց հեռախոսի զանգը: Թատրոնից Օլեգն էր: Հարցնում էր Սիփանից: Տիգրանուհին նույնպես նրանից տեղեկություն չուներ: Նկատել էր, որ նա քաղաքից բացակայելիս ընդհանրապես չէր զանգում:

-Վաղը կարո՞ղ ես հանդիպել ինձ,- հարցրեց Օլեգը:

-Այո՛, իսկ լավ նորություն չունե՞ս ինձ համար,- Տիգրանուհին ակնարկում էր գունարի մասին, որը ռեժիսորը, չգիտես ինչու, ձգձգում էր տալ:

-Սպասողական վիճակի մեջ եմ, մի՛ անհանգստացիր, փողդ անպայման կստանաս:

-Օլեգ, դու միշտ նույն պատասխանն ես տալիս: Ես անգամ կասկածում եմ, որ այդ փողը կստանամ: Բայց չէ՞ որ ես պարտքեր ունեմ:

-Մի՛ հուսահատվիր: Պարտքերդ էլ կմարես: Քեզ վաղը կսպասեմ ինձ մոտ: Ցտեսություն:

Տիգրանուհին շվարած հեռախոսափողը դրեց իր տեղը: Նա մտածեց այն մասին, թե ինչու էր Օլեգն ուզում տեսնել իրեն, եթե իսկապես նորություն չուներ իր համար: Թե՞ պատճառը միայն Սիփանն էր: Այդ դեպքում ավելի ճիշտ չէր լինի ասելիքը հեռախոսով հայտներ: Տիգրանուհին զայրույթով նկատեց, որ հավանաբար արվեստի աշխարհում հեշտ չէր հանդիպել նորմալ մարդկանց: Բոլորն էլ միանշանակ տարօրինակ են ու անհասկանալի:

Առավոտյան Տիգրանուհին արթնանալով քնից՝ անհասկանալի բթություն զգաց մարմնի մեջ: Թվաց, թե ինքն իրենից օտարանում է, հեռանում ու իր կյանքին հաշված օրեր էին մնացել: Բոլորովին ցանկություն չուներ հանդիպել Օլեգի հետ: Այնպես կուզենար զանգել նրան ու մի պատճառ հորիներ, միայն թե չտեսներ այն ռեժիսորին, որն իրեն ոչ միայն այդպես էլ չվարձատրեց, այլև իրենից հեռացրեց Սիփանին: Բայց նա դեռ երեկ երեկոյան խոստացել էր հանդիպել այրի կնոջը՝ տիկին Ռոզային, նրան փոխանցելու որդու դիմանկարը: Տիգրանուհին իր մեջ ուժ հավաքեց միանգամից՝ մի ուստյունով ցատկելու անկողնուց: Սենյակում ցուրտ էր: Նա վառեց նավթավառը ու մի բաժակ սուրճ պատրաստեց: Թեկուզ արդեն մայիս ամիսն էր, սակայն օրերը կարգին չէին տաքացել: Պատճառն ամեն օր տեղացող անձրևներն էին, որոնք սառը շունչ էին հաղորդում իրերին, սառը պատյանի մեջ առնում մարդու ցանկությունները: Սակայն նկարչուհու համար այդ խոնավ եղանակներին էլ դրսում ավելի տաք էր, քան

իր բնակարանում, ուր պակասում էր սիրած տղամարդու կենդանի ծայնն ու ջերմ շունջը: Հանկարծ մեղադրեց ինքն իրեն նրանում, որ ժամանակից շուտ է առաջ անցնում: Սիփանը դեռ չէր վերադարձել, այնինչ նրա վրա արդեն խաչ է դրել: Ստքերով տարված՝ նա վերցրեց ձեռքի պայուսակն ու նկարը խնամքով փաթաթելով ամուր կտորով, որ չթրջվի, դուրս եկավ տնից: Հայտնվելով փողոցում՝ Տիգրանուհին ուզեց պայուսակից հանել անձրևանոցը: Սակայն պարզվեց, որ թողել էր տանը: Այդ հորդառատ անձրևին նա առանց անձրևանոցի ոչ մի տեղ չարժվել էր կարող: Ստիպված էր կրկին ետ վերադառնալ, թեկուզ հասկանում էր, որ ճանապարհից ետ դառնալը լավ նախանշան չէր: Դարակից հանելով անձրևանոցը՝ նա մի ակնթարթ կանգնեց պատուհանի մոտ: Անձրևի կաթիլները աղերսալի լիզում էին իր լուսամուտները: Տիգրանուհին հայացքը հառեց զարմանալիս երկնքին, ուր աղիքի տեսքով մռայլ ամպերը օդակի մեջ էին առել արևաբույր լազուրը: Նա ցավով զգաց, որ իր հոգում էլ նույն խոնավ եղանակն էր, զարմանալիս նույն կայծակն ու որոտը: Տիգրանուհին սպասեց, մինչև անձրևը փոքր-ինչ դանդաղեց, հետո միայն դուրս եկավ տնից: Երբ հասավ թատրոնի մոտ, այլևս անձրև չկար, իսկ արդեն պարզկա երկնքում հրաշալի ծիածանը մեղմորեն ողջունում էր մարդկանց: Թատրոնին հարակից նրբանցքի մոտ, հանկարծ ասես գետնի տակից մի տարեց գնչուհի հայտնվեց՝ փակելով նրա ճամփան:

-Գեղեցկուհի, ուզում եմ բախտդ գուշակել: Միայն մի քիչ դրամ է պետք դնել ափիս մեջ: Մի՞թե քո ապագան քեզ չի հետաքրքրում:

-Ինչ լինում է, թող լինի, միևնույն է, մարդը չի կարող դեմ գնալ իր ճակատագրին,- պատասխանեց նկարչուհին ու հանգիստ շրջվեց, որպեսզի հեռանա, բայց չստացվեց:

-Սպասի՛ր,- այս անգամ գնչուհին քնքշորեն բռնեց նրա ձեռքից:- Ինձ ոչ մի գումար էլ պետք չէ, միայն ուզում եմ սրտանց քեզ մի քանի խոսք ասել:

Տիգրանուհին թեկուզ թերահավատությամբ նայեց նրան, սակայն քաղաքավարությամբ կանգ առավ, մտածելով, թե ինչու իրեն առանց փողի ծառայություն պիտի մատուցեր:

-Դու անսահման բարի անձնավորություն ես ու այդ պատճառով հաճախ զոհ ես գնում քեզ մտերիմ մարդկանց արարքների: Ցավոք, բարությունդ չի գնահատվում ոչ մի տեղ, ո՛չ քո ընտանիքում, ո՛չ էլ քո շրջապատում: Հիմա դու շատ հիասթափված ես կյանքից, քո սիրած տղամարդուց: Դու կորցրել ես քո առաջին սերը, բայց մի՛ վշտացիր, աստված քեզ սիրում է և պաշտպանում ամեն տեսակի փորձանքից:

-Հերիք է: Այլևս ոչ մի խոսք: Սովորաբար որպես կանոն շատերն են կորցնում իրենց առաջին սերը: Այնպես որ, ես բացառություն չեմ,- Տիգրանուհու սիրտն այնպես միանգամից ճնլվեց, որ քիչ մնաց շնչառությունը հատվեր:

Նա պայուսակից համեց դրամապանակը և մեկ հազարանոց մեկնեց գնչուհուն: Դա էլ բավական էր, որ վերջինս չհեռանար: Ու՞մ չէ հայտնի, որ գնչուհիները կարողանում են այնպես կախարդել, որ մարդն ինքնակամ փող է տալիս: Եվ որքան էլ ուժեղ լինի դիմացինը, միևնույն է, համարյա միշտ հայտնվում է նրանց ազդեցության, հիպնոսային հայացքի ներքո: Մանավանդ երբ առաջին շփումը ստացվում է, նրանք իսկույն ևեթ շարունակում են տարիներով մշակված սցենարը ներկայացնել:

-Ինձ քո փողը պետք չէ: Տո՛ւր աջ ձեռքդ: Աղոթքս քեզ համար նվեր կլինի,- և առանց դրական արձագանքի սպասելու՝ նա դարձյալ բռնեց Տիգրանուհու ձեռքից: Տեսնելով, որ նա չի դիմադրում, մի կարմիր թել վերցրեց ու սկսեց իրար ետևից հանգույց անել ու աղոթել: Նկարչուհին լուռ հետևում էր: Նա հանկարծակիի եկավ, երբ այս անգամ գնչուհին նրանից փող խնդրեց:

- Ես ինչպե՞ս իմ վերջին փողը քեզ տամ: Չէ՞ որ դու ցանկություն էիր հայտնել անվճար աղոթել: Քեզ ոչինչ չէի խնդրել:

-Բայց քո գումարը ընդամենը սիմվոլիկ նշանակություն ունի: Իմ աղոթքը թանկ արժե: Եվ որպեսզի ամեն ինչ բարեհաջող ավարտվի և բոլոր հանգույցներն էլ բացվեն, դու պետք է ժլատություն չանես, քո հաջողության համար եմ աղոթում:

Տիգրանուհին ստիպված էր վերջին հազարանոցը տալ նրան: Գնչուհին խլեց նրանից այդ դրամը, իսկ երբ բացեց փաթիլ, զարմանալիորեն կարմիր թելը առանց հանգույցների էր: Ասես հրաշք էր տեղի

ունեցել իր աչքի առաջ: Գնչուհին թողնելով նրան ձեռնունայն, հեռացավ: Տիգրանուհին արագ քայլերով մտավ թատրոնի շենքը: Օլեգն իր աշխատասենյակում էր: Տեսնելով նկարչուհուն՝ բարձրացավ տեղից և ջերմորեն սեղմեց նրա ձեռքը: Հետո իր մոտ կանչեց քարտուղարուհուն:

-Երկու բաժակ սուրճ և բնական հյութ բեր մեզ համար,- ասաց նա՝ նայելով Տիգրանուհուն:- Կարծում եմ, չես հրաժարվի:

-Ո՛չ, հաճույքով կըմպեմ,- մինչև վերջին տուն թալանվածի տրամադրությամբ պատասխանեց նա:

-Երևի ամբողջ ճանապարհին մտածում էիր, թե ինչու համար եմ ցանկացել տեսնել քեզ,- երկիմաստ ժպտաց ռեժիսորը:- Սիփանից որևէ տեղեկություն չունե՞ս:

-Ես հեռախոսով արդեն ասացի, որ նա ինձ չի զանգել: Եթե մի բան գիտես, իսկույն ասա,- նկատելիորեն սրտնեղեց Տիգրանուհին:

-Եթե իմանաս, ավելի շատ կգայրանաս:

Նկարչուհին այս անգամ վրդովված տեսք ընդունեց:

-Ուրեմն՝ պատմիր, թե իրականում ի՞նչ է քեզ հայտնի Սիփանի մասին:

-Նա իր կնոջ հետ հանգստանում է նրա ամառանոցում:

-Ո՞վ է քեզ հայտնել այդ տեղեկությունը: Դու համոզվա՞ծ ես, որ սուտ չես ասում,- Տիգրանուհու մարմնով այնպիսի սարսուռ անցավ, ասես ձմեռվա սառնամանիքին ամբողջովին մերկ նրան կանգնեցրել էին ցեմենտե պատի մոտ՝ զնդակահարելու:

-Նրա զոքանչն է հայտնել: Իսկ ես գործուղման էի ուղարկել, վստահելով, որ պիտանի կարող է լինել:

-Իզուր եզրակացություններ մի՛ արա: Հավանաբար, Սիփանը քո պայմանագրերի մասին հոգացել է, հետո է զնացել հանգստանալու,- մինչև հոգու խորքը վիրավորված նկարչուհին, չգիտես ինչու, փորձում էր պաշտպանել մի տղամարդու, որը դավաճանում էր իրեն:

-Երանի՛ ես էլ քեզ պես մտածեի: Դու պաշտպանում ես մի մարդու, որը հավատարիմ չէ քեզ,- առանց խայթի ասաց Օլեգը:

-Նախ՝ այդ մարդը քո ընկերն է, և հետո՝ ես այլևս տղամարդու հավատարմությանը չեմ հավատում:

Քարտուղարուհին ներս մտավ՝ բերելով սուրճն ու հյութը: Օլեգը սրճի բաժակը մեկնելով Տիգրանուհուն՝ մոտեցավ բարին:

-Ինձ կընկերակցե՞ս մի գավաթ կոնյակ ըմպելու,- առաջարկեց նա՝ միաժամանակ այնտեղից հանելով շիշը:- Եթե դու կյանքում ցանկանում ես ընտանիք կազմել, միանգամից ասեմ, որ սխալ ընտրություն ես կատարել,- Օլեգը լցնելով բաժակները՝ նստեց իր տեղը:

Տիգրանուհին սկսեց մտածել, որ գուցե Օլեգը զայրույթից հարմար պահ է ընտրել Սիփանի հետ նախկին հաշիվները մաքրելու: Օլեգը տեսնելով նրա հայացքի խորհրդավորությունը՝ ավելացրեց.

-Հավանաբար մտածում ես, որ նա իմ ընկերն է, և ես իրավունք չունեմ քեզ նման խորհուրդ տալու: Միանգամից ասեմ, որ դու լավ անձնավորություն ես ու սրտանց չէի ուզեմ քեզ խաբված տեսնել:

-Այդպես էլ չիմացար, թե նա ե՞րբ կվերադառնա:

-Ո՛չ... Դու Սիփանին սիրու՞մ ես:

-Այո՛... Դեռ չեմ որոշել, թե ինչ պիտի անեմ,- հուզվեց Տիգրանուհին:

-Եթե դու չես գնահատում քո ժամանակը, ապա կարող ես...

Տիգրանուհին այլևս չդիմացավ Օլեգի խրատները լսելուց ու ընդհատելով նրա խոսքը՝ հարցրեց.

-Ավելի ուրախ կգգայի ինձ, եթե իմանայի, թե դու ե՞րբ ես պատրաստվում ինձ վարձատրելու:

-Պիտի մի քիչ էլ համբերես: Եթե քեզ գումար է պետք, ես կարող եմ հինգ հազար դրամ տալ:

- Չէր խանգարի,- պատասխանեց Տիգրանուհին, չուզեմալով հայտնել, որ թալանվել է գնչուհու կողմից:

Օլեգը գրպանից հանեց դրամը՝ մեկնելով նկարչուհուն: Տիգրանուհին շուտափույթ հրաժեշտ տալով նրան՝ հիասթափված հեռացավ: Նա կատաղած էր ռեժիսորի դեմ: Ինչո՞վ էր նա տարբերվում թափառական գնչուհուց, որ մարդկանց խաբում էր փող վաստակելու համար: Եվ հետո ինչու՞ համար էր իրեն կանչել թատրոն, որ բողոքե՞ր Սիփանից: Չէ՞ որ դա կարելի էր անել նաև հեռախոսագրույցի ընթացքում: Հենց միմիայն այդ արարքի համար նա արհամարհանքի էր արժանի: Սպառազինված ժանր մտքերով՝ Տիգրանուհին անգամ

չզգաց, թե ինչպես հասավ տիկին Ռոզայի մոտ: Այրի կինը շատ ուրախացավ՝ նկարչուհուն իր տան շեմին տեսնելով:

-Կներեք ինձ, որ երկու ամիս անց միայն հասցրեցի գալ,- մեղավոր ժպիտը դեմքին ասաց Տիգրանուհին:

-Ոչինչ, կարևորն այն է, որ եկել ես ճիշտ ժամանակին,- տանտիրուհին սիրով ներս հրավիրեց նկարչուհուն:

Պարզվեց, որ նա մենակ չէր: Դուրեր ուներ Արցախից: Նրանք երկու կանայք էին, որոնք ևս անհայտ կորած ազատամարտիկների հարազատներ էին՝ համեստ հագուկապով, ժամանակից շուտ ճերմակած մազերով: Տիգրանուհին ողջունելով նրանց՝ տեղավորվեց բազկաթռռին՝ բացելով ձեռքի փաթեթը: Կտավից ներկաներին էր նայում տասնութամյա հպարտ հայացքով մի երիտասարդ, որի լուսավոր դեմքից հնարավոր է ենթադրել, որ նա ողջ է և անպայման տուն կվերադառնա: Դուրսնուրս տիկին Ռոզայի աչքերը լցվեցին արտասուքներով: Վերցնելով որդու դիմանկարը, նախ՝ շուրթերը կարոտով ձգեց կտավին, այնուհետև գրկելով Տիգրանուհուն՝ համբուրեց նրան:

-Դրաշալի աշխատանք ես կատարել, Տիգրանուհի: Նույնիսկ չգիտեմ, թե իմ երախտագիտությունն ինչպես հայտնեմ քեզ:

-Արդեն հայտնեցիք: Ձեր ուրախությունն ինձ համար շատ ավելին է նշանակում,- համեստությամբ պատասխանեց նկարչուհին:

-Մենք հետո կպայմանավորվենք, թե ինչքան պետք է վարձատրեմ ձեզ:

-Դուք ավելի լավ է, ասեք ինձ, թե ի՞նչ նորություններ կան անհայտ կորած տղաներից,- Տիգրանուհին փորձեց այրի կնոջ ուշադրությունը շեղել:

-Մի քանի օր առաջ եմ վերադարձել Թուրքիայից,- միանգամից մռայլվեց տիկին Ռոզան:

-Ի՞նչ գործ ունեիք այնտեղ: Չէ՞ որ արցախյան կռիվը Ադրբեջանի հետ էր, ոչ թե Թուրքիայի,- զարմացավ նկարչուհին՝ միաժամանակ շվարած նայելով անծանոթ կանանց կողմը:

-Դիմա ոչ մի բանի համար չպիտի զարմանանք: Մեր գերիների մի մասին մեր հակառակորդները վաճառել են, թեկուզ այդ մասին նրանք թաքցնում են:

-Իսկ ձեզ հաջողվե՞ց ինչ-որ բան պարզել: Լավ նորություն ունե՞ք,- անհանգիստ շարունակեց Տիգրանուհին:

-Դժբախտաբար, ո՛չ: Բայց այնտեղ մերոնցից մի քանի գերիներ կային, որոնք աշխատում են գործարաններից մեկում: Մենք նրանց տեսանք: Մեր տղաներից լուր չունեին:

-Մի՛ հուսահատվեք, մի օր էլ ձերոնց կհայտնաբերեք,- հուսադրեց նկարչուհին:

-Միայն թե ողջ մնացած լինեն: Ո՞վ գիտե... Մենք իրավունք չու-
նենք ապրել առանց հույս ու հավատի,- ասաց կանանցից մեկը:

-Ինձ չնռանաք, անպայման կկանչեք ու ձեզ հետ միասին կար-
գին քեֆ կանենք,- զվարթ տոնով արձագանքեց Տիգրանուհին, սրտի
խորքում զգալով, որ ինքն էլ հուսադրության կարիքն ունի այժմ, քան
երբևիցե:

Նկարչուհու խոսքերից տանտիրուհին կարծես զգաստացավ, հի-
շելով, որ իր հյուրին չի հասցրել հյուրասիրել:

-Դու հիմա մեզ հետ «ժենգյալով հաց» կուտես: Լսած կլինես, թե
ինչքան համով ուտելիք է: Այսօր առավոտյան են մեզ համար ուղար-
կել: Կհամտեսես դառը արցախյան գինով,- տիկին Ռոզան ժպտալով
դիմեց Տիգրանուհուն:

-Անկեղծ ասած, երբեք չեմ փորձել, բայց ձեզ հետ ամեն ինչ կարե-
լի է համտեսել:

Երբ տանտիրուհին գնաց դեպի խոհանոցի կողմը, Տիգրա-
նուհին ինքը մոտիկից զրույցի բռնվեց կանանց հետ: Նրանցից
երիտասարդը Ստեփանակերտի շրջանի գյուղերից մեկի դպրոցում
որպես ուսուցչուհի էր աշխատում, մյուսը գործակատար էր: Նկար-
չուհուն հետաքրքրեց աշակերտների հետ տարվող աշխատանքը
հայրենասիրական ոգով, այդ պատճառով հաճույքով հարցուփորձ
արեց ուսուցչուհուն՝ օրիորդ Մադլենային:

-Մեր դպրոցում գործում է արցախյան պատերազմում զոհված-
ների անկյուն: Յուրաքանչյուր դասարան վերցրել է զոհված որևէ
ազատամարտիկի «շեֆություն»-ը:

-Այսինքն՝ ի՞նչ կարող են անել աշակերտները նրանց հարազատ-
ներին,- հետաքրքրությամբ հարցրեց Տիգրանուհին:

-Դպրոցականները նշում են ազատամարտիկների ծննդյան օրերը, այցելում են նրանց ընտանիքներին, օգնում որոշակի հարցերում և պարբերաբար մաքրում շիրմաքարերը:

-Անկասկած, դուք կատարում եք ազգանվեր գործ, դաստիարակում եք հայրենապաշտ սերունդ, հայրենիքի հուսալի պաշտպաններ:

-Իրավացի եք, քանի որ առաջին դասարանցին ուրք դնելով դպրոց, անպայման մասնակցում է հայրենիքին անձնուրաց ծառայելու երդման արարողությանը՝ «Կյանքս հայրենիքիս, հոգիս՝ Աստծուն, պատիվն՝ ինձ» նշանաբանով:

Ներս մտավ տանտիրուհին և նրանց խոսակցությունն ընդհատվեց: Տիգրանուհին առաջին անգամ համտեսելով արցախյան «Ժենգյալով հացը»-ն ու դառը գինին՝ միանգամից անուշ թմբիրի մեջ ընկավ՝ ժամանակավորապես մոռանալով ներսում կուտակված վիրավորանքն ու ցավը:

Սի շաբաթ էր անցել, ինչ Մուշեղը դուրս էր գրվել հիվանդանոցից: Նա համեմատաբար իրեն լավ էր զգում, մանավանդ որ եղբայրը՝ Մամիկոնը, առաջվա պես օգնում էր առևտրական գործերի մեջ, ինքն էլ Անայիսից ձեռք քաշելով՝ իր համար նոր կին էր գտել: Այդ կնոջ անունն Աղավնի էր, թեկուզ դժվար թե որևէ մեկը նրա չաղ մարմինը տեսնելով քնքուշ էակի նմանեցներ: Նա ամուսնալուծված էր, ուներ երկու զավակ, որոնք հիմնականում հոր մոտ էին մնում: Իսկ թե ինչու էր բաժանվել և ինչ հարաբերությունների մեջ էր Աղավնին նրանց հետ, այդ ամենը Մուշեղին ամենից քիչ էր մտահոգում: Անայիսին նա չէր մոռացել, մանավանդ որ վերջինս գրեթե ամեն օր զանգում էր, բողոքելով, որ նրան հեշտությամբ է մոռացել: Ինքն էլ առաջարկել էր նորից սիրային կապերը վերահաստատել միայն մի պայմանով, որ իրեն կենթարկվի ու կանացի ավելորդ հիստերիկություն չի անի: Նա չէր համաձայնվել, սակայն շարունակ իրեն հետապնդում էր, հեռախոսով զանգում էր ու լռում: Մուշեղը նույնպես նրան կարոտում էր, բայց Աղավնուն թողնել չէր ցանկանում:

Հիվանդանոցից վերադառնալուց հետո իրենց այցով նրան ուրախացրին մարտական ընկերները: Նրան այցելեց նաև Միքայելը: Նրա թևի տակ մի շիշ օղի էր: Հարևանը նկատեց, որ Մուշեղը մեն-մենակ կիսով չափ դատարկել էր օղին, այնինչ սեղանին ոչ մի ուտելիք չկար: Մուշեղը վեր կացավ և պահարանից Միքայելի համար էլ մի բաժակ հանեց:

-Գուցե տանը թթված վարունգի կամ պանրի մի կտոր ճարվի,- ռազմի ընկերը հարցական հայացքն ուղղեց Մուշեղին:

-Իհարկե, խոհանոցում ինչ-որ բան դեռ մնացած կլինի:

Մի քանի րոպե անց նա սեղանին դրեց կտրտած երշիկ, պանիր, թթու վարունգ, թարմ պոմիդոր և հաց: Դիմացի պահարանից չմոռացավ հանել ավսեններն ու պատառաքաղները: Դատարկելով լցրած օղու բաժակները՝ Մուշեղը հարցրեց.

-Դու ևս թթված դեմք ունես: Որևէ բան է պատահել: Ինչո՞վ կարող եմ օգնել:

-Երեկ ռազմի ընկերս՝ Արտաշեսն է մահացել: Մահացել է իր ծծնդյան օրը:

-Հո՞ վթարի չի ենթարկվել:

-Ոչ մի վթար: Նա ցերեկով գնացել էր իր հողամասը, իսկ տանը կինը տոնական պատրաստություն էր տեսնում: Երբ ամուսինը ուշացավ, ինքը գնաց նրա ետևից: Արտաշեսը փռված էր գետնին: Մահացել էր սրտի կաթվածից:

Մուշեղը նորից լցրեց բաժակները:

-Խմենք նրա հոգու հանգստության համար: Մենք՝ ողջ մնացածներս նույնպես կենդանի դիակների ենք մնան:

Ներս մտավ Մուշեղի եղբայրը՝ Սամիկոնը: Նրա ձեռքին ապխտած հավ էր, երշիկ ու հաց: Տոպրակը մեկնելով եղբորն՝ ասաց.

-Նոր ես դուրս գրվել հիվանդանոցից, քիչ խմիր:

-Մոտեցիր մեզ և մի թաս օղի խմիր մեզ հետ:

-Ես մեքենայով եմ, չեմ կարող:

-Դա կապ չունի: Մեր մարտական ընկերներից մեկն է հանկարծակի մահացել: Նա վեց ամիս գերի էր մնացել թուրքերի մոտ: Այդ տառապանքները մոռանալ հնարավոր չէ: Դու չես պատկերացնում, թե

թուրքը ինչպես կարող է նվաստացնել հային: Լավ, էլ չեն ուզում շարունակել: Խնդրում են, վերցրու բաժակս ու դատարկիր:

Մամիկոնը նայելով եղբոր աղերսագին հայացքին, այնուամենայնիվ, մերժել չկարողացավ: Նա դատարկելով բաժակը՝ մի կտոր պանիր վերցրեց:

-Այդպես կարգին տղամարդու շնորհք ես ստանում: Այժմ ասա՛ ինձ, թե խանութում գործերն ինչպե՞ս են:

-Բավարար, թեկուզ շրջակա բնակիչների մի մասը մեր խանութից մթերքները պարտքով է վերցնում: Պարտքերի ցուցակում ընդգրկածների թիվն օրեցօր ավելանում է: Ի՞նչ արած, մարդիկ փող չունեն:

-Մի օր կվճարեն, հարկավոր է սպասել,- պատասխանեց Մուշեղը:

-Դե՛ լավ, ես գնացի: Խանութն անտեր չեն կարող թողնել:

-Մեքենադ թող բակում: Դու արդեն ավոտուտ ես օգտագործել:

-Կթողնեմ, միայն թե խմելուց դու բերանդ մի պատառ բան դիր,- ասաց Մամիկոնը և արագ քայլերով հեռացավ:

Եղբոր հեռանալուց հետո հեռախոսը զանգեց: Մուշեղը մոտեցավ հեռախոսին, սակայն ոչ ոք չէր խոսում: Նա փորձեց մի քանի վայրկյան էլ սպասել, բայց ապարդյուն:

-Եթե չես խոսելու, ինչու՞ ես զանգել,- գոռաց կիսով չափ հարբած տանտերը:

Հեռախոսը կախեցին: Նա այլայլված փռվեց իր աթոռին:

-Աննորմալներից պրծում չկա: Դե արի ու հանգիստ ապիր, բայց հո՞ մեր նյարդերը չորացած չեն,- զայրացած Մուշեղը շարունակեց օղի լցնել երկուսի համար:

Ցավոք, մերթընդմերթ հնչող լուռ հեռախոսազանգերը նրան հանում էին իր ասիերից: Վերջին անգամ նա թունդ հայիոյանքներ տվեց: Արդեն մութն ընկել էր: Միքայելը հրաժեշտ տվեց հարևանին ու հեռացավ: Աղավնին հայտնվել էր ու խոհանոցում ճաշ էր պատրաստում: Մուշեղը փռվեց բազմոցին՝ մի քիչ խաղաղվելու: Կես ժամ էր չէր անցել, երբ նորից հնչեց հեռախոսի զանգը: Այս անգամ Աղավնին վերցրեց հեռախոսափողը: Դարձյալ ոչ մի արձագանք:

-Ո՞վ էր,- համարյա մռնչաց Մուշեղը:

-Զգիտեմ, զանգում են ու չեն խոսում: Երևի ուզում են մեզ գժվացնել:

-Այդ դեպքում ավելի շուտ ես նրանց հախից կգամ,- Մուշեղը մի ուստյունով ցատկեց տեղից ու գնաց բաղնիք լվացվելու: Աղավնին հետևեց նրան:

- Մնա տանը ու սպասի՛ր ինձ: Ու՞ր է ավտոյի բանալին:

-Բայց դու...,- խեղճ կինը հազիվ իրեն զսպեց չասելու համար «հարբած ես» խոսքը: Եվ լավ էր չասաց, որովհետև Մուշեղն իր բռունցքը չէր խնայի:

Մամիկոնը բանալին դրել էր միջանցքի պահարանի դարակներից մեկում: Արագ վերցնելով այն, նաև վերևի դարակից ինչ-որ փաթեթ հանեց ու դուրս եկավ տնից: Նա հաստատ համոզված էր, որ Անայիսն էր այդ զանգերի հեղինակը: Մեքենայի մեջ, առանց ժամանակ կորցնելու՝ զանգեց նրան: Մուշեղը ո՛չ կոպտեց նրան, ո՛չ էլ ավելորդ բառեր ասաց: Ընդհակառակը, շատ սիրալիր խոսեց միայն այն պատճառով, որ ժամադրության կանչի: Անայիսը համաձայնվեց: Նա նույնիսկ ենթադրեց, որ ի վերջո Մուշեղը չի կարող ապրել առանց իրեն: Պայմանավորվեցին հանդիպել իրենց տան մոտակայքում գտնվող այգու մուտքի մոտ: Մինչև տեղ հասնելը, Անայիսը, բնականաբար, մտածեց, թե նա ինչ շտապ գործ ուներ իր հետ: Զե՞ որ հեռախոսով իր սիրած տղամարդն ակնարկել էր կարևոր ու անհետաձգելի հարցի մասին: Մի՞թե կրկին իր օգնության կարիքն ուներ: Եվ նա դեռ երկար կշարունակեր խորհել, եթե Մուշեղը մեքենայով չմոտենար: Տեղավորվելով մեքենայի մեջ՝ Անայիսը միանգամից զգաց ծանր ալկոհոլի հոտը: Բայց նա ոչինչ չասաց՝ իզուր կրթեր չբորբոքելու նպատակով:

-Ինչպե՞ս ես, գործերդ լա՞վ են,- հարցրեց նա Անայիսին:

-Զեմ դժգոհում, իմ կյանքում դեռ ամեն ինչ առջևում է:

-Պայծառատեսությունդ քեզ շատ կօգնի, չեմ կասկածում,- քմծիծաղեց Մուշեղը:

-Ի՞նչ ես ուզում ակնարկել, չլինի՞...

-Ոչինչ էլ չեմ ակնարկում, մի՛ վախեցիր,- իսկույն ևեթ նրան ընդհատեց Մուշեղը:

-Սիրած կինդ ինչպե՞ս է իրեն զգում: Գո՞հ ես նրանից,- կնոջ ձայնի մեջ ընդգծված խանդ կար:

-Կին է էլի... Կնոջ լավը ո՞րն է, այդպես էլ չհասկացա,- կրկին հեգ-նանքով հարցրեց Մուշեղը:

Անայիսը ոչ մի խոսք չասաց:

-Չը՛, դուրդ չեկա՞ն խոսքերս:

-Այժմ ինձ համար եական նշանակություն չունեն քո բառերը:

-Ափսո՛ս, իսկ ես մտածում եմ, թե առաջվա պես սիրում ես ինձ:

-Այդքան ինքնահավան մի՛ եղիր,- մռայլվեց Անայիսը:- Գուցե կասե՞ս, թե ինչ կարևոր հարցի շուրջն ես ուզում ինձ հետ խոսել:

-Մի՛ շտապիր, ամեն ինչ հերթով կլինի: Դու գրքիդ մասին պատմիր, քեզ հաջողվե՞ց համապատասխան նյութեր հավաքել զոհված ազատամարտիկների մասին, թե՞...

-Ամեն ինչ կիսատ է: Ամելիքներ շատ ունեմ, չեմ հասցնում

-Վստա՞հ ես, որ ճիշտ ես խոսում:

-Միանգամայն: Յուրաքանչյուրն անում է այն, ինչ իր սիրտն է ուզում:

-Չամաձայն եմ, բայց այնպիսի բաներ չանի, որ դիմացի՞նի նյարդերը շարքից հանի:

-Այսինքն՝ պարզ խոսիր: Ի՞նչ ես ցանկանում ասել:

-Եթե ինքդ չես կռահում, շատ եմ ցավում:

Անշուշտ, Անայիսը կռահեց, որ նա ակնարկում էր իր համր հեռախոսազանգերի մասին, սակայն ձեն չհանեց: Էլ ո՞ր աննորմալը կարող էր իր պես սիրել ու կարոտով տենչալ ունկնդրելու սիրածի ձայնն ու շնչառությունը: Չիմա ինչպիսի կոպիտ խոսքեր հնչեցներ իր հասցեին, տեղին էր իր պես անզուսպ կնոջը: Մտքերի մեջ խորասուզված, նա չնկատեց, թե ինչպես մեքենան հանկարծակի կանգնեց մթության մեջ:

-Դուրս արի՛ մեքենայից,- չոր ու կոպիտ տոնով հրամայեց Մուշեղը:

Անայիսը լուռումուռն էնթարկվեց նրա հրամանին: Սակայն ավելի վախեցավ, երբ տեսավ, որ գտնվում են Երևանից դուրս ընկած Շա-

հումյանի գերեզմանոցում: Վախից միանգամից կնոջ սիրտն սկսեց արագ բաբախել: Նա իրեն մեղադրեց միայն նրա համար, որ համաձայնվել էր հանդիպել Մուշեղի հետ: Հիմա արդեն չափազանց ուշ էր: Ինքը ստիպված պիտի ենթարկվեր նրա հրամաններին, այլապես անկանխատեսելի կլինեն հարբած ազատամարտիկի քայլերը:

-Զրուցելու ուրիշ վայր չկա՞ր, որ այստեղ ես ինձ բերել,- հազիվ շշմջաց Անայիսը:

-Սա թերևս ամենահարմար վայրն է, որտեղ կարող ես քեզ ճիշտ պահել:

-Իսկ ես ի՞նչ եմ արել, որ դու այդպես զայրացել ես:

-Դեռ անմեղ տեսքով հանդգնում ես հարցնե՞լ: Մոտեցի՛ր ինձ, կիմանաս:

Անայիսը վախից լեղաճաք դարձած մոտեցավ նրան: Այնպիսի սարսուռ անցավ մարմնով, ասես մահն իր ճիրաններով մի քանի վայրկյան անց կխեղդի իրեն: Մուշեղը կոպտորեն բռնեց նրա երկար մազերից՝ քարշ տալով մոտակա սև գերեզմանաքարին: Այնուհետև գրպանից հանելով ատրճանակը՝ մոտեցրեց Անայիսի գլխին:

-Մի՛ սպանիր ինձ, խնդրում եմ: Կկատարեմ խնդրանքդ, միայն թե բաց թողնես ինձ:

-Նախ խոստացիր, որ ինձ այլևս չես անհամգստացնի քո զանգերով,- Մուշեղն ատրճանակի կոթով ուժեղ խփեց Անայիսի գլխին:

-Զեմ անի, բա՛ց թող ինձ: Աղջիկս որբ կմեծանա:

-Ժամանակին պիտի մտածեիր, թե՞ որոշել էիր ինձ մատիդ վրա փաթաթել: Դու հասկանում ես, թե ո՞վ եմ ես: Հիմա քեզ կմորթեմ, եթե կասկածում ես, որ քեզ նվիրած իմ ոսկե շղթան ինձ մոտ է գտնվում և դու հորիմել ես այդ պատմությունը: Պատասխանիր, թե չէ կերակեմ, այստեղ էլ՝ օտար գերեզմանում քեզ կթաղեմ և ոչ ոք չի իմանա տեղդ,- Մուշեղը բաց չթողնելով Անայիսի մազերից, մի անգամ էլ հարվածեց, նրա գլուխը կպցնելով գերեզմանաքարին:

Անայիսը նրա կողքին ատրճանակի հարվածներ շատ էր ստացել, բայց գերեզմանոցում նման տեսարան սարքելուն դժվար թե մտքովն անցած լիներ: Նա ինքն իրեն մտքում անիծեց իր կանացի թուլության

համար: Հազիվ էր նրանից ազատվել: Փոխանակ աղոթելու, իր հանգիստ գլուխը դրել էր ատրճանակի տակ:

-Ոսկե շղթան ինձ մոտ է: Ես սխալվել եմ: Ների՛ր ինձ, խնդրում եմ,- այս անգամ վախից հեկեկաց Անայիսը, թեև իրականում այդ չարաբաստիկ շղթան հանկարծակի կորել էր տնից և այդ մասին ինքը նրան հարցրել էր հիվանդանոցում պառկած ժամանակ:

Ատրճանակը հեռացնելով կնոջից, Մուշեղը մի ծխախոտ հանեց ծխելու: Այնինչ վախից թուլացել էին Անայիսի ոտքերը և նա սսկվել, մնացել էր գերեզմանաքարին ընկած:

-Գերեզմանը գրկած երկա՞ր պիտի մնաս,- անզթորեմ հարցրեց Մուշեղը՝ արհամարհանքով նայելով իր զոհին:

Անայիսը մի կերպ բարձրացավ տեղից և ոտքերը քարշ տալով ուղղվեց տեղում:

-Նստի՛ր մեքենայի մեջ և կյանքում չմոռանաս, որ իմ դեմ խաղ չկա: Ցանկացած մարդու կոչնչացնեմ որպես թուրքի, եթե նա փորձի իմ պատվի հետ խաղալ: Հիշի՛ր և երբեք չթփրտաս: Եթե անգամ որևէ մեկին պատմես, նա էլ քեզ հետ կմահանա:

Անայիսը հասկացավ, որ բուրրովին ապարդյուն են անցել Մուշեղի բուժումները: Իրականում նա անբուժելի հիվանդ էր, նույն գիժմ ու սադիստը, առավել ևս, երբ բավականաչափ ալկոհոլ էր օգտագործում: Երբ Մուշեղը նրան հասցրեց իրենց բնակելի շենքի անկյունը, նրան թվաց, թե Աստված իրեն նորից կյանք պարգևեց: Մթության մեջ խաչակնքվելով՝ նա գլխիկոր ու հուսահատ սպասեց վերելակին:

Կեսօրին Տիգրանուհին իր նկարների վաճառքի գործով պայմանավորվել էր ծանոթներից մեկի հետ, երբ հնչեց հեռախոսազանգը: Լսելով Սիփանի ձայնը, ասես միանգամից շնչառությունը նվաղեց ու ինչ-որ շատ տաք էլեկտրական հոսանք անցավ մարմնով: Նա արդեն ժամանել էր Երևան և ցանկանում էր իրեն տեսնել: Տիգրանուհին, որ սիրած տղամարդուն չէր կարող փոխել աշխարհի ոչ մի հրաշքի ու հարստության հետ, սրտի ցավով համաձայնվեց հանդիպել նրան

տանը: Նա իսկույն հետաձգեց իր տեսակցությունը նկարների վաճառքով զբաղվող ժանրի հետ ու սրտատրոփ սպասեց Սիփանին: Ներքուստ զգում էր սակայն, որ կայանալիք զրույցը լի էր վտանգով ու հոգեկան հասկանալի տվյալանքներով: Անցած անգամ իր թանկագին արվեստագետը ազնվորեն խոստովանել էր դավաճանության մասին: Հետաքրքիր էր, ինչպե՞ս պիտի արդարանար հիմա, երբ իրականում նորից էր իրեն դավաճանել: Տիգրանուհին մտքում կազմում էր իրենց հանդիպման սցենարը, հետևաբար, նաև հարցերի ու պատասխանների դասավորվածությունը: Նա իրեն պատկերացնում էր շախմատի սեղանին շարված քարերից թագուհուն, որին անգործն փոխում են նավակի, անգամ զինվորի հետ: Այս դեպքում պարտվողը խաղի անմիտ խաղացողն է: Իսկ գուցե ինքն իրեն էր բարձր գնահատում: Չէ՞ որ իրականում տղամարդու համար թագուհի է նա, ում համար պայքարում են ու դողում կորցնելու վտանգից: Ուրեմն՝ եթե իր համար չեն տազնապում, ինքը թագուհի լինել չի կարող: Ինչ-որ ներքին ձայն Տիգրանուհուն հուշում էր, որ նա համարյա գիտեր բոլոր հարցերի պատասխանները և իզուր էր իրեն ավելորդ հարցադրումներով տանջում: Բայց միևնույն է, բոլոր գաղտնագրերը Սիփանի ձեռքերում էին: Նայած այդ ամենը նա ինչպես կմտադրեր և ի՞նչ դոզայով իրեն ցավ կներարկեր: Տիգրանուհին անհանգիստ քայլեց սենյակում: Առաջ նա ճգնում էր մինչև Սիփանի գալը արագ որևէ ուտելիք պատրաստել, այնինչ հիմա նրա ձեռքերը թուլացել էին, և նա միայն վայրկյաններ էր հաշվում, թե ինչքան հնարավոր էր շուտ սկսվեր ու ավարտվեր իրենց միջև կայանալիք խոսակցությունը: Բարեբախտաբար, Սիփանն իրեն սպասեցնել չտվեց: Նկարչուհին քաղաքավարությամբ արվեստագետին հրավիրեց սենյակ ու նստեց իր սիրած բազկաթոռին: Սիփանը նրա սառը վերաբերմունքը տեսնելով՝ ոչ մի ավելորդ շարժում չարեց:

-Բարով ես եկել, լա՞վ հանգստացար,- հարցրեց Տիգրանուհին, որի խոսքերում նկատելի հեզմանք կար:

Սիփանը զայրույթից միանգամից գունատվեց: Նկարչուհին հարցնում էր ոչ թե գործերից, այլ հանգստից: Նա հասկացավ, որ Օլեգն ամեն ինչ հասցրել էր տեղեկացնել:

-Այո՛, ամեն ինչ կարգին է... Բայց ես ժամանակից մի շաբաթ շուտ վերադարձա Երևան, թեկուզ մորաքույրս խնդրում էր մնալ:

-Մորաքույրդ նույնպե՞ս քեզ հետ էր:

-Նա ինձ հետ չէր, սակայն գործով Երևանից Սանկտ Պետերբուրգ էր ժամանել և խնդրեց միասին վերադառնալ:

-Ինչու՞ նրա ցանկությունը չկատարեցիր: Ինչքան գիտեմ, դու բուլորին ընդառաջում ես ցանկացած հարցում,- Տիգրանուհին իրեն չէր զսպում ավելորդ հեզմանքը ցուցադրելուց:

-Միայն քո պատճառով... Շա՛տ էի կարոտել, չէի դիմանում,- պատասխանեց Սիփանը ու նկատելիորեն մռայլվեց:

- Դու ինձ չես սիրում, որտեղի՞ց հանկարծ այդքան կարոտ կուտակվեց քո մեջ:

-Ես համաձայնվել էի թատրոնի տնօրենի առաջադրանքով գործուղման մեկնել, որ մի քիչ գումար վաստակեմ,- փորձեց արդարանալ Սիփանը:

-Ուրիշ սուտ չգտա՞ր ասելու: Կարծում եմ, դու մեկնել էիր թատրոնների հետ պայմանագրեր կնքելու, այլ ոչ թե կնոջ հետ զարման հանգիստը վայելելու: Մնայիր, որ սպիտակ գիշերներն էլ միասին դիմավորեիք:

Սիփանը գրպանից հանեց ծխախոտը և վառեց: Նա մտածեց, որ դժվար կլինի այս անգամ Տիգրանուհուն համոզել ինչ-որ բան, քանի որ վերջինս մարտականոթեն էր տրամադրված:

-Եվ զարմանում եմ, թե տղամարդն ինչպե՞ս կարող է իր կնոջ ու երեխայի կողքին երազել ուրիշ կնոջ մասին,- Տիգրանուհու սիրտը կտոր-կտոր էր լինում վիրավորանքից ու ցավից ու նրան թվում էր, թե ուր որ է կընկնի՝ երբեք չբարձրանալու համար:

-Եթե քեզ կարոտել եմ, ուրեմն՝ հնարավոր է,- հանգիստ պատասխանեց Սիփանը:

-Ոչ մեկին էլ չես սիրում: Կամ գուցե բուլո՞ր կանանց ես սիրում: Չիչու՞մ ես, որ մի քանի ամիս առաջ խոստացար, որ այլևս ինձ չես դավաճանի,- Տիգրանուհին ճիգեր գործադրեց հանգիստ իր հարցերը պարզելու:

-Այո՛, խոստացել էի, բայց չստացվեց:

-Ի սկզբանե գիտեիր, որ մեկնում ես ու անպայման պիտի կնոջդ մոտ ապրես:

-Ուզում էի երեխայիս կողքին լինել,- արդարացավ Սիփանը:

-Մի՛ խաբիր: Երեխան ընդամենը պատրվակ է արդարանալու համար: Դու հնարավորություն ունեիր տեսնել նրան, բայց գիշերել բարեկամիդ մոտ: Չուզեցիր: Եթե այդքան շատ էիր կնոջդ սիրում, չբաժանվեիր: Կամ եթե հավատարիմ ես նրան, ինչու՞ ես դավաճանում: Թող նա լինի քո կյանքում միակն ու անփոխարինելի: Եվ ես կխոնարհվեի քո սիրո առաջ: Սակայն պարզվում է, որ դու աշխարհում ոչ մեկին հավատարիմ չես կարող,- Տիգրանուհին բարձրացավ տեղից և բարից վիսկի հանեց: Ջգաց, որ նյարդերը չեն դիմանում հուզմունքից: Անշուշտ, նա երկու բաժակ հանեց և լիմոն կտրտեց: Սիփանը նույնպես մի քիչ խմեց: Նա շփոթված էր, որովհետև նկարչուհու հարցադրումները ճիշտ էին:

-Ի՞նչ ես առաջարկում,- այս անգամ հարցրեց Սիփանը:

-Մտածում եմ, որ դու ամբողջ կյանքում ինձ պիտի դավաճանես:

-Բայց քեզ համար ծանր կլինի ինձնից բաժանվելը,- Սիփանը հարմար խոսքեր չէր գտնում նրան ետ պահելու:

Նա վաղուց զգացել է, թե ինչպիսի կրքոտությամբ ու խելահեղությամբ էր Տիգրանուհին իրեն սիրում: Ո՛չ, ինքն այդպես չէր սիրում:

-Դու ինձ պետք չես: Դեռացի՛ր իմ կյանքից: Ինչքան քեզնից շուտ հեռանամ, այնքան շուտ կազատվեմ հուշերից:

-Ինչպես ուզում ես: Ես կհեռանամ, միայն թե դու քեզ երջանիկ զգաս: Մի՛ մոռացիր, որ քեզ համար վատ ընկեր չեմ եղել:

-Չեմ ժխտում, բայց քո վարքագծով երկրագունդը շրջեցիր իմ գլխին: Ես դրան արժանի չեի,- Տիգրանուհու աչքերը լցվեցին արցունքներով: Որքան էլ նա փորձեց ուժեղ գտնվել, չստացվեց: Դասկացավ, որ զգացմունքները վեր են մարդկային բանականությունից: Նա դեմքն ուղղեց պատուհանից դուրս՝ Սիփանից թաքցնելու իր հոգու անանցանելի փոթորիկը, որ սպառնում էր խեղդամահ անել իրեն:

Սիփանը բարձրացավ տեղից: Նոր էր հանգցրել ձեռքի ծխախոտը, երբ նորից մեկ ուրիշը վառեց:

-Հիմա ես հեռանա՞մ,- հարցրեց նա այն թույլ հույսով, որ գուցե Տիգրանուհին իրեն ետ կպահի:

-Հիմա՛ և ընդմիջտ,- նկարչուհին անգամ չչրջվեց նրան մի վերջին անգամ հրաժեշտ տալու համար:

Սիփանը ոտքերը քարշ տալով հեռացավ: Տիգրանուհին միայն այդ ժամանակ գնաց դեպի միջանցքի կողմը և բանալիով պինդ փակեց դուռը: Ումի՞ց էր այդ պահին այդպես զգուշորեն պատսպարվում, դժվար էր կռահել: Հետո նա երեսնիվայր փռվեց բազմոցին՝ ազատություն տալով իր արցունքներին: Հաջորդ օրերին էլ նա իրեն այնպես ջարդված ու լքված էր զգում, որ անկարող էր դուրս գալ փողոց: Միանգամից այնքան ավելորդ համարեց իր գոյությունն աշխարհում: Նա չէր ուզում նկարել, չէր ուզում որևէ մեկի հետ շփվել, չէր ուզում հեռուստացույց նայել: Ամեն օր քնաբեր էր խնում, որպեսզի քներ, նյարդերը հանգստացներ: Սակայն հաջորդ օրն իրեն բուրբոսովին բթացած էր զգում: Թվում էր, թե ընդմիջտ մահացել էր իր էության մի մասը ու նա ուղիներ էր փնտրում այդ վիճակից ձերբազատվելու համար: Մի օր երեկոյան ժամին որոշեց մեկնել էջմիածին՝ աղոթելու սբ. Հռիփսիմեի վանքում, որտեղ կնքվել էր: Ցավոք, վանքի դարպասներն արդեն փակ էին: Նա բռունցքներով հարվածեց կողպեքին՝ աղմուկ բարձրացնելով: Հանկարծ երկինքը որոտաց, կայծակն ուժեղ փայլատակեց ու հորդառատ անձրև տեղաց: Հայտնվեց վանքի տարածքը հսկող պահակը:

-Ինչու՞ փակ է վանքը: Ես ցանկանում եմ աղոթել: Նե՛րս թողեք ինձ:

-Զե՛ն կարող: Աղոթի ժամն ավարտված է:

-Ճաղերի ետևու՞մ մոմերս վառեմ:

-Ո՛չ: Գնացե՛ք տուն, կգաք վաղը:

-Աղաչու՞մ եմ: Գթացե՛ք ինձ: Ես պետք է աղոթեմ այն վանքի ներսում, որտեղ կնքվել եմ: Հուսով եմ, Աստված կօգնի ինձ մի քիչ խաղաղվելու:

-Աստված օգնում է բուրբոսին, եթե դիմում ես նրան ի սրտե,- տարիքով տղամարդն ափսոսանքով կրկին օրորեց գլուխը:

-Ուրեմն՞ բաց արե՛ք դարպասը: Չե՞ք տեսնում, թե ինչ հորդ անձրև է սկսվել: Թե՞ ուզում եք, որ մեռնեմ վանքի դարպասների տակ:

Իրականում Տիգրանուհին լրիվությամբ թրջվել էր, սակայն ամուր բռած էր մնացել երկաթե ճաղերից:

-Վանքում ոչ մի վանական չկա: Բոլորը գնացել են տուն:

-Բայց ես նրանց մոտ չեմ եկել: Ուզում եմ միայնակ Աստժո տաճարում գտնվել: Աստված իմ ձայնը կլսի: Մի՞թե հայերեն չեմ խոսում:

Այս անգամ պահակը լուռ շրջվեց ու հեռացավ: Տիգրանուհին գլխիկոր ու հիասթափված հեռացավ դարպասներից: Մթության մեջ նա քայլեց, այնուհետև ստիպված եղավ մտնել որևէ սրճարան, մինչև անձրևը կդադարեր: Չմրսելու ու չհիվանդանալու նպատակով նա տաք սուրճ ու սառույցով վիսկի խնդրեց: Մատուցողը մի բարեհամբույր աղջիկ էր, որը մաքուր ու չոր սրբիչ բերեց Տիգրանուհու համար: Նրա մազերից ջուրն այնպես էր կաթկթում, սեսս սրճարանում նույնպես շարունակվում էր անձրևը: Նա դուրս եկավ սրճարանից, երբ արձրևը դադարեց: Երբ հայտնվեց փողոցում, մթության մեջ կանգառը չէր երևում: Անծանոթ միջավայրում ստիպված կանգ առավ սրճարանի մոտակայքում՝ սպասելու դեպի Երևան ուղևորվող ավտոբուսին: Իսկ ավտոբուսը ուշանում էր: Ձեռքը տանելով դեպի պայուսակը, հանեց դրամապանակը՝ հաշվելու դրամները: Նա մտածեց, որ իրեն կարող էր շռայլություն թույլ տալ՝ տաքսի վարծելու: Հուրախություն Տիգրանուհու՝ տաքսին ավելի շուտ ճարվեց: Երբ հասավ տուն, շենքի մուտքի մոտ իրեն էր սպասում մայրը՝ տիկին Մարոն: Պարզվեց, նա մի քանի ժամ կանգնած էր այնտեղ:

-Մայրիկ ջան, չէի՞ր կարող զանգել ինձ ու հայտնել քո ժամանման մասին,- ներդարտեց Տիգրանուհին:

-Ու՞ր էիր գնացել այս ուշ ժամին: Ո՞վ կմտածեր, որ դու տանը չես լինի:

-Էջմիածին էի մեկնել: Ուզում էի մտնել այն եկեղեցին, որտեղ կնքվել եմ և ապարդյուն: Վանքը փակ էր,- թևահատ հնչեց դստեր ձայնը:

-Դու առո՞ղջ չես, աղջիկս,- անհանգիստ հարցրեց մայրը:

-Ինչի՞ց այդպես ենթադրեցիր, մայրիկ,- Տիգրանուհին բանալիով բացեց դուռը և երկուսով ներս մտան սենյակ:

-Այս ամենը շատ տարօրինակ է թվում ինձ համար: Դու հավանաբար շատ հուսահատված ես, որ այս ուշ ժամին հասել ես հատկապես Էջմիածին:

-Մայրիկ ջան, նախ կճաշենք, հետո կգրուցենք, մանավանդ որ ինձ երկա՛ր ես սպասել,- հանդարտ տոնով խոսեց Տիգրանուհին՝ գնալով խոհանոցի կողմը:

-Ես քաղցած չեմ: Միայն հաճույքով թեյ կխմեմ: Ինչ լավ է, որ էլեկտրական լույս ունես:

- Զիմա մի քիչ կարգավորվել է լույսի գրաֆիկը: Զաշվիչներն էլ փոխել են: Կարծես քարացած կյանքից աստիճանաբար ելնում ենք փյունիկի նման:

-Դեռ բավականին ժամանակ կպահանջվի, մինչև հաղթահարենք դժվարությունները:

-Կասե՞ս գոնե քո հանկարծակի ժամանման պատճառը:

-Եղբայրդ էր եկել Ռուսաստանից: Մենք միասին մեկնեցինք օդանավակայան: Նա եկել էր իր երեխաներին տանելու:

-Ինձ էլ տեղեկացնեիք: Թե՞ կարիք չկար նրա զավակներին մի անգամ ևս տեսնելու,- Տիգրանուհին վիրավորանքն ընդգծելով՝ գնաց բաղնիք՝ փոխելու համար թաց շորերը:

Մի քանի վայրկյան անց, երբ վերադարձավ, մայրը մտախոհ թիկնել էր բազկաթոռին:

-Նա շտապում էր: Իզուր մի՛ նեղացիր, աղջիկս:

-Մանվելը չուզեց օգնության ձեռք մեկնել ինձ տան հարցում, այնինչ ինքդ էլ գիտես, որ ի վիճակի էր որոշ գումար հատկացնել:

Տիկին Մարոն այս անգամ լռեց: Առարկել չուզեց, որովհետև նկատել էր, որ որդին իսկապես խուսափում էր քրոջ հետ հանդիպելուց:

-Բայց մենք այս աշխարհում ձեզնից բացի ոչ մեկին չունենք: Դուք պետք է համերաշխ լինեք միմյանց հետ:

-Մայրիկ ջան, սիրելիս, այնպիսի տպավորություն է ինձ մոտ, որ եկել ես խորհուրդներ կարդալու: Ինչո՞վ եմ ես մեղավոր, որ նա խուսանավում է ինձնից: Լավ, հիմա քեզ համար թեյ կլցնեմ: Ինձ համար նույնպես...

Քիչ անց նա բերեց երկու բաժակ թեյ, մոր պատրաստած մոշի մուրաբան և երևանյան գաթա: Մայրը հանկարծ ելավ տեղից, և մոտենալով իր պայուսակին՝ ինչ-որ ծրար հանեց այնտեղից:

-Սա քեզ համար է, Տիգրանուհի: Հորդ հետ որոշեցինք մի քիչ աջակցել քեզ:

Աղջիկը վերցնելով ծրարը, հասկացավ, որ խոսքը գումարի մասին էր:

-Շնորհակալ եմ, մայրի՛կ ջան: Ես պարտքեր քիչ ունեմ:

-Ընդամենը հինգ հարյուր դոլար է այդտեղ: Ավելին չկարողացանք օգնել:

-Հենց այդքանն էլ ինձ հերիք է: Պարտքի մնացած մասը վաղուց մարել եմ,- այս անգամ Տիգրանուհին մոտենալով մորը՝ համբուրեց:

-Այժմ ինձ պատմիր, թե ինչպե՞ս է Սիփանը: Ինչու՞ նրա հետ չմեկնեցիր Էջմիածին:

-Ես նրանից բաժանվել եմ:

-Դու առանց նրան տանջվում ես: Դրա համար ես մեկնել աղոթելու՞, թե՞ սխալվում եմ...

- Իրականում ծանր եմ տանում մեր բաժանումը,- Տիգրանուհին մորը պատմեց, թե ինչու էր հեռացել Սիփանից:

-Ափսո՛ս, նա քեզ համար լավ ընկեր էր:

-Գիտեմ, մայրի՛կ ջան: Բայց նա իմ ճակատագիրը չէր:

-Հետևաբար հաշտվիր այդ մտքի հետ և քեզ ցավ մի՛ պատճառիր:

Մոր հետ ունեցած զրույցից Տիգրանուհին փոքր-ինչ խաղաղվեց: Կարևորը մենակ չէր: Թե չէ գիշեր ու զօր սենյակի պատերը նույնպես ճնշում էին իրեն: Այնուհանդերձ, երեք օր անց առավոտյան մորը տուն ճանապարհելուց հետո կրկին որոշեց մեկնել Էջմիածին: Սբ. Հռիփսիմեի վանքում աղոթելուց զատ ուզում էր առանձին զրույց ունենալ Աստծո սպասավորներից մեկի հետ: Բարեբախտաբար, նա հանդիպեց տարեց մի քահանայի, որին էլ մոտեցավ ապաշխարելու նպատակով:

- Ձեր օրհնությունը, տեր հա՛յր: Ուզում եմ ազատվել ծանր մտքերից: Ես գեղեցիկ կյանք էի երազում, չմտածելով, որ կապվել էի ամուսնացած տղամարդու հետ: Հիմա սաստիկ դատարկություն եմ զգում:

- Լավ է, որ գիտակցում եք ձեր սխալը: Նաև պիտի ընդունեք, որ ձեր սիրային կապն ավարտված է: Մի՛ արհամարհեք և մի՛ փորձեք վիրավորել նրան: Ձեր սիրածի մեջ թշնամի մի՛ փնտրեք: Դուք պետք է իրերն ընդունեք այնպիսին, ինչպիսին որ կան, այլ ոչ թե այնպիսին, ինչպիսին կուզենայիք տեսնել: Ձեզ զուր մոլորության մեջ մի՛ գցեք:

Տիգրանուհին տխուր հետևելով քահանայի խորհուրդներին, ցանկանում էր հոգու խաղաղության համար ինչ-որ տեղ ստուգել իր խոհերն ու կասկածները:

-Ես ձեզ հասկանում եմ: Նրան ո՛չ ատում, ո՛չ էլ որևէ վատ բան եմ կամենում:

-Աստված չի խոստացել, որ մարդն առանց վշտի կապրի: Բայց նա խոստացել է յուրաքանչյուրին ուժ տալ, ամոքել վերքերը, ճանապարհին լույս սփռել: Ձեր սիրտն աստիճանաբար ազատվելով տանջանքից, կմաքրվի և կծաղկի ձեր ինքնագիտակցության շողերից: Դուք շատ աշխատանք պիտի տանեք ձեր հոգու կամքի հզորացման, մեծահոգության հաստատման համար:

-Իմ մեջ ապրում է վախը: Այն հասնում է խելացնորության աստիճանի: Ես ասես դժոխային տառապանքների մեջ եմ հայտնվել:

-Չպետք է ձեր ցանկությունների ստրուկը դառնաք և անվերջանալի մտքերի գերին: Ձեր ուշադրությունը պտտվում է ձեր «ես»-ի շուրջը: Փորձեք ձեր արժանիքները գնահատել ու օգտագործել: Սովորե՛ք գիտակցաբար ղեկավարել ձեր կյանքի էներգիան: Հակառակ դեպքում դուք հոգեպես կհիվանդանաք:

-Բայց ես վախենում եմ, որ կփակվեմ երկաթե դռների ետևում և երբեք չպիտի հավատամ սիրուն, ներկային: Ի՞նչ անեն: Կարծես միանգամից ուժասպառ եմ եղել ու անզոր եմ ուժերս վերականգնել:

-Դուք ուզում եք հաղթողի տեսք ունենալ, միշտ հաջողա՞կ լինել: Մի՞թե մոռացել եք, զավակս, որ հաղթողը նաև պատրաստ պիտի լինի ինչ-որ բան կորցնելու: Նվաճումը, սեփականություն ունենալը դա մշտական վտանգ է: Անտարակույս, սերը հետաքրքիր երևույթ է և ոչ մեկին չի պատկանում: Այն անվերջ փոփոխվում է, բայց հասանելի է բոլորին: Եթե շարունակես ապրել այնպես, ինչպես հիմա, սիրո կրակը ձեզ կվառի, կկործանի: Ո՛չ ձեր գեղեցկությունը, ո՛չ էլ ձեր կիրքը

ձեզ չեն փրկի: Իմացած եղե՛ք, որ կյանքն ավելի բարդ է այն պատկերացումներից, որ մարդ փորձում է ստեղծել իր սովորությունների, երևակայության շնորհիվ: Մի՛ կաչեք այն ամենին, որ պիտի հեռանա: Վախենալով, դուք ձեզ ծրագրավորում եք թուլության համար: Հիշե՛ք, ամեն ինչ Աստօծ ձեռքերում է:

Որքան էլ դառը ճշմարտության խոսքեր հնչեր քահանայի շուրթերից, միևնույն է, Տիգրանուհին հոգու խռովքից խիստ հուզվել էր և հազիվ էր զսպում արտասուքները: Նրան թվում էր, որ առանց Սիփանի ինքը շուտով մոմի պես կհալչի:

-Կյանքն ինձ համար երազ է, ու ես ոչինչ չեմ հասկանում: Անգամ չգիտեմ, թե ինչպե՞ս պիտի ապրեմ առանց սիրո: Կարևորը՝ ի՞նչի համար ապրեմ...

-Շատ մարդիկ կյանքում ապրում են ցնորքներով: Ձեր «ես»-ը բարձր գնահատելով, դժվարանում եք ճիշտ գործողություններ անել: Հսկողության տակ չի կարելի «վերցնել» մարդկանց գործողությունները, վարքը, մտերիմ մարդկանց կամքը: Բոլորովին ուշ չէ, եթե հավատարիմ մնաք ձեր հոգու կանչին: Ստացվում է, որ ոչ մեկին չեք կարող վստահել ձեր անձը: Այնինչ ձեր ապաշխարանքը պահանջում է ընդունել իրականությունը, այնուհետև փոխել ինքներդ ձեր հանդեպ ունեցած վերաբերմունքը:

-Ես եմ մեղավոր: Չպետք է այդպես ուժգին սիրեի մեկին,- խոր ցավով ու ավստասանքով ասաց Տիգրանուհին:

-Մարդը ծնվում է սիրո համար: Այն կանայք, որոնք իրենց զգացմունքները չեն հսկում, եսասեր են դառնում ու շուտ են ենթարկվում հոգեկան ցնցումների: Իհարկե, սերը մարդուն դարձնում է ուժեղ, ճկուն, շարժունակ: Երբ սիրում ես, ինքդ էլ գեղեցկանում ես և ցանկանում ես գեղեցիկ գործեր անել: Սերը ոչ միայն թևավորում է մարդուն, այլև իրենից լույս է արձակում՝ լուսավորելով տարածություններ: Այնինչ երբ մարդը մեռնակ է, ապրում է ցնորքների, վախի մեջ: Նա դառնում է խղճուկ իր իսկ մեղքի հանդեպ: Ձգտե՛ք իմ ասածներից ճիշտ եզրակացությունների հանգել: Ես գիտեմ ու հավատացած եմ, որ դուք բարի, համբերատար և ընդունակ կին եք:

Տարեց քահանան ավելին ասել չէր կարող: Նա հրաժեշտ տվեց Տիգրանուհուն ու հեռացավ: Նկարչուհին դուրս եկավ վանքից՝ իրենց զրույցի մասին լռելյայն մտորելով: Սակայն նա զգում էր, որ համեմատաբար հեշտ է տանել խավարը, ցուրտը, քաղցը, անգամ հարազատի անժամանակ կորուստը, երբ մենակ չես: Այնինչ համատարած լույսի, հարմարավետության, լիության ու ճոխության մեջ մարդ արարածն առանց սիրո շողերի, առանց մտերիմի ջերմ շնչառության կարող է իրեն զգալ կատարյալ խավարի թագավորության ներսում: Եվ հոգեկան հավասարակշռությունը պահելու համար Տիգրանուհին որոշեց ոչ միայն ամեն օր աղոթել Աստծուն իրեն ուժ ու համբերություն տալու համար, այլև հաճախ հիշելու տարեց քահանայի խորհուրդները, հասկանալ, որ պարտավոր էր հաղթահարել կյանքի այդ դաժան փորձությունը: Չէ՞ որ եթե շրջապատի մարդիկ իր անձն ընդունում են այնպիսին, ինչպիսին որ կա, այդ նշանակում է, որ ինքը պետք է աշխարհին...

ԺԱՆՆԱ ՀԱԿՈՒՅԱՆ

ՉՄՊԻԱՑՈՂ ՀՈԳԻՆԵՐԻ ՑԱՎԸ

Վեպ

Հրատարակչության տնօրեն՝ **Վ. Մնացականյան**
Ձևավորումը և համակարգչային շարվածքը՝ **Ժ. Հակոբյանի**
Խմբագիր՝ **Հ. Առուշանյան**
Էջադրող՝ **Հ. Վարդանյան**

հեռ(010)24-16-72

Էլ. փոստ՝ Janet-2006@mail. ru

www. zhannahakobyan. am

Չափսը՝ 60x84, 1/16: Ծավալը՝ 8 տպ. մանուկ: Թուղթը՝ օֆսեթ:

Տպագրվել է «ՎՄՎ-ՊՐԻՆՏ» ՍՊԸ հրատարակչության տպարանում
Հասցեն՝ Ազատության 24/11, հեռ.՝ 28 54 28
E-mail: vmv_print@yahoo.com
www.vmv-print.am